

ԿՌՈՒՆԿ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Դ. ՏԱՐԻ. **1863**. ԹԻՒ Դ.

Ա Պ Ր Ի Ն

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ

ԵՒ

ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Վ Ի Կ Տ Ո Ր Լ Ա Ն Պ Լ Օ Ա Յ Ի

Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՆՃԵԱՆՅԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ոսկի դարուայ Հայաստանի մատենագրա-
կան պատկին գեղեցիկ վարդերից մինն է Մովսէս Խորենացին,
Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի պանծալի աշակերտն
առաջնատակիցը, որ իրա լայնածաւալ հմտութեանը համար

քերթողահօր, քաջ թարգմանչի, Հայ երողոտոսի և առաջին աշխարհագրի անուններովը պատուասիրուեցաւ իրաւամբ և արժանապէս :

Սակայն խորենացու անձնական արժանաւորութիւնների, նրա մտաւոր արգիւնքների, նրա Հայ ազգին և՛ զրականութեանը ցոյց տուած մեծամեծ ծառայութիւնների վրայ տաւ հաւին ոչ որ արժանապէս չէ խօսել, և նրա պատմագրութիւնը, որ ազգային զրականութեան թանգարանին ամենապատուական գանձն է, ներուի մեզ ասել՝ մինչև ցայժմ՝ ոչ մի հայ բանասէրի անաչառ քննութեանը տակ չէ բնկել վասն զի չենք կործում որ քննադատութեան արժողութիւն ու նենան այն ուռուցիի, անխորհուրդ ածականներով ու բարդութիւններով լիքը զրուածները, որոնք որ և իցէ մասենազրի կեանքի և մտաւոր արգիւնքների վրայ նոր լոյս տալու տեղ շատ անգամ՝ նրա արժանաւորութիւնները նսեմացնում ու պակասեցնում են :

Անցեալները ձեռներս ընկաւ մի քննադատական աշխատութիւն, Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան աղբիւրների վրայի. յօդուածի հեղինակն է Պ. Վիկտոր Լանդլաւ, որի անունը արդէն ծանօթ է ընթերցող հասարակութեանը : Հայադէտ Ֆրանսիացին, որի այս մէկ աշխատութիւնը ազգային բանասէրների դատաստանին ներկայացնում ենք, Հայ երողոտոսի կեանքի ու նրա այլ և այլ երկասիրութիւնների վրայ համառօտ կերպով խօսելուց յետոյ, հանդէս է հանում նրա պատմագրութիւնը, և այժմեան արեւելագէտների դիւտերի օժանդակութիւնովը, ցոյց է տալիս Խորենացու ընտրած աղբիւրների պատուականութիւնը, որոնց մէջ առաջին տեղը ունին Յունաց արտաքին և սրբալան զրքերը. յետոյ գալիս են քաղդէական արտաքին ու հեթանոս մասենադիրները, ասորական աղբիւրները, և վերջապէս հայկական աղբիւրները, որոնց մէջ պարունակւում են ազգային երգերն ու աւանդութիւնները :

Այս բոլոր աղբիւրների վրայ, առանձին և բաւական ընդարձակ խօսելով, Պ. Լանդլաւն ցոյց է տալիս թէ Հայաստանի պատմագիրը ի՞նչ մեծ ծառայութիւն է հատուցել Ասիոյ

Ժամանակ իրանց անձնական հաճոյքին յարմար փոփոխու-
 թիւններ արին նրանց մէջ. բայց զարմանալին այն է որ խո-
 բենացու պատմութեան այս առաջի տպագրութեանը մէջ
 բացի մի քանի յատուկ տնուկներից ուրիշ նշանաւոր փոփո-
 խութիւններ չեն երևում: Վենետկեցի Մխիթարեան վար-
 զապետները առաջին անգամ 1752-ին ընծայեցին խո-
 բենացու պատմութիւնը աշխարհագրութեանը հետ միասին.
 1827-ին կրկին տպագրեցին միայն պատմութիւնը մէկ հա-
 տոր փոքրադիր. վերջապէս 1843-ին երրորդ անգամ հրատա-
 րակեցին խորենացու միւս երկասիրութիւնների հետ: Թէպէտ
 այս երեք տպագրութիւնները միմեանցից տարբեր և վերջինը
 առաջիններից մաքուր և ուղիղ է, բայց և այնպէս սխալնե-
 րից և մթութիւններից զերծ չէ: Անցան շատ տարիներ և
 արդէն Հայ բանասէրների յոյսը գրեթէ բոլորովին կտրուել էր
 խորենացու պատմութեան առաջիններից ընտիր օրինակներ
 գտնել, երբ յանկարծ հայկական գրականութեան ասպարի-
 զումը այսպիսի վերնագրով գիրք մի երևեցաւ: «Բաղդատու-
 թիւն Պատմութեան Մովսիսի խորենացու տպագրելոյն ի վե-
 նետիկ (ի 1843 ամի) ընդ երկուց ձեռագրաց. երկասիրութիւն
 Յակովբայ վարժապետի կարինեանց. 1858 ի Տփլիս» : Պ. Կա-
 րինեանցի ձեռագիրները այնքան ծանօթ ու նրանց պատ-
 ուականութիւնը վենետիկի հրատարակութիւններին հետ հա-
 մեմատելով, այնքան պարզ երևում է, որ մենք աւելորդ ենք
 համարում նրանց վրայ երկար բարակ խօսել: Բաւ է մեզ ա-
 սել, որ եթէ խորենացու պատմութեան թարգմանիչները աչքի
 առջև ունենային այս ձեռագիրները, մանաւանդ Բ-ը որ անհա-
 մեմատ գերազանց է առաջինից և Ներսէս Լամբրոնացու օրինա-
 կից օրինակուած՝ Հայոց հազար հարիւր քսան թուին (ՌՃԻ),
 խորենացու թարգմանիչների տաժանախան աշխատութիւնը
 շատ կը թեթեւանար, որոնք՝ ինչպէս ինքը Պ. Կարինեանցը ա-
 սում է, «անճարացեալ զանազան ծանօթութեամբք և բա-
 ցատրութեամբք գիրքը լքցնում են երբեմն մատենագրի մը-
 տաց համաձայն և երբեմն շատ հեռի»: Փափաքելի է միայն
 որ Պ. Կարինեանցը Հայաստանի պատմագրին ամբողջ գիրքը

պիսի վերնագրով: «Исторія Арменій Мойсея Хоренскаго, перевелъ съ армянскаго и объяснилъ П. Эммонъ» :

Արդարութիւնը կը պահանջէ ասել որ Պարոն Էմմըն իր նախորդներէից շատ աւելի յաջողեցաւ իրա թարգմանութեանը մէջ, բայց որովհետեւ վեներաբլի վերջի տպագրութիւնը առաջնորդ առաւ իրան, որ ինչպէս յայտնի է տեղ տեղ մութ ու անհասկանալի էլ է, թարգմանիչը հարկադրուեցաւ երկայն բարակ ծանօթութիւններով ու բացատրութիւններով ծանրաբեռնել իրա աշխատութիւնը : Հատորին սկիզբը յառաջաբանութեան մէջ Խորենացու համառօտ կենսագրութիւնն է անուամբ նրա պատմութեան աղբիւրները աչքի աւնցնում: մէկ խօսքով Պ. Էմմենի երկաւիրութիւնը կարող է Հայ պատմագիրին անձնական ու մտաւոր արժանաւորութիւնների ճաշակը տալ և Հայոց Պատմութիւնը դիւրահասկանալի անել օտարագգի ընթերցողներին : Ափսոս միայն որ Պ. Կարինեանցը աճապարած չէ իր «Բաղդութիւնը» շուտով հրատարակել, որից տարակոյս չկայ թէ Խորենացու Հայ թարգմանիչը մեծ օգուտ կարող էր քաղել :

Մեր խօսքին վերջ տալուց ու Պ. Լանգլօայի աշխատութիւնը ընթերցող հասարակութեանը հաղորդելուց առաջ, աւելորդ չենք համարում ասել թէ մենք հայագէտ գիտնականին հետ միշտ ու ամէն բանի մէջ չենք միաբանում: Ա՛յ, մեր գիտաւորութիւնն է արեւելագէտ Ներոպայիների և մասնաւորապէս Պ. Լանգլօայի կարծիքները Հայ բանասէրների դատաստանին ներկայացնել և այսպէսով առիթ տալ նրանց Հայ յայաստանի պատմագիրին թերթերը նորից քրքրել, ուշի ուշով քննել ու կշռել նրա ամէն մէկ խօսքը, և իրաւացի փաստերով Ներոպացոց անտեղի կարծիքները հերքել :

Ս. Պալասանեան.

ԱՅՆ միջոցին երբ Մովսէս Խորենացին իր լուսաւոր մշտքերովը հայկական գրականութեան յառաջադիմութեանը այնպիսի հզօր կարողութիւնով նպաստում էր, Հայաստանի գրագէտների մէջ մեծ շարժողութիւն սկսաւ երեւի Ասորոց լեզուի մշակութեանը դէմ և նրա հակառակ Յունաց ար-

յոյց տուինք նոյնպէս ի այն լեզուն խօսող ժողովուրդը զըրեւու համար օտար բարբառներ էր գործ դնում երբեմն Արամեան ² երբեմն էլ Արեայ ³ լեզուները, ինչպէս քաղցէա-

որոնց մէջ բազմաթիւ արժաթի դրամներ կային մէկ երեսին ատուշան (կրակատուն) ձեւացուած, իսկ մյուսին թագաւորի կերպարոնք, զլուխը ասիական սաղաւարտ՝ եւ չորս կողմի հին հայկական նշանադիրներ փորագրած, Մեսրոպեան տառերի նոյն եւ նման։ Հօ. Ինճիճեանը վկայում է թէ ինքը անձամբ տեսել է այդ դրամները, բայց նրանց վրայ դրոշմուած անունները չէ կարողացել կարգալ, վասն զի լոկ բաղաձայն տառերից բաղկանում էին, որ հին հայկական նշանադիրների զլխաւոր պատկանութիւնն էր։ Այս նշանադիրների գործածուելուն վկայութիւնը տալիս է մեզ եւ վարդան Բարձրբերդցին երեքտասաներորդ դարումը, որի բուն խօսքերը մէջ բերենք. «Եւ զի լեւա է հայերէն գիր հնոցն վրկայեցաւ ի ժամանակս Լեւոնի արքայի» զի գտաւ դրամ ի Կլիկիա հայերէն զըրով դրոշմեալ գանուն կապաշտ թագաւորացն հայկազանց, զորոյ զթերութիւնն ելից նորս մեր Եղրատ»։

Արդ եթէ հեթանոսութեան նախնի դարերումը հայկական լեզուն իրա սեպհական նշանադիրները ունէր, որ թէեւ ձայնաւորներից եւ մի քանի բաղաձայներից բոլոր բայց եւ այնպէս գործածութեան մէջ էին, ինչ յանգցութիւն կը լինի կարծել թէ նոյն նշանադիրները գործածուեցան նաեւ զրքերումը, որ թերեւս հնութեան եւ անինայ ժամանակին կերակուր են էլել։ Սակայն թէ ազգային պատմութիւնը բաւական նիւթ չէ տալիս մեզ մեր առաջ բերածը ապացուցանելու եւ համարձակ տեսլու թէ քրիստոնէութեան դարերից շատ առաջ ունինք զբարբուր մատենագրութիւն, զոնէ այսչափը կարող ենք ասել թէ Հայաստանի հեթանոսութեան նախնի դարերումը արդէն Հայկայ եւ Արամայ երկիրը բանաւոր դրականութիւն կար։ Երգն է մարդկային ազգի հանճարին առաջի կայծր, երգերի մէջ երեւում է եւ Հայոց հանճարին երկխայրիքը։ Այս երգերը, որոնց հատուկօրոյ մնացորդները աւանդել է մեզ Հայ պատմագրութեան հայրը, ամենից աւելի արժանի են ասուելու տարեւք բուն ազգային գրականութեան, վասն զի, ինչպէս որ վերևումը ասացինք, նրանց մէջ երեւում է, ոչ թէ մի փոքրագոյն ընտրեալ մասի, այլ բովանդակ ազգի վիճակը, նրա մտաւոր յառաջադիմութեան աստիճանը, նրա հաւատոյ պատկերը, նրա լեզուն, վարքն ու բարքը եւ սովորութիւնները, մէկ խօսքով նրա մտաւորական եւ հոգեկան կեանքի ճիշդ նկարագիրը։ Մեր ազգային վիպասանական երգերից Խորենացու մէջ բերած ամենահին հատուածը Վահագնի ծննդեան վրայ է, որ քրիստոնէական թուականից զրեթէ հինգ դար առաջ երգեցին մեր Գողթան գաւառի երգիչները յայտնի բան է այն լեզուով, որով խօսում էր նոյն ժամանակի ժողովուրդը։ Հայ քանաւորի դատաստանին թողում ենք որոշել թէ այս եւ ուրիշ հատուկօրոյ երգերի լեզուն ռամկական ու գոեհիկ է, ինչպէս որ Պօլանդցայի խօսքերից հետեւում է, թէ ժողովրդական ու ազգային, ինչպէս որ մենք կարծում ենք։

Ծանօթութիւն Թարգմանչին։

2 Արմէն ասելով պէտք է իմանանք հին Ասորիները, որոնց նախահայրը կը համարուի Սեմայ որդին Արամ։ Այս բանի ուշադրութիւն չդարձնելով՝ հինեւրդից ոմանք մեր ազգը Ասորոց հետ շփոթեցին եւ հայերէնը ասորերէնից առաջ եկած կարծեցին։ Այսպէս Ստրաբոն աշխարհագիրը ասում է թէ Հայերը, Ասորիները ու Արարացիները իրանց լեզուով, սովորութիւնով ու մարմնի կազմուածքով միմեանց հետ շատ նմանութիւն ունին, եւ այս ասածին իբրեւ ապացոյց

մար այբուբենն չունենալը, նրա իբրև գիտնական լեզու հան-
դէս գալուց ու զարգանալուց առաջ:

Հայոց ազգին քրիստոնէական հաւատը ընդունելուց յե-
տոյ, և հայկական լեզուով գրուած նախնական գրքերը երե-
ան գալուց առաջ, թէ Հայկայ ցեղին երկրումը բնակող օ-
տարականներէ, և թէ բուն իսկ Հայոց ընծայուած երկասի-
բութիւնները, նախ և առաջ, Քաղդէացոյց, Ասորոց և Յունաց
լեզուներովն են յօրինուել: Այն մատենագիրների ծաղկած
ժամանակը, նրանց անունները և այն տեղեկութիւնները որ
կարելի է նրանց գրուածներէից հանել, ցոյց են տալի մէկ կող-
մից, որ նրանք իրանց գրքերը օտար բարբառներովն յօրինել,
որովհետև հայերէնը այն ժամանակ լոկաւմկական լեզու էր
նշանագիրներէից բոլորովն զուրկ, միւս կողմից այս այլ և այլ
տեղեկութիւնները մեզ կարծել կը տան թէ այն մատենագիր-
ները, բաց ի մէկ քանիսից, բնիկ Հայաստանցի չէին, և թէ
նրանց գրուածների մէջ արամեան գպրութեան ազդեցութիւնը
երևում է. այսինքն թէ այն մատենագիրները մասնակից են է-
լել այն զարգացմանը որ գիտնականները իրանց նոր անոր գի-
տերովը հաստատեցին՝ թէ Քաղդէացոյց հին գրականութիւ-
նից առնում է իրա ծագումը:

Ահրոյդբեալ յիշատակարանին մէջ ցոյց տուինք նախ՝ թէ
Մար Աբաս Կատինան իր Հայոց պատմութիւնը, որ Խորենա-
ցու գլխաւոր աշխատութեան միջնորդութիւնովը մինչև մեր
օրերը հասաւ, երկու լեզուով է գրել, յունարէն և ասորերէն,
երկրորդ, Ղերուբնա և Բարդաճան, երկուսն էլ Յդեսիայի զարո-
ցից զուրս եկած, իրանց գրքերը նոյնպէս ասորերէն են շարագրել,
որ այն ժամանակուայ Միջագետաց քրիստոնէականի և Ասորոց
դիւանական լեզուն էր. երրորդ, Ուղիւստ քուրմը և Խորոհբուտ
Սասանեան Շապուհ երկրորդի քարտուղարը, առաջինը ազգով
յոյն, իսկ երկրորդը պարսիկ, իրանց յիշատակարանները յու-
նարէն յօրինեցին: Այս բոլոր մատենագիրները չորրորդ դա-
րուց առաջ ծաղկեցան: Նոյն հանդամանքները կրկնուում են
յաջորդ դարումը: Այս տեղ դարձեալ օտար մատենագիր-
ներ են, որ ըստ մեծի մասին պատմական գրուածներ յօրի-
նեցին, և զխտելու արժանի բանը այն է՝ որ այս գրուածներն

Զորրորդ դարուայ միւս մատենագիրները բնիկ Հայոց տշխարհիցն են. սրանք են Ս. Գրիգոր Լուսաորիչ և Ս. Յակոբ Մճնայ հայրապետ, Ս. Նիրսէս Մեծն և Ս. Սահակ Պարթև, վերջապէս Ս. Մեսրոպ մականուանեալն Մաշտոց, որ հայակահան նշանագիրները գտաւ և ազգային լեզուի մշակուելու սկզբնապատճառն էլաւ իր հայրենակիցների մէջ: Անհնարին երեւում է մեզ ընդունել, և այն նախընթաց յիշատակարանի մէջ տուած պատճառներովը. որոնք այս տեղ համառօտուած են, որ այս մատենագիրների անունով մեր ձեռքը հասած գրուածները նախ հայելէն շարագրուած լինին: Ընդհակառակն ամէն բան հարկադրում է մեզ կարծել, որ այն գրուածները լոկ հաւատոյ նիւթերի վրայ խօսելով նախ առաջ Ասորոց լեզուով յօրինուեցան, մի լեզու որ քրիստոնէական նախնական ժամանակները հաւասարապէս ընտանալի էր Հայոց և Ասորոց: Եւ յիշաւի հաստատ զիտենք որ Հայ

եւ հայկաբան լեզուն բաւական է ցոյց տալու համար որ ոչ թէ թարգմանութիւն, այլ հեղինակութիւն է: Տղայս կան ժառանգ եւ Միսիթարեանց Եւրոպական անարժան: Միթէ չէ կարող մէկը նոյն հարցումը անել պատուելի Միսիթարեանցին որ Ազգային գրականութեան փոքր ինչ առաջ յիշել էինք, այսինքն, թէ սուրբ թարգմանիչք, որ ազգային գրականութեան ծաղկելուն ու զարգանալուն մեծ վոյթ ու խնամք տալով էին, ձեռնամուխ կը լինէին անշուշտ հայերէն թարգմանելու այն մատենագիրների երկատրութիւնները որ այլ եւ այլ պատճառներով տալով լեզուով էին յօրինել իրանց գրուածները: Եւ եթէ պատմութիւնը ոչինչ յիշատակութիւն չէ անում այս մասին, այդ պէտք է նոյն սուրբ թարգմանիչների համեմատութեանը տալ, որոնք հեռու կենալով ամէն տեսակ վառասիրութիւնից իրանց մէկ հատիկ նպատակն էր աշխատել ի վառա Ասորոց եւ յօգուտ Ազգիս: Նախնեաց այս համեմատութիւնը պէտք է ասել, մեծ դժուարութիւնների ու երկմտութեան մէջ է գցում այժմեան բանասէրներին, որոնք շատ անգամ չեն իմանում թէ այս կամ այն գրուածը որ հեղինակի է պատկանում, եւ կամ այս ինչ կամ այն մատենագիրը որ գարումը ծագել է: Ծան. Թարգ.

7 Ազգային պատմութիւնը ուշի ուշով կարդացողը կը տեսնէ որ Ասորոց լեզուն ոչ թէ ընտանի, այլ գրեթէ բոլորովին անծանօթ էր Հայոց չորրորդ եւ հինգերորդ դարերումը, ապա թէ ոչ ինչ հարկ կար ռուրը Մեսրոպի և նրա աշակերտներին սուրբ Գիրքը ձայնով թարգմանել ժողովրդին, որմինչեւ հինգերորդ դարուայ միջոցները Ասորոց լեզուով կարդացւում էր եկեղեցիներում: Այս ցույցի գէպքն է որ յորդորեց Մեսրոպին հայկական այբուբենը հնարել, և Աստուածաշունչ զիրքը հայերէն թարգմանել, վասն զի տեսնում էր որ Ասորոց լեզուի զիտութիւնը միայն հողեւորական դասու նեղ շրջանումը փակուած էր ջրօրոց, տնայում է Փարսիցից, Բաբելոնից և Բաղդադից առաջնի և Բաբելոնից Բաբելոնից Բաբելոնից Բաբելոնից, եւ ուսուցիչքն համեմատ յոգեց եւ հառաչելով զճանապիհ զանազան իւրեանց: Անտեղի է ուրմն Պ. Լանգլայի կարծիքը, որ Ասորոց լեզուն մէր գրականութեանը վրայ ոչինչ ցած ազդի չուէինը նկարագրելու համար, Եւրոպ-

նակէ հետէ կեցել էին արդէն ուրիշ մատենադրութիւններ, որոնք կազմուելու և զարգանալու համար դարեւոր փորձերի պէտք ունեցան :

Ուրիշ տեղ յայտնեցինք այս կարգէ գուրս շարժողութեան պատճառները, որ չորրորդ դարուայ վերջերը սկսաւ երևել. ցոյց տուինք զարձակ թէ հայկական լեզուն. ուսակականը գիտնական բարբառի փոխուելուց յետոյ, իրա զարգացմամբը մեծ շարժողութիւն յառաջացրեց ասորականին մշակութեանը և միանգամայն Նշեալի քրիստոնէական զըլրոցին դէմ, շարժողութիւն՝ որոյ ներդործութեան պտուղն էլլաւ Ասորոց լեզուն ու գրականութիւնը այն աստիճանի անկման մէջ գլորել, որ Միջագետքի գրողէտներ իրար ջանքն ու աշխատութիւնը ի զուր էլաւ, և Սրամեան քրիստոնէական լեզուն այն սոսկալի հարուածից յետոյ ոչ երբէք կարողացաւ վերականգնիլ :

Մեր շջանից բոլորովին դուրս է ընդարձակօրէն խօսել այս նիւթի վրայ, որ այս տեղ հարեանցի միայն յիշատակեցինք. նրա մանրամասն հանգամանքերը համառօտուած են արդի տրեւելագէտ նշանաւոր ուսումնականների զրուածներումը : Բաւական է մեզ ասել, որ այս խնդրի վրայ այնպիսի հանճարեղ ու երևելի քննադատներ խօսել են, որոնց կարծիքը այս տեսակ նիւթերի մէջ ընդունելի ու պատկառելի է. մեր խօսքը Պ. Պ. Վ. Կուրաբնի և Էրնէստ Բընանի վրայ է : Ասիական Օրագրումը մեր հրատարակած յիշատակարանը համառօտ կերպով բովանդակում է այս արեւելագէտ ուսումնականների զրուածներումը էլած կարծիքները, և կարող է ի դէպ ժամու առաջիկայ քննութեանը նախաշաւիղի տեղ բռնել :

Ա.

ՄՈՎՍԵՍ Խորենացին Հայաստանի այն գրողէտների կարգիցն է, որոնց սուրբ թարգմանիչք մականունը տուին, վասն զի սրանք զեղեցիկ ու փառաւոր պարտաւորութիւն էին առել իրանց վրայ Ասորոց և Յունաց գրականութեան հոյակապ աշխատութիւնները ազգային լեզուով թարգմանելու, որ մինչև

նեղով՝ լայնածառալու խորունկ հմուտ թիւն էր ստացել Մովսէս : Հեթանոսական ու արտաքին հնազիտութիւնը, ինչ աչքով որ նայում էին նրա վրայ նոյն ժամանակին, ընտանի էր իրան : Բայ ի սրանից, իր դարուայ գիտնականներից շատ բարձր էր կանգնում նա, այն գերազոյն խնայականութիւնովը, որին բազմաթիւ փորձերը առել էին մեզ նախնի դարերի քրիստոնեայ մատենագիրները և զլիաւ որսաղէս արեւելեան եկեղեցու սուրբ Հարքը : Մի և նոյն ժամանակը աստուածաբան, պատմագիր, աշխարհագիր և ճառասաց լինելով, տեսնում ենք թէ ինչպէս հետզհետէ իր եռանդուն միտքը այլ և այլ նիւթերի վրայ կրթել է Մովսէս, և բոլոր խօսած նիւթերի պահանջմունքին յարմարացրել :

Երբ իրա ընկերակիյների գործակցութիւնովը Աստուածաշնչի թարգմանութիւնը աւարտեց Մովսէս, այնուհետև ուրիշ զանազան գրուածներ հայերէնի փոխելու ձեռնամուխ էլաւ : Խորենացուն ընծայում են Եւսեբիոսի ժամանակագրութեան, ինչպէս նաև Մեծին Աղէքսանդրի վարուց պատմութեան և ուրիշ շատ գրուածների թարգմանութիւնները : Բայց կարելի է ստոյգ կերպով ասել որ Կեսարիայի եպիսկոպոսին ժամանակագրութիւնը Մովսէսի աշխատութեան արդիւնքը լինի, վասն զի իր պատմութեան այն հատուածիցը ուր խօսքը վերոգրեալ գրուածին վրայ է, որոշ բան է իմացում :

Ինչպէս էլ լինի, արտաքին հնազիտութեան գրուածներին ընթերցմունքն է որ Մովսէսի մտքին մէջ Հայոց պատմութիւնը գրելու դիտաւորութիւնը զարթեցրեց, և թէ կա ընդէ այսպիսի կարծիք յայտնել այս մասին, հաւանական է թէ Եւսեբիոսի ժամանակագրութիւնն է մանաւանդ որ նախնի ժամանակների պատմութիւնը գրելու միտքը թեքողրեց նրան, որովհետև երևում է որ Մովսէս շատ բան քաղել առել է այն գրքից, և ինչպէս ինքը շատ անգամ կրկնում է իր պատմութեանը մէջ, Յունաց աղբիւրներից քաղել հանել է բոլոր այն տեղեկութիւնները : Սակայն Հայոց երոգոտոսի մտաւոր աշխատութիւնների վրայ խօսելուց առաջ, նրա կեանքի վրայ մի քանի տեղեկութիւններ տանք, որ զժողովարար շատ անկատար են, վասն զի

բարեպաշտութիւնը, նրա բարձր մտքերի և քրիստոնէական հեղհոյժութեան տէր մարդ լինելը . էնդոր համար էլ իրաժամանակակիցները անկեղծ յարգանքով պատուում էին նրան և Սահակ բաղրատունի նախարարը, որ յետոյ Հայաստանի մարզպան դուռա և առաջնորդ իր հայրենակիցներին որ Պարսից տէրութիւնից գլուխ քաշել էին, խորին մեծաբանքով դիմում էր նրան և Քրիստոսի բարձրելոյ պաշտօնայանութեանը : 9

Թովմա Արծրունի պատմարանին և Սամուէլ Անեցի ժամանակագրին վկայութիւններին նայելով, Խորենացին 120 տարուայ չափ ապրեցաւ . բայց քննադատութիւնը ընդունելով որ Մովսէս բաւական երկարակեաց էլած լինի, այսու ամենայնիւ յանձն չէ առնում կարծել որ նրա կեանքը 80 տարուց աւելի տևած լինի : Հայաստանի պատմագիրը ցատալի ձերբութիւն ունեցաւ, և այս բանի պատճառը երկարատև ճանապարհորդութիւնների մէջ քաշած նեղութիւններին տալու է անշուշտ : Իր կեանքի վերջի ժամանակները, 450 թուականին, Մովսէս եպիսկոպոսութեան աստիճանին

9 Եթէ Սահակ Բաղրատունին եւ ուրիշ մի քանի բան հասկացող անձինք պատուում էին Խորենացուն, նրանից չէ հետեւում ամենեւին թէ իրաժամանակակիցները յարգում էին նրան : Արդարեւ աչքի առաջեւ ունենալով նոյն ժամանակուայ ժողովրդեան ազդեցութիւնը մէկ կողմից, եւ Հայաստանի թշուառ վիճակը ուրիշ կողմից, կը տեսնենք որ ազգը ոչ կարողութիւն ունէր եւ ոչ ժամանակ Խորենացու պէս մարդու բազմադիմի յատկութիւններին ըստ արժանոյն գին դնելու : Արդա՞ն որ ազգին անուշադրութիւնը արդարանում է վերելք յիշած պատճառներովը, նոյնչափ եւ աւելի էլ դատաստատութեան տակ է ընկնում, նոյն ժամանակուայ հոգեւորական դասը, որ այն աստիճանի նախանձ եւ ատելութիւն էր կապել Խորենացու վրայ, որ Հայաստանի սրտում թեան հայրը նրան անգութ հալածանքներից ազատելու համար իր կեանքի վերջի օրերը լսին ու անձանթ տեղեր անցկացրել, մինչեւ որ վերջապէս իրա հալածիչները կարծես թէ յոգնել զաղբել էին : Եւ ահա Մովսէս եպիսկոպոս է ձեռնադրում եւ Բաղրեանդայ ու Արշարունեաց առաջնորդութիւնը ստանում : Բայց այս հանգստութիւնը չկարողացաւ երկար ժամանակ վայելելու, ու մեռաւ ողբալով ոչ իրա դառն օրերը, այլ ազգի թշուառութիւնը որ իրանից աւելի սիրում էր : Կախանձու եւ ատելութեան կիրքերը որ մոխրի մէջ ծածկուած խանձողի նման առ ժամանակ մի մտել էին, Խորենացու մահովը զարթեալ վառեցան բորբոքեցան հոգեւորականների սրտմը, որոնք Սամուէլ Անեցու վկայութեանը նայելով ձերտնաւ ստորնէրը փորեցին հանելոյն գերեզմանից ու ծովը դցեցին : Ամէնի այսպիսի ճիւղաճախար հոգեւորականների, որ իրանց այս ստակալ գործողութեանովը բոլոր եկեղեցական դասին նախաւորեց իւրին :

Ծան. Թարգ.

խարհագիրներն զրքերն օժանդակութիւնովը յօրինեց : Բայնասէրները երկար ժամանակ կարծեցին թէ այս աշխատութիւնը Մովսէսից յետոյ գրուած է, որովհետեւ նշմարած չէին այն յաւելուածները որ բնական զիտութիւնների հմուտ օրինակողն գործն են, որ իրանից զանազան տեղեկութիւններ աւելացրեց հին աշխարհի այլ և այլ երկիրների բերքերին վրայ : Այժմ ամէն կասկած փարատուեցաւ, և ինկատի ունենալով վերոյգրեալ անունն օրինակողին յաւելուածները, տեսնում ենք որ Մովսէս խորհնացու անունով մեր ձեռքը հասած աշխարհագրութեան բնագիրը հինգերորդ դարուայ մատենագրին է պատկանում :

Բայց Մովսէսի զլիստ որ երկասիրութիւնը, նրա գրուածների զլուխը համարում է իր Հայոց Պատմութիւնը, որ Սահակ Բագրատունի նախարարին խնդիրքովը յօրինեց : Այս աշխատութեան մէջ է մանաւանդ որ աւելի զիւրին կերպով երևում է Մովսէսի բնաւորութիւնը . այս տեղ ակն յայտնի երևում է նրա հայրենասիրութիւնը, նրա ազգայնութեան ու գին, նրա օտարոտի բաների վրայ ունեցած ատեղութիւնը, Յունաց գպրութիւնների վրայ ցոյց տուած զարմանքը և ասորականին մշակութեանը դէմ ունեցած հակառակութիւնը, ևս և նրա քաղաքական բաղձանքները : Նա կամենում է որ Հայաստանը ուժեղ լինի, և իր ազգին պակասուոր կողմերը առանց ծածկելու նկարագրում է . խիստ կերպով կշտամբում է նախարարներին և այն մարդկերանց որ իրանց վարքովն ու դործքերովը Հայաստանի զլուխն եկած թշուառութիւններին պատճառ են էլել : Գուշակում է ապագային կատարուելիք անոյքերը, և լուսապայծառ տեսնում է իր հայրենիքին զլուխը դալիք թշուառութիւնները : Արդարադատ ու անկեղծ պատմիչ լինելով, Մովսէս չէ ջանում ծածկել իշխանների պակասութիւնները, ազգային ծագումների վրայ ուրիշների առաջ բերած առասպելները իր կորովամիտ քննադատութիւնովը մերժում է, և չէ հաւանում այն զարմանալի զրոյցներին որ այս լայնելի աւանդութիւնը սփռել տարածել էր իր հայրենակիցներին մէջ : Եւ եթէ երբեքն այնպիսի հանդամանքներ մէջ է բերում որ իրան փոքր ինչ տարակուսելի են երևում, տեղե-

կարծիքները Յունաց և Լատինացոց գրուածներումը առաջ բերուած կարծիքների հետ : Իրա հայրենակիցները որ աւելի լաւ կարող էին ճանաչել նրա արժանաւորութիւնը, Խորենացուն միշտ իրանց պատմութեան հայրը համարում են, և միշտ նրա դրքին դիմում իբրեւ մէկ հաաիկ ազգային յիշատակաւորանի, որ անկեղծութեան և ճշտութեան կատարեալ երաշխաւորութիւնը ընծայում է իրանց ազգին : Ս, Ներսէս Շնորհալին առաջնորդ առաւ նրան, երբ իր սասնաւ որ Հայոց Պատմութիւնը շարադրեց, և Յովհանէս կաթողիկոսը իր յիշատակարանների առաջին մասումը Խորենացու գիրքը համառօտեց :

Արեւումը ասացինք թէ Մովսէս միշտ մեծ տաւելութիւն է տալի Յունաց մատենագրութեան, և կարողացած ինչափ պատերազմեցաւ ասորի գպրութեան ազդեցութեանը դէմ իրա հայրենակիցների մէջ : Իր ոճին մէջ այն դրքերի ընթերցման հետքերը նշմարւում են, և Արամեան հոգուն սեպհական էլած փքուն ու անճաշակ ճարտասանութեանը բողբոջին հակառակ է երևում : Եթէ երբեմն երբեմն անհեթեթ համեմատութիւններ է անում ինչպէս օրինակի համար մէկ տիղ երուանդակերտ քաղաքը մատաղահաս կոյսի աչքերի ու բերանին է նմանեցնում, ուրիշ տեղ ուտումը երկնային ճառագայթների փայլունութեանը հետ է համեմատում և դիւանատունների մէջ արած խուզարկութիւնները ծովու ալիքների մէջ տատանող նաւին, պէտք է կարծել որ ազգային բանաստեղծութեան յիշատակներովը ոգւորւում էր, և կամ բանաստեղծական եռանդի ազդեցութեան տակն էր, վասն զի չէ կարելի համարել թէ այն մասնագիրը, որ առաջին անգամ դրեթէ հելլենական ճարտասանութեան կանոնները սահմանել է, իր լեզուին վրայ գռեհկական ծաղիկներ սփռած լինի, որոնց բուրմունքը Յունաց գպրութիւնների մշակութիւնովը կազմուած փափուկ ճաշակին զղուեցնում են :

Խորենացու ոճը հակիրճ է, բայց ոչ ցամաք, նրա գրուածների մէջ շատ սակաւ պատահում են մութ խօսքեր, խառն պարբերութիւններ, յանդուգն կամ օտարախորթ զուրջուածքներ, որոնց համար ինքն իսկ խնդրում է ներողամիտ լինել, ա-

սեւով թէ ժամանակ չէ սենեցել իր գրուածը իրա ուզածին պէս զարդարել ու կոկել:

Թովմա Արծրունու խօսքին նայելով՝ Խորենացու պատմութիւնը հին ժամանակները չորս գրքից էր բաղկանում. որոնց առաջին երեքը միայն մեր ձեռքը հասան: Առաջին գրքումը Մովսէս խօսում է առաջի հարստութեան դիւցազների և թագաւորների յաջորդութեանը վրայ Հայկից սկսելով, որին սուրբ Դրոց ազգաբանութիւնների հետ է միացնում. և վախի հասնում է մինչև Արշակունեաց թագաւորութեան հաստատուիլը: Երկրորդ գիրքը սկսում է Վաղարշակի հետ և վերջանում Հայաստանի առաջին քրիստոնէայ թագաւորին — Տրդատի մահովը: Երրորդ գիրքը բովանդակում է այն անցքերի շարքը որ պատահեցան Խոսրով երկրորդի թագաւորութիւնից մինչև Ո. Ս. Սահակի և Մեսրոպի մահը Քրիստոսի 441 թուականին: Իսկ չորրորդ գիրքը, որից և ոչ մի հատուածը մնացել է, ղիտենք որ բովանդակում էր Արշակունեաց թագաւորութեան կործանումը յառաջացնող զիպուածների պատմութիւնը, և Հայաստանի մէջ պատահած անցքերը մինչև Ջենոն կայսեր օրերը, զէթ այս վկայութիւնը տալիս է մեզ Թովմա Արծրունին իր պատմութեանը մէջ: Սակայն պէտք է կարծել որ Մովսէս իր պատմութիւնը մինչև այս ժամանակները չշարունակեց, և աւելի բնական է համարել որ մեր պատմագրի չերջի գիրքը անաւարտ մնաց, կամ թէ իր աշակերտներից մինը յանձն է առել աւարտելու և Մովսէսի նշանակած շրջանից դուրս է եկել¹¹: Այս կարծիքական դը-

11 Անհիմն է Պ. Լանդոյի կարծելը թէ Խորենացու պատմութեան երրորդ գիրքը անաւարտ մնաց, որ է ասել թէ նախ պատմութիւնը չորրորդ գիրք բռնաւ չէ ունեցել, կամ թէ թերեւս նրա աշակերտներից մինը շարադրել է այս վերջի գիրքը, որ իբր թէ Խորենացու նշանակած շրջանից ղեկելով, նախնիք անվաւեր համարել և մեզ աւանդելու փոյթ չեն ունեցել: Այս չորրորդ գրքի կորստեանը մասին մեզ տեղի հաւանական է երևում Պ. Կարլինեանցի կարծիքը, որին բուն խօսքերը մէջ բերեմք այս տեղ: «Բայց աւանդ, (հեղինակը Խորենացու հետ է խօսում) քո ճշմարտախօսութիւնը ճշմարտութիւն չտրոջներից քանի քանի հալածանաց առիթ եղև քեզ, և կարելի է թէ չորրորդ գրքից կորստեան ըստճառն եւս եղև բոլոր ազգին և մանաւանդ հոգեւորականաց պակասութիւնքը անեղիւզ վտահոթութեամբ երեսներով տալիս: (Բայ խոր, յառաջաբան): Եւ յիշաւ՝ գնալ թեան տակ զյեղով Մովսէս Խորենացու յարարելութիւնը իրա ժամանակակից հոգեւորականների հետ, անտեղի չէ կալ ծելը որ որոնք անհ-

րութիւնը կարօյ է հաստատուիլ նաեւ այս չորրորդ զրքի կորստեւորմը, որին վրայ նախնի Հայերը իբրեւ անվաւեր գրուածի վրայ նայում էին, որովհետեւ անփոյթ են էլել օրինակել, կամ քնդուր համար որ շարագրութիւնը առաջին զրքերի շարագրութունից ստորին էր, և կամ լոյս ատենելու չափ բաւական օգտակար տարերքներ չէր բովանդակում: Ինչպէս էլ լինի, Մովսէսի պատմագրութեան չորրորդ զրքին կորուստը մեր կարծածին չափ ցաւալի չէ, որովհետեւ պակասը լրացնելու չափ նիւթ ապլիս են մեզ Հայաստանի միւս պատմագիրները:

Բ.

ՅՈՒՆԱՅ աղբիւրները նախամեծար համարելով նրանցից քաղեց հանեց Մովսէս Խորենացին իր պատմութեան տարերքը, իրա առած վկայութեանը նայելով, և միայն այն ժամանակ օրիշ աղբիւրների զիմում էր երբ յոյն մատենագիրները

տացրին Հայաստանի պատմագրին չորրորդ և վերջի դիւբը, որին թերթերումը գրողուած էին անշուշտ և հոգեւորականների պակասութիւնները:

Ուշագրութեան արժանի է և Պ. Էմինի կարծիքը որ ասում է. «Ինքն իսկ Մովսէս Խորենացին իր տշխատութեան մէջ մի քանի տեղ ցոյց է տալիս այս չորրորդ զրքի գոյութիւնը, որ թերեւս պարունակում էր այն խնդիրների բացատրութիւնը որ իր պատմութեան բովանդակութեանը հետ ուղղակի կապակցութիւն չունէին: Այս տեսակ խնդիրների կարգումը՝ մեր կարծիքով կարելի է դասել առաջին զրքի նիւթի վերջի գլուխները պատմութեան առաջինէն զարեւել, և երբորդ զրքի վաթսուներկուերորդ գլուխը, ուր տեղ մեր հեղինակը նկարագրում է իր աստմանական ճանապարհորդութիւնը և հոյրենիք դառնայը: Պարտական աստակներին վրա՝ խօսած գլխումը, ինքը Խորենացին ցոյց է տալիս որ այն խնդիրը օգտակար կապ չունի իր պատմութեանը հետ: Իսկ երբորդ զրքի վաթսուներկուերորդ գլուխը ինքնիրան ցոյց է տալիս, վերեւումը առաջ բերած պատճառով, որ ոչ ինչ յարաբերութիւն չունի պատմութեան ընթացքին հետ: Այս երկու հառուածիցը կարող ենք մի գաղափար ունենալ այս չորրորդ զրքի բովանդակութեանը վրայ: Տարակոյս չկայ որ այս զրքումը տեղիք ունեցաւ նոյնպէս և ժամանակագրական տախտակը որի վրայ հարեւանցի յիշատակութիւն է անում Խորենացին իր պատմութեանը մէջ»: (Иер. Арм. Моис. Хор. преемств.) : Պ. Էմինի վերջի տողերին վրայ գալով, պէտք է ասենք թէ մեզ էլ անհնարին է երևում ընդունել որ Խորենացու պատմութեան ընթացքը ժամանակագրութիւնից զուրկ է էլել, և այն մատենագիրը որ ասել է թէ «Չէ պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան» (զր. Ա. զլ. 26), իրատեք ապա մեղադրել իրան՝ թէ ժամանակագրութեան կարեւորութիւնը չէ հասկացել: Շատ կարելի է որ այն ժամանակագրական տախտակը Չորրորդ զրքի հետ միասին մեր պատմիչն անհաշտ թշնամիների կատարութեանը զօհ է զնայել:

Շան, Թարգ.

ձեռքի տակ չունէր, և կամ Հայաստանի յիշատակարանների վերաբերեալ տեղեկութիւններ չէր գտնում նրանց մէջ: Սակայն բաց ի մի քանի վկայութիւններից ազգային երգերից առնուած՝ որ աւանդութիւնով մինչև իրա ժամանակը հասել էին, բաց ի մի քաղզկէական զրքի մէջ ամփոփուած հազուադիւս տեղեկութիւններից, որ Մար Աբաս Կատինան հայկազանց հաստատած թագաւորութեան նախնի յիշատակարաններից էր հաւաքել, Մովսէս միայն հելլենական հեղինակների խորհուրդ է հարցնում: Այս բանը շատ անգամ յիշում է ինքը Մովսէս. ասելով թէ յունական աղբիւրներին դիմել է գլխաւորապէս, և մինչև անգամ օտար լեզուով յօրինուած գրուածքների յունական թարգմանութիւնները նախաձեռնար է համարել: Խորենացուն հելլենական գրականութեան տուած առաւելութիւնը դիւրին կերպով կարելի է բացատրուիլ. վասն զի յայտնի է՝ թէ Հայաստանի պատմագրութեան հայրը այն ուսումնական գալրոցիցն է, որի նպատակն էր յունական պարութիւնների ճաշակը սփռել տարածել Հայոց մէջ. յայտնի է նոյնպէս որ Մովսէս ասորի գրականութեան նախանձայոյզ ուսիւններից մինն է, և ամէնից եւանդուն գործակիցը այն գրականական շարժողութեանը որ հինդերորդ գարումը կատարուեցաւ Ասորոց դպրութեանը դէմ:

Մի թէ այս բանը բաւական ապացոյց չէ որ Մովսէս աչքի առաջին ունէր մի քրիստոնեայ մատենադրի զրուածը, և թէ արտաքին հեղինակների գրուածքներին (որոնց վկայութիւնն էլ յետոյ մէջ է բերում), միայն էնդուր համար խորհուրդ հարցրեց, որ Եւսեբիոսն էլ գործ էր ածել նրանց: Խորենացուն այս խօսքը. «աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս ի սկզբանն առասպելս» (զր. Ա. գլ. Գ.), մեզ համար մի նոր վկայութիւն է: Սակայն Մովսէս իրա պատմութիւնը շարունակելով, նախնական ժամանակների համար արտաքին հեղինակի անուն չէ տալիս, ընդհակառակն յիշում է Պերոզը, Աղէքսանդր Բագմավէպը, Աբիւղենոսն ու Կեփաղոսն, որոնց գրուածքները, ինչպէս որ պիտի տեսնենք, աւելի թաւախ նրան ծանրակշիռ խնդիրների վրայ վիճել և սուրբ Գրքի

խօսքերը հին հեթանոս մատենագիրների խօսքերին հետ համեմատել :

Վերևը յիշուած Պերոզի և ուրիշ պատմաբանների առնունքը, որ Խորենացին իր գրքին մէջ բերում է, յայտնի կերպով հաստատում են մեր առաջ բերած կարծիքը, այսինքն թէ Հայ պատմագիրը Կեսարիայի եպիսկոպոսի ժամանակագրութիւնը գործ է ածել : Եւ յիրաւի, Եւսեբիոս էլ մի և նոյն մատենագիրների վկայութիւններն է առաջ բերում իր գրքում առաջի մասին մէջ : Հարկ չէ ուրեմն բառ առ բառ ընդունել Խորենացու այն խօսքերը, որով ասում է թէ իր գրքին մէջ բերած արտաքին պատմիչները առանձին քննելու զննել էր, և այս առիթով ասում ենք թէ շատ հաւանական է որ Մովսէս Եւսեբիոսի վկայութեանը վրայ վստահացել է, վասն զի արդէն Հայ Երոյդոտոսի ծաղկած ժամանակին շատ գրքեր, որոնց Եւսեբիոս խորհուրդ էր հարցրել, ինչպէս են Պերոզի գրուածները, և Աբիւղենոսի մէկ աշխատութիւնը չկային : Արդէն որոշ գիտենք որ Կեսարիայի եպիսկոպոսը Պերոզի գրքում ածենից միայն այն հատուածները գործ է ածել, որոնք Աղէքսանդր Բաղմովէսը օրինակել էր. ինքը Խորենացին Աբիւղենոսի վրայ խօսելով, ասում է թէ այս մատենագրի մանր աղգաբանութիւնների առաջին քաղուածը բնաջինջ է էլի : «Եւ զայս մեզ Աբիւղենոս յիշում յառաջնում առանձնականի իմն մանր աղգաբանութեան ասէ, զոր աստ ուրեմն յետոյ օմանք բարձին» : (Խոր. գր. Ա. գլ. Ե.) Այսու ամենայնիւ մենք չենք կամենում հաստատել թէ Խորենացին բնաւ ամենն ինչէ գիմել Եւսեբիոսի մէջ բերած իսկական աղբիւրներին, վասն զի փորձով գիտենք որ Հայ պատմագիրը այլ և այլ մատենագիրների ռուն բնագիրները տեսել է, որովհետեւ զանազան հեղինակների գրուածներից այնպիսի հատուածներ է մէջ բերում որ ժամանակագրութեան հեղինակը բնաւ չէ յիշատակում :

Ինչպէս էլ լինի, ստոյգ է երևում որ Եւսեբիոսի ժամանակագրութիւնն է թելադրել Խորենացուն իր պատմութեան առաջի եօթը գլուխը գրելու, յետոյ անձամբ քրքրեց Կեսարիայի եպիսկոպոսին յիշատակած մի քանի հեղինակները, նը-

բանից քանի մի հատուած հանեց որ միայն իր գրքին մէջ յիշատակուած գտնուամենք :

Բայց այս տեղ մի դժուար խնդիր է ելանում մեր առաջը . հարցանում ենք մենք մեզի . թէ ինչո՞ւ համար Խորենացու նման արդար ու անկեղծ մատենագիրը իր գրքին առաջի եօթը դուխներումը Եւսեբիոսին բնու և ոչ մի անգամ չէ յիշում . և նրա անունը միայն այն ժամանակ տալիս է , երբ իրա պատմութիւնը ազգերի ծագման և ժողովրդների զաղթականութեան ժամանակներից մեզ շատ հեռու տարել հասցրել է : Կարճ ատեմ , ինչո՞ւ համար յիշում է միայն Պերոզին , Աղէքսանդր Բազմավէպին , Աբիւղենոսին ու Կեփաղիոնին , որոնց գրուածները Եւսեբիոս ծանօթացրուց նրան , և հէնց իմանաս չէ ու զումցոյց տալ թէ Կեսարիայի եպիսկոպոսին ժամանակագրութիւնիցը օգուտ է քաղել : Անաչառ քննադատները չպիտի դանդաղէին անշուշտ Մովսէսի անկեղծութեանը վրայ տարակուսելու , բայց մեզ հաւանական է երևում որ այս տեղն ըրա կողմից մի ակամայ մոռացութիւն կայ . ո՞ր գիտէ թերեւս օրինակողին մէկը աչքի առաջն ունեցած ձեռագիրը օրինակելիս՝ անզգուշաբար մի քանի տող բաց է թողել : Ո՞վ կարող է հաստատել որ Մովսէսի բնագիրը , եթէ օրինակի համար այս տեղ կրճատուած է , որիչ տեղ մի քանի յաւելուածներով ընդարձակուած չէ : Արդէն ստոյգ կերպով իմանում ենք որ Խորենացու աշխարհագրութեանը բնական զիտութիւնների հմտութիւն ունեցող օրինակողի գրիչը գպել է , ուստի և ոչ ինչ արգելք չկայ կարծելու թէ նրա պատմութիւնն էլ կարող էր՝ տեղ տեղ փոփոխուիլ օրինակողների մէկից կամ միւսից , բայց թէ ինչ նպատակով , այդ անհնարին է մեզ իմանալ :

Եթէ մեր առաջ բերած կարծիքը ապացուցանելու համար (այսինքն թէ Մովսէս Խորենացին Եւսեբիոսի գրքից օգուտ է քաղել) , այս տեղ համառօտուած փաստերը բաւական չհամարուին , մինը կայ որ ամէն տարակոյս կը փարատէ : Խորենացին իր պատմութեան մէջ մի տեղ բնաւ չջանաց ծածկել թէ Կեսարիայի եպիսկոպոսին ժամանակագրութիւնը գործ է ածել , վասն զի այս գրուածի հայկական թարգմանութեանը

Համեմատ՝ գրեթէ բառ առ բառ իր պատմութեան մէջ է բերում այն նախադասութիւնները, այն դարձուածները և մինչև անգամ այն ոճերը, որ Եւսեբիոսի թարգմանիչը դորձ է ածել: Սրանից կարելի է հետևացընել որ ժամանակագրութեան բնագրի վրայ չաշխատեցաւ Մովսէս, հապա նրա թարգմանութեանը վրայ, որի հեղինակը ինքն է համարւում: Եւսեբիոսի հայկական թարգմանութեան մէկ կտորը որ Խորենացու բնագրին հետ համեմատէ, բնիկ երցողը կը նկատէ անշուշտ որ խօսքը Աբիւղենոսի մէկ հատուածին վրայ է Ազովբոս թագաւորին վրայ, հատուած որի բովանդակութիւնը Սինկեդոս էլ հասցրեց մեզ, և քաղուած է Քաղդէացոյ առաջին իշխանութեան վրայ գրուած գլխից: Ահաւասիկ Խորենացու պատմութեան մէջ բերած հատուածը: «Այսպէս և զնա ամենախնամն Աստուած եցոյց հովիւ և առաջնորդ ժողովրդեանն. յետ որոյ, ասէ. թագաւորեաց Աղբոս շարս տասն, որք լինին ամբ 36,000»: (Տէս Մով. Խոր. դր. Ա. գլ. Գ. տէս Եւս. Թարգ. տպագր. Աւդերեան, էջ 46—47): Չենք կամենում մեր խօսքը երկարացնել այս նիւթի վրայ, որի հետևանքը մեզ պարզ է երևում:

Այժմ աչքի անցնենք Խորենացուն՝ իր պատմութեան մէջ յիշած յոյն մատենագիրների անունները, ցոյց տալով այն տեղերը որ նախնի մատենագրութեան հատուածները հաւաքողները ժողոված չեն, և որոնց բնագիրները հայկական թարգմանութիւնով մեր պատմաբանի գրքումը միայն զանրւում են. միանգամայն կը յիշենք մի քանի յոյն մատենագիրների մեզ անծանօթ անունները, որոնց գրուածները նոյնպէս աչքի անցրել էր Մովսէս, բայց նոցանից ոչ մի հատուած առաջ չէ բերել:

Խորենացու յիշած արտաքին մատենագիրներից, ըստ ժամանակագրութեան Եւսեբիոսի երևում է նախ՝ Պերոդ կամ Էլիլ լաւ ասել Աղէքսանդր Բաղմավէպը, որ Քրիստոսի թըւականից մէկ դար առաջ ապրում էր: Բաղմավէպին գրուածները, հին ժամանակները մեծ յարգ ունէին, հինները նրանցից թանկագին հատուածներ աւանդեցին մեզ, բայց Խորենացին և ոչ մի հատուած առաջ չէ բերում:

Հայաստանի պատմագիրը շատ անգամ կրկնում է Յովսեփոսի անունը։ Ինչպէս երևում է այս մատենագրի զրուածները շատ ծանօթ էին Մովսէսին։ Բայ ի մի քանի հանգումանքներից, նա յիշում է Յովսեփոսի վկայութիւնը, որով Յուլիոս Ափրիկանոսի ժամանակագրութեան մէջ պատմածները հաստատում է։ մի կարճառօտ հատուած էլ մէջ է բերում Յովսեփոսից Միհրդատի մահուանը մասին, որին լուրը երիբոյն մօտ առաւ։ Խորենացու խօսքերը հրէայ պատմագրի հատուածին ճշմարտութիւնը ցոյց են տալիս։

Յովսեփոսի վկայութեանը հաւատ ընծայելով է դարձեալ որ Խորենացին յիշում է Կեփագիոնի պատմութիւնը, և նրա բնադրին դիմում է յետոյ ու նրանից մի հատուած էլ մէջ բերում։ Հատուած որ ոչ Յովսեփոս, ոչ Յովհաննէս Մաղաղ և ոչ Սինկեդոն է յիշում իր գրուածներումը։ Ահաւասիկ այն հատուածը, «Մանր դամենայնսն՝ յիսկզբան մերոյ աշխատութեանս սկսաք զրեւ զազգաբանութիւնսն ի դիւանացն արքունի։ այլ առաք հրաման ի թագաւորաց լճոյու զաննչանից և զվատաց արանց ի հնոցն զյիշատակն, և զրեւ միայն զքաջն և զխմաստունն և զաշխարհակալս նախնիս, և մի անպէտս զժամանակս մեր ծախել»։ (Խոր․ զր․ Ա․ գլ․ Ե․)։ Մի ուրիշ զլիսումը Մովսէս Կեփագիոնի գրուածներն էլ դործ է ածել, և նրա անունը տալիս է երբ խօսքը զալիս է Շամիրամի և նրա Հնդկաստանումը յանձն առած պատերազմների վրայ։ Խորենացին կասկածում է այս տեղեկութիւնների ճշգրտութեանը վրայ, և ծիծաղելու առիթ չտալու համար, ասում է, լու է համարում Մար Աբաս Կատինայի վկայութիւններին հաւատ ընծայել, որոնք իրան աւելի ճիշդ են երևում։

Իր պատմութեանը մէջ Մովսէս խօսում է Սիրիլլաների և մասնաւորապէս Պերոզեան ասած Սիրիլլայի վրայ, և այնպէս է ցոյց տալի, թէ սրա պատգամները աւելի հաւատարիմադրբիւր են պատմութեան համար քան թէ շատ պատմիչների վկայութիւնները։ Եւսեբիոս էլ մի և նոյն աղբիւրները գործ է ածել, և Աղէքսանդր Բաղմալէպից առնելով յիշում է Պերոզեան Սիրիլլան, բայց Խորենացուն խօսքերից երևում է որ ինքը Սիրիլլեան պատգամների իսկ բնագիրը աչքի անցրեց։

որովհետեւ իրա մէջ բերած հատուածը Եւսեբիոսի խօսքերից շատ տարբեր է : Խորենացու պատմութեան մէջ խօսքը Զըրուանի, Տիտանի և Յարեթի (Յապետոս[է] վրայ է, և այն պատերազմի վրայ որ Տիտան և Յարեթ Զրուանի դէմ տուել են, որ ուզում էր ամէնի վրայ բռնանալ և աշխարհի տիրապետել :

Գիտենք թէ հիները ինչ մեծ նշանակութիւն տալիս էին Սիրիլլաների գուշակութիւններին, և մեծ խնամքով ժողովում էին այն պատգամատունների շատ անգամ մութ պատասխանները, որոնք Յունաստանի, Ասիայի ու Եգիպտոսի ամէն կողմերը ցրուած էին : Վարրոնի օրերը տասը Սիրիլլայից աւելի հաշուում էին, որոնց պատգամները արձանագրական մատենաներումը օրինակելով՝ Հռովմայ տաճարներումը պահուում էին. նրանցից մէկ քանիսը մինչև մեր օրերը հասան : Վարրոնի յիշած տասը Սիրիլլաներից առաջինն է պարսկական կամ քաղդէական Սիրիլլան, որին պատգամները մինչև Նոյ եւ հասցնում : Տարակոյս չկայ որ այս քաղդէական Սիրիլլայի առասպելախառն պատմութիւնը յառաջանում է Բաբելոնի հին աւանդութիւններից, ալանդների միաբանութեան¹² ժամանակ, երբ ամէնի ջանքն այն էր, որ Քաղդէացոց հնարած առասպելական ծագումները Աստուածաշունչի ազգաբանութիւնների հետ յարմարացնեն : Պ. Բընանը ցոյց տուաւ թէ բաբելական գիտութիւնների անկումը, որին բաւականին օգնեց յունական դպրութիւնների աճին ու զարգանալը Արեւելքումը, պատճառ էլաւ որ մեր թուականութեան նախնի

12 Synerétisme, այս բառը մէկ խօսքով ևւ աւելի ճիշդ կերպով չկարողացանք բացատրել : Սեւերեւելք քրիստոնէական առաջի դարումը ծաղկեցաւ : Պիթագորեան, սյլատոնական եւ ճեմարանական փիլիսոփայութիւնների խորհուրդից ծնաւ Նոր-պլատոնական փիլիսոփայութիւնը (néoplatonisme), որ սկզբումը կանոնաւոր ընթացք չունեցաւ, մինչև որ վերջապէս քրիստոնէութեան հետ խառնուեցաւ, որով ևւ հեթանոսական փիլիսոփայութիւնը քրիստոնէական փիլիսոփայութեան փոխուեցաւ : Առաջին անգամ Փիլոն Աղէքսանդրացին դործ դրաւ նոր պլատոնական փիլիսոփայութիւնը, Քրիստոսի 40 թուականին, որ բուլղ փիլիսոփայական դրութիւններից Պլատոնինը ընտրեց, վասն զի սրա զաղափարների հետ աւելի դիւրին կերպով կարող էր համաձայնեցնել իր պապերի գրութեանը : Այնուհետեւ ամէնն էլ սկսան հետեւիլ Փիլոնին, և խրաքանչիւր ազգ Արեւելքումը կը ջանար իր ծագումը Աստուածաշունչի ազգաբանութիւնների հետ յարմարացնել :

դարերումը հնարուեցան այն մտացածին պատմութիւնները, այն այլանդակ ու անհեթեթ բովանդակութիւնով գրուածները : Թերեւս քաղդէական Սիրիլանների պատգամները քաղդէացոյ գրականութեան մի մասն են կազմում : Կարելի է ընդունել որ քաղդէական մատենագրութեան վերջի ժամանակներումն էր որ պատմական անձինքների պատմութիւնները սկսան առասպելներով խառնուիլ, և նախնական ժամանակների բոլոր մտաւոր արդիւնքները մի և նոյն մատենագրի ընծայուեցան :

Արշակ առաջինին թագաւորութիւնից յետոյ՝ Մովսէս Խորենացին յոյն մատենագիրների վկայութիւնները մէջ է բերում, որոնց անունները միայն հասել են մեզ, իսկ գրուածները ըստ մեծի մասին կորչել, բաց ի մէկ քանիսից, որոնց գրուածները ժամանակի ձեռքից աղատուել են և մեր թուականութեան առաջի դարերի մատինագիրների ջանքովը պահպանուել :

Եւ նախ՝ Մովսէս յիշում է Հիւպոդիտայ մատենագիրն, որին վրայ ոչ ինչ տեղեկութիւն չունինք և միայն անունը յայտնի է մեզ, ինչպէս նաեւ Յովսեպոսի և Յուլիոս Ափրիկանոսի անունները, իսկ Պ. Միւլլերը հայ պատմագիրն յիշած պատմաբանի անունն անդամ է իմացել : Հաւանական է թէ Հիւպոդիտայի գրուածները Մովսէսի ժամանակից շատ առաջ կորչած չեն, որովհետեւ չենք կարծում որ հայ մատենագիրի խօսքը այս տեղ սուրբ Հիւպոդիտայի գրուածներին վրայ լինի, որոնց մէկ մասը հասցրել է մեզ փոս :

Հիւպոդիտայից յետոյ Մովսէս յիշում է Մանեթոնին՝ երբ խօսքը գալիս է Նեփտանիբոսի վրայ, որ Մանեթոնի կարծիքով մեծին Աղէքսանդրի հայրն էր : Ինչ հաւանական է երևում, թէ այս աւանդութիւնը, որ գտնուում է մի քանի մատենագիրների գրուածներումը, Մանեթոնի բուն գրուածներից առնուած է. կարելի է ընդունել որ Խորենացին մի անշտն հեղինակի վկայութեանը հաւատ ընծայելով կամ սրբալուստեքով այս ծուռ ծագումը ընծայում է եզրիպտացոյ պատմութեան հեղինակին ¹³ :

13 Մանեթոն ազգով եգիպտացի էր : Յովսեպոս հիշայ պատմիչին տուած վկայութիւնիցը գիտենք որ Մանեթոն եգիպտոսի պատմութիւնը գրել է : Ե. Թ.

Նախ ի մատենագիրները չէին միաբանում Կիւրոսի և Կրեստոսի մէկմէկու հետ ունեցած պատերազմների վրայ, այս պատճառով Խորենացին Յունաց այլ և այլ պատմիչների կարծիքները մէջէ բերում որոնք միայն Հայ Երոգոտոսի գրքումն են դանուում: Այս պատմիչների կարծիքով ոչ թէ Կիւրոս, այլ Հայոց թագաւորը Արտաշէս սպանեց Լիւդացոց թագաւորին, և այս մասին Հայաստանի պատմագիրը իր գրութեան մէջ առաջ է բերում Պօլիկրատէսի, Եւաղարոսի, Կամադրոսի, ինչպէս նաև մի չորրորդ պատմաբանի վկայութիւնները, որին անուանում է Փղեդոնիոս. մեր կարծիքովը սա պէտք է լինի Փղեդոնիոս մատենագիրը որի անունը օրինակողներից մինը աղաւաղել է ¹⁴:

Պօլիկրատէս այն մատենագիրներից միոն է, որին համար կարող ենք ասել թէ անունը միայն մնացել է, բայց հաւանական է թէ շատ զրուածներ է յօրինել: Աթենէն մի հատուած է աւանդել մեզ այս պատմիչի մէկ աշխատութիւնից. իսկ Խորենացուն մէջ բերած հատուածը, ինչպէս երևում է, մի ուրիշ պատմութիւնից առնուած է որ բովանդակում էր գըլխաւորապէս Ասիայի նախնական ժամանակների պատմութիւնը: Ահաւասիկ Պօլիկրատէսի հատուածը, ինչպէս որ Խորենացին իր պատմութեանը մէջ մեզ աւանդել է:

«Ահա ինչ Արտաշէս Պարթև՝ քան զԱսիեդոնացին Աղէքսանդր, զի կալով յիւրում աշխարհին՝ իշխեաց Թեբայ և Բաբելոնի, և չէ ընդ Ալիոս գետ անցեալ, զԼիւդական սատակեաց զԵօրոս, և կալաւ զԿրիւսոս, և յառաջ քան զԱսիա հասանելն՝ յԱտտիկէ գդեկին քարոզեցաւ: Աւագ բախտին, միայն թէ ի տէրութեանն, և ոչ ի փախստեանն էր վախճանեալ» (Խոր. գր. Բ. զԼ. ԺԶ.):

Եւաղարոս՝ անշուշտ Եւաղորոս մատենագիրն է որի անունը ձայնաւորների փոփոխութեամբ աղաւաղուել է: Սա պէտք է լինի այն Եւաղորասը որի համար Սուրիլաս ասում է թէ Եգիպտացոց պատմութիւնն է գրել. սա է դարձեալ այն մատենագիրը որի այլ և այլ զրուածներից Պլինիոս օգուտ է

¹⁴ Պ. Կարինեանցի ձեռագրումը այս անունը գրուած է Փէդոնիոս, որով Պ. Լանդլայի կարծիքը մի կողմով արդարանում է:

Քարել : Խորենացուն եւագորասից առաջ բերած հատուածը բաւական երկար է. ահաւասիկ նրա խօսքերը :

«Փոքր Աղէքսանդրի եւ Դարեհի պատերազմն առ Արտաշէսին բաղդատեալ. քանզի նոցայն՝ ոչ ի փոշոյն մաքուր երևէր լոյս տունջեանն, այլ սա ծածկեաց նետաձգութեամբն, եւ ստուերացոյց զարեգակն, ձեռագործ զիշեր զմիջօրէիւ արարեալ : Ոչ փախստեայ համբաւաբեր ի լիւգացւոցն թողեալ, այլ եւ զթագաւորն լիւգացւոց զԿրիւսոս՝ ի տապակի հրամայեաց կացուցանել : Վասն սորա եւ ոչ ուխք զգետն ստուարացուցին արբամար ի ձմեռնային նուազութիւն իջուցանելով : Վասն զի եւ զթուոց եցոյց տկար լինել բազմութեամբ զօրացն, մինչ զի չափոյ պէտք եղին առաւել քան զհամարոյ : Նա ընդ այս ոչ հպարտացաւ, այլ արտասուեաց ասելով. Աւաղ փառացս անցաւորի» :

Ամադորոս Ասիոյ յիշատակարանների վրայ մի գրուած է յօրինել, որ նոյնպէս կորչել է : Խորենացին ոչ ինչ չէ՝ ասում այս մատենագրի վրայ, որի անունն անգամ չեն յիշում նախնի մատենագիրները : Հայաստանի պատմիչը մի հատուած է մէջ բերում նրանից, զարձեալ Արտաշէսին Կրեսոսի դէմ տուած պատերազմին վրայ :

«Խաբ կեանք լինէին հպարտացելոյն լիւգացւոց. Կրիւսեայ Թեդիայ հարցունքն պատասխանելով. Կրիւսոս անցեալ ընդ Ալիս գետ քակեացէ զիշխանութիւնս. զորնա զօտարաց կարծեալ՝ զինքն քակտէ : Քանզի կալեալ զնա Պարթևին Արտաշէսի, հրամայեաց յերկաթեղէն տապակ հանել : Իսկ Կրիւսոսի յիշեալ զքանան Սողոնի Աթենացւոյ՝ ասէ յիւր լեզուն. ով Սողոն Սողոն, գեղեցիկս բարբառեցար ոչ երանել զքարեբախտութիւն մարդոյ մինչև ի վախճան : Իսկ լուեալ որք մերձն կային, պատմեցին Արտաշէսի եթէ զնոր իմն Աստուած կարգայ Կրիւսոս : Եւ գթացեալ Արտաշէսի՝ հրամայեաց ածել եւ հարցեալ եւ ուսեալ թէ զինչ է որ աղաղակեացն, հրամայեաց ներել զտանջանսն» :

Փղեդոնիոս, կամ աւելի ճիշդ Փղեդոնիոս, պէտք է լինի այն Տրակացի պատմաբանը, որի գրուածներէից զանազան հատուածներ են մէջ բերում Սուրիդաս, Ստեփանոս Բիւզանդացի՝

Յուշիո՞ Սիրիկանո՞ (Եւսերիտի ժամանակագրութիւնումը յիշուած), փոփոքիկնէս, Սինկեզոս, Կոստանդին Պեռփեռու-ժէն ու Եւազարոս : Խորենացու առաջ բերած հատուածը, նոյնպէս Արտաշէսի մասին, բոլորովին նոր է և թերեւս ողիմպիական գրքիցն է :

« Ամենեցուն թագաւորաց հուժկու եղեալ Պարթէն Արտաշէս, ոչ միայն զԼիւդացիս վանեալ և զԿրիստոս կապեաց, այլ յԵլլենպոնտոս և ի Թրակէ վարերցն փոխեաց զԵնութիւնըս, ծովադնաց ընդ երկիր բերեալ լինէր, և ընդ ծով հետեւակելով. Թեսաղացոյն սպառնալով համբաւն հիացուցանէր զհելլենականն : Կործանեաց զԼակեդեմոնացիս, փախոյց զՓոկեացիս, Դովկիացիք եղեն անձնատուրք, Բիւղացիք մասն են ի կալուածոց նորա. ընդ ամենեսին նմա Ելլադա մատուցանէր զահն : Յետ փոքու ժամանակի աղէան անցին զամենեքումք : Ո՛չ այնքան թշուառացաւ Կիւրոս ընդ Մասքութս պատեւրագմելով, ոչ այսպիսի կիրս կրեաց Դարեհ ի Սկիւթացւոցն փախուսան, ոչ Կամբիւսէս յԵթովպացիս, փոքր և Քսերքսին յԵլլադայ զօրու երթալն, թողլով նոցա զզանձս և զխորանս, միայն կենդանի փախուցեալ մազապուր, այլ սա մեծամեծ յալթանակօք պանծացեալ, յիւրոց զօրացն խողխողի » :

Քննադատները իրաւունք ունին պահանջելու որ մանրամասնաբար քննէինք մեր առաջ բերած հատուածների խօսքերը, բայց այս աշխատանքը մեր շեջանից գուրս է. մեր դիտաւորութիւնն էր միայն յիշել այն յոյն հեղինակների կորսուած գրուածների հատուածները, որոնց վրայ ամենևին տեղեկութիւն չունին մեր հելլենաբանները :

Մովսէս երրորդ և վերջին Արտաշէսի թագաւորութեանը զարմ, ասում է թէ այս թագաւորի վրայ առած մէկ քանի տեղեկութիւնները քաղել է Ուղիւպ ասած Անի քաղաքի քուրմին « Տաճարների պատմութիւնից » : Հաւանական է որ Ուղիւպ ազդով յոյն էր. նրա գրուածը բոլորովին կորչել է :

Արիստոն Փելլացի յոյն պատմաբանի գրքին էլ մի մասը համառօտում է Մովսէս, երբ խօսում է Հրէից ապստամբութեանը և Արտաշէս երրորդի մահուանը վրայ : Արդէն Եւսերիոս էլ այս պատմիչի աշխատութիւնը գործածել և իր ժա-

Մանակագրութեան մէջ մի հատուած էլ մէջ բերելէր : Մի և յոյն հատուածը Մովսէս համառօտելէ և նրա վրայ Աբտաշէսի մահուան պատմութիւնը աւելացրեց :

Իսկ երբ Հայաստանի պատմագիրը հասնում է Պարթևաց իշխանութեան կործանելուն և Սասանեան ցեղին Պարսից դահի տիրելուն, ուրիշ աղբիւրների է դիմում : Մեայն երևում է որ իր պատմութեան այս մասումը Յունաց զինաւոր աղբիւրներից օգուտ է քաղել վասն զի ինքը Խորենացին խոստովանում է թէ Խոռոհբու ապրսի մատենագիրն է հետևել զինաւորապէս, այսու ամենայնիւ մի քանի յոյն մատենագիրների անունները յիշում է, որ այժմ գրեթէ անծանօթ են, սրանք են Պաղեփառոս, Պորփիւր և Փիլէմոն :

Պաղեփառոսին յիշում են Սուլդաս և Սաւփանոս Բիւզանդացին. բայց կարծիք կայ թէ այս անունով ուրիշ մատենագիրներ էլ կային հնումը : Պորփիւր բնիկ Տիւրոս քաղաքիցն էր. սրա գրուածներից բաւական հատուածներ մնացել են : Իսկ Փիլէմոնը բոլորովին անծանօթ է. կարելի է հաստատ տեսել որ սա Պլինէոսի յիշած Փիլէմոնը չէ :

Իր պատմութեան սկզբումը արդէն՝ Մովսէս ասում է թէ ձեռքի տակ չէ ունեցել Հայաստանի նախարարութիւնների վրայ յոյն մատենագիրների գրած յիշատակարանները : Մեր այժմեան ունեցած տեղեկութիւններովը, դժուար է իմանալ թէ արդեօք Խորենացին բուն Յունաց մատենագրութեան պատկանող գրքերից է օգուտ քաղել թէ Գաղղէացոց գրուածների յունական թարգմանութիւնն է տեսել : Կարելի այս էլ տեսլ թէ Մովսէսի խօսքը թերեւ Մար Աբասի պատմութեանն է տկն արկում, որ արդարեւ խօսում է նախարարութիւնների վերայ, երբ յիշում է Վաղարշակին իր թագաւորութեան մէջ արած բարեկարգութիւնները, որով այն ժամանակ կը հաստատուի այն կարծիքը թէ Մար Աբասի պատմութեան յունական թարգմանութիւնն էլ կար, ինչպէս որ ինքը Խորենացին հաստատում է : Ա՞ղիտէ թերեւ Մովսէս ուղղում է խօսել իւրաքանչիւր նախարարութեան առանձին պատմութիւնների վրայ, ինչպէս է Ձենոբ Գլակի յօրինած Տարօն դաւառի պատմութիւնը, որ յետոյ Յովհաննէս Մամիկոնից եպիսկոպոսը շարունակեց :

Ինչպէս որ տեսանք, Խորենացուն առաջնորդ առած յոյն մատենագիրները բազմաթիւ են, և աւելի մեծ յարգ ունին, քան թէ այն նշանաւոր պատմաբանների գրուածները որոնցից օգուտ չէ քաղել հայ պատմագրութեան հայրը, վասն զի սրանք առանց Մովսէսի մեր ձեռք հասան: Նրա առաջ բերած տեղեկութիւններն ու հատուածները, նրա յիշած մատենագիրները նոր լոյսեր են տալի, որ Երոզոտոս, Թուկիտիդէս, Քսենոփոն, Պոլիւս, Ապոլիանոս, Պլուտարքոս, Առիոս և ուրիշ շատերը իրանց գրուածներումը չեն յիշատակում: Մովսէս ասում է թէ Թէոդորոս Սիկիլիացուն խորհուրդ չէ հարցրել, որովհետեւ այս մատենագրի գրուածները ձեռքի տակ չէ ունեցել: Պէտք է ցաւել արդեօք այս հանգամանքի վրայ, մենք կարծում ենք թէ չէ, մանաւանդ որ Մովսէսի նրանից առաջ բերածները, մի նոր բան պիտի չըյայտնէին մեզ, էնդուր որ Թէոդորոսի յոյն բնագիրը մինչև մեր օրերը հասաւ:

Թէպէտ և մեր առաջ բերած հատուածները շատ կարճ ու համառօտ են, բայց և այնպէս պակասաւոր տեղերը լրացնում են, և կարող են փոքր ի շատէ ամբողջացնել յոյն պատմիչների հատուածների այն մեծ «մարմինը», որ նորերումս Պ. Միւլլերը ընծայել է գիտնական աշխարհին: Յուսանք թէ օր կը գայ որ մի եռանդուն արեւելագէտ ձեռնամուխ կը լինի հրատարակել հայկական մատենագրութիւնից քաղուած յոյն պատմաբանների հատուածները, և Գերմանացի յունաբանին «Հատուածների» վրայ մի հինգերորդ հատոր կաւելացնէ:

Բաց ի Եւսեբիոսից, որի վրայ արդէն խօսել ենք, Խորենացին իր պատմութեանը մէջ ուրիշ յիշատակի արժանի տեղեկութիւններ առաջ չէ բերում Յունաց քրիստոնեայ պատմիչներից: Ինչ որ Յուլիոս Ափրիկանոսի գրուածներից առաջ է բերել, այն Եւսեբիոսի ժամանակագրութիւնից է քաղել, և թէպէտ մասնաւորապէս խօսում է Ափրիկանոսի հինգերորդ գրքի վրայ, բայց պէտք է կարծել թէ քիչ օգուտ քաղեց նրանից, որովհետեւ ոչ մի հատուած չէ մէջ բերում:

Այն տեղեկութիւնները որ Մովսէս քաղում է Կիպրոսի Եսասանցիա քաղաքի Եպիփանէս անուն եպիսկոպոսից, բառ

առ բառ առնուած չեն, վասն զի այս վարդապետի գրուած ներումը Մովսէսի խօսքերը չէ կարելի գտնել :

Եւսեբիոս է դարձեալ որ Ս. Փիրմիլիանոս կեսարիայի եպիսկոպոսին գրուածներն վըայ տեղեկութիւն է տալիս խորենացուն : Այս մատենագիրը շատ աշխատութիւններ է թողել նրանցից մինն է Մաքսիմիլիանոսի և Դիոկղեալիանոսի օրովը քրիստոնեայների դէմ էլած հալածանքների պատմութիւնը : Մեր ձեռքը միայն մէկ նամակ է հասել այս մատենագրից՝ Ս. Կիլլիրիանոսի անուանովը գրուած :

Բայց մի ուրիշ գրուած կայ որի մեծ յարգ է տալիս Մովսէս, այն է Ագաթանգեղոսի պատմութիւնը, որի վըայ վերելը խօսեցինք : Ագաթանգեղոսի իր պատմութեանը մէջ խօսում է Տրդատ Թագաւորի քրիստոնէական հաւատն ընդունելու, և Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութիւններին վըայ : խորենացին որ ընթերցողին շատ անգամ ուղարկում է այս պատմութեանը, Ագաթանգեղոսի անկատար թողուցած տեղերը ընդարձակում է. այնպէս որ Մովսէսի և Ագաթանգեղոսի պատմութիւններովը կարող ենք մանրամասն տեղեկութիւններ ունենալ այն անցքերի վըայ որ քարոզութիւնը և քրիստոնէութիւնը տարածուելու ժամանակին պատահեցան Հայաստանումը :

Իր պատմութեան թերթերումը Մովսէս ուրիշ պատմիչներ էլ յիշում է: բայց անկարելի է որոշ իմանալ թէ նրա յիշատակած անձինքները յոյն են թէ հայ : նրանց անուններից կարելի է գուշակել միայն թէ քրիստոնեայ են, սրանք են Գորգի, Դաւիթ և Բանյան թերևս Բանանոս : Այս մատենագիրները, ասում է Մովսէս, Յունաստանի իմաստունների խօսքերն են ժողովել, և գլխաւորապէս Ողիմպիոդորոսի գրուածները, որ թէ փիլիսոփայ էր և թէ պատմաբան : Արան պէտք չէ շփոթել Ողիմպիոդորոս համանուն մատենագրի հետ, որ մի պատմաբանակոն գրուած էր թողել քսանութրիկու գլուխ բան : Այս պատմութեան մի քանի հատուածները հասցրեց մեզ Փոտ :

Պիտի չարունակուի :

ԱՂԲԻԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՅՈՎԱԶԳ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ԱՌԱՋԱԲԱՆ ՈՒԹԻՒՆ

Մեր օրագրի փեարվար տմառայ համարու մը խոստացանք՝ Դի Սարգիս Գիլանէնցի օրագրի տպելուց յետոյ՝ տպել և Յովսէփ կաթողիկոսի յիշատակարանը. հօրէս հիմիկ կատարումենք մեր խոստմունքը :

Էս ձեռագիրն էլ, որպէս և Դի Սարգիս Գիլանէնցի օրագիրը, հաղորդեց մեզ պարոն Յովհաննէս Ախլերզեանցը. հանգուցեալ Գէորգ Ախլերզեանցի եղբայրը : Գէորգ Ախլերզեանցին հասել է էդ ձեռագիրը իշխան Յովհաննէս Արղուն թեանցից, որնոր Յովսէփ կաթողիկոսի եղբօր՝ Մովսիսի թոռն էր : Էս յիշատակարանը սկսում է 1778 թվից և վերջանում է 1793 թվով, յետոյ երեք երեսի վրայ հաղորդում է 1793 թվի մարտ և մայիս ամիսներումը պատահած մէքանի անցքերը : Յետոյ ութ թերթ թուղթ դուս է զջլած, միայն չէ երևում՝ զրած են էլել է՞ք թերթերը, թէ անգրիլ : Դրանից յետոյ մօտ երեսուն թերթ անգրիլ թղթեր են : Յետոյ սկսում է յիշատակարանը պատմութիւն անել 1779 թվից մինչև 1782 թիւը էս անունով. «Մասնաւոր պատմութիւն յաղագս հանդիպեցելոցն մեզ, յորժամ ի Հաշտարխանու ելեալ գնացաք ի Մոսկով ի պատճառս օժման եկեղեցւոյն Սանկթպետերբուրցու, զոր կառուցեալ էր Զուղայեցի Նդիազարեանց Նդիազար Աղայի որդին ազնիւ Աղայ Յովհաննէսն» : Սրանից յետոյ ձեռագիրը տեղեկութիւններ է տալի՝ թէ քանի եկե-

ղեցի է հիմնել և օծել Յովսէփ կաթողիկոսը՝ արքեպիսկոպոս էլած ժամանակը : Վերջումս մէկ յօդուածք կայ, որնոր տեղեկութիւն է տալի՝ թէ ինչ գլխաւոր երազներ է տեսել Յովսէփ կաթողիկոսը՝ արքեպիսկոպոս էլած ժամանակը : Մէկ երեսի վրայ էլ գրած է Ռսերէն. «Слово на освящение гайканскія церкви во имя воздвиженія честнаго и животворящаго креста христова. Сентября 9 дня, 1781 года» : Մէկէլ երեսի վրայ գրած է. «Во имя Отца, и Сына и Святаго Духа. Аминъ. Бѣ корабль по средѣ моря, и самъ едва на земли и вилѣ ихъ страждущихъ» : բայց իսկ քարոզը չէ դուս բերած :

Էս ձեռագիրը ուրիշ ուրիշ ձեռքով է գրած : Առաջի յօդուածքը մինչև էնտեղ, որ տեղ որ սկսում է պատմել մարտի քսանուհինգի 1793 թվի պատահած բաները, մէկ ձեռքով է գրած և լաւ կարդացվում է : Էնտեղ, ուր որ ձեռագիրը խօսում է մարտ և մայիս ամսուայ 1793 թվի անցքերը, գրած է ուրիշ ձեռքով : Էն տեղը որ տեղ որ եկեղեցիներու հիմնվելու և օծելու վրայ և երազների վրայ է բանը, ձեռագիրը գրած է էլի էն ձեռքով, որ ձեռքով որ գրած է առաջի յօդուածքը : Իսկ ճանապարհորդութիւնը Աշտարխանից Մոսկով երեք ուրիշ ուրիշ ձեռքով է գրած :

Մենք ոչինչ չենք կարող ասել՝ թէ ի՞նչ է էլի պտտճառը՝ որ Յովսէփ արքեպիսկոպոսը յիշատակարան է գրել, և թէ միայն իր համար է գրել, որ չմոռանայ անցկացած բաները, թէ պատմութեան համար, որ անմահացնի իր արած գործերը : Նրամանապէս ոչինչ չենք կարող ասել՝ թէ Յովսէփ կաթողիկոսը ինքն է գրել էս օրագիրը և իժուժ տվել է ուրիշներուն դուս գրելու, թէ էն գլխէն էս օրագիրը նրա հրամանով ուրիշներն էին գրում : Էս հարցմունքները վճռելու համար ոչինչ տեղեկութիւն չունինք, և կարծում ենք, որ մենք էն ժամանակ միայն կարող ենք վճռել էս բանը, երբոր կը ծանօթանանք Յովսէփ կաթողիկոսի և նրա մօտիկ մարդկերանց ձեռքի հետ : Էսպէս թղթեր շատ պիտի ըլնին Մոսկովումը, Պետերբուրգումը, Աշտարխանումը և Նախիջևանումը :

Առունկ օրագիրը տպում է էս յիշատակարանը էն մտքով, որ կարծում է՝ թէ քանի որ մեր պատմութեան նիւթերը չեն

հաւաքված՝ կարելի չէ Հայոց պատմութիւն գրել, և թէպէտ շատերը գրում են, բայց մինչև նիւթերի հրատարակվիլը՝ մեր պատմութիւնը ուղիղ տեղեկութիւններ չէ կարող տալ: Էս պիտի նիւթերը շատ օգուտ էլ կարող են բերել, որովհետև ծանօթանալով մօտիկ հին ժամանակուայ մարդկերանց հետ, մենք շատ զգուշ կը լինենք, երբ որ սկսում ենք ունենալ բան մէկ նոր մարդու հետ: Եթէ մենք իր ժամանակին իմացել էինք, թէ ի՞նչ մարդ էր Սալանթեանց արքեպիսկոպոսը, մենք հեշտութիւնով կ'իմանայինք էն մարդկերանց էլ, որնոր յետոյ նրա ճանապարհովը գնացին: Թէ չէ՝ մարդիկ գալիս են, գնում են, մենք ոչինչով չենք փորձվում, ու էլի էնպէս ենք ժաժ գալի, հէնց կարծես՝ թէ աշխարհքը հէնց մեզանիցն է սկսել, ու թէ մեզանից առաջ ոչինչ չէ էլել:

Յովսէփ կաթողիկոսի վրայ բաւական նիւթեր կան զանազան գրքերումը, օրինակի համար ասենք՝ շատ տեղեկութիւններ ենք գտնում նրայ վրայ մէկ Ռուսաց գրքումը, որնոր կոչվում է «Собрание актовъ, относящихся къ обозрѣнію исторіи Армянскаго народа»: Էս գիրքը տպած է Մոսկով 1835 թվին պարոն Լազարեանց ծախսով, ամէնը երեք հատոր է: Էս գրքումը կան Յովսէփ կաթողիկոսի մօտ դրած նամակները՝ Պօտեմկինից, Դրաֆ Զուբովից, Եկատերինէ թագուհուց, Պօղոս թագաւորից և ուրիշ ուրիշ էն ժամանակվայ երեւելի մարդկերանցից: Յովսէփ կաթողիկոսի կեանքի վրայ էլի յօդուածք կայ Պլուշարի Энциклопедическіи Словарь ասած գրքումը երրորդ հատորումը: Էս յօդուածքը գրել է պարոն Խոլզաբաշեանցը և խօսում է Յովսէփ կաթողիկոսի կեանքի գլխաւոր անոթերի վրայ: Կռուսի օրագրումն էլ մէ քանի բան էր տպած Յովսէփ կաթողիկոսի վրայ: Էլի զանազան տեղեկութիւններ ենք գտնում Դաւիթ կաթողիկոսի դէմ գրած Մանուէլ վարդապետի թղթերումը: Պէտք է իմացած, որ Մանուէլ վարդապետը, Եփրեմ և Ներսէս արքեպիսկոպոսները, որնոր յետոյ կաթողիկոս դառան՝ Գանիէլ կաթողիկոսի կողմն էին ու Դաւիթ կաթողիկոսի և նրա պաշտպանների սաստիկ թշնամի: Որովհետև Յովսէփ կաթողիկոսի վրայ ասում էին, թէ նա ցանկութիւն ունէր, որ Դաւիթը՝ կաթողիկոս դառնայ նրա

մահուան յետոյ, էս պատճառով Դանիէլ կաթողիկոսի մարդիքը Յովսէփ կաթողիկոսին աւելի չէին սիրում: Աբանը բանց գրուածքը պիտի առաջ լաւ ծանրութեթ եւ անենք, իստում ընդունենք: Մեր բանը չէ՝ վճռել էստեղ Դաւիթ և Դանիէլ կաթողիկոսների վէճերը, բայց չպէտք է մոռանանք, որ Դանիէլի ընտրուելով՝ Նփրեմը մնում էր բոլոր Ռուսաստանի Հայոց արքեպիսկոպոս, իսկ Դաւիթի ընտրվելով, պաշտօնը պիտի ստանար Գրիգոր եպիսկոպոսը, որն որ Յովսէփ կաթողիկոսի մարդն էր: Ժողովուրդի գրած թղթերին էլ աւելի չե կարելի հաւատալ, պատճառ որ առաջվայ ժամանակ ժողովուրդը ըստ մեծի մասին նրա կողմն էր պահում, ով որ իրանց վեճակումը կառավարիչ էր: Վիճակաւորը ամէն ժամանակ մեծ ազդեցութիւն ունէր հասարակութեան վրայ, ու նրա համա շատ հնշտ բան էր մէկ թուղթ գրել աւա ժողովուրդին: Մանուէլ վարդապետի պրվածքումը մէկ հետաքրքիր բան ենք գտնում, որ եթէ ճշմարիտ ըլնի, պիտի շատ զգուշացնի մեզ ժողովուրդի ամէն գրած թղթին հաւատալուց: Հօրէս ինչ են ասում Նրեանցիք և Նշմիածնի միաբանները մէկ թղթումը՝ որ գրած է էն ժամանակներին. «ինչ որ ուզում է Գրիգոր եպիսկոպոսը՝ էն անել է տալի մեզ, եթէ հրամայում է ձեռք քաշել մենք չենք կարող աւել՝ չենք ուզում մեր կեանքը ու մահը նրա ձեռքին է, ուզում է՝ կեանք կը տայ, ուզում է՝ մահ: Շատից նա մահուորը խել է, շատի մահուորն էլ փորել է տվել և էս մահուորներով ինչ թուղթ որ ուզում է՝ մըհրում է և որ տեղ էլ որ ուզում է՝ դրկում»: Էհնց էդպէս էլ կարող էին ժաժ գալ և Դանիէլ կաթողիկոսի մարդիքը: Մանուէլ վարդապետը ասում է՝ թէ մէկ ուրիշ գրուածք էլ ունէ, որ տեղ որ դուս է բերում Յովսէփի և Գրիգորի արած բաները, նմանապէս ասում է, որ մէկ Զմիւռնացի Մագոր Զաքարեան խօճեանց նմանապէս գրվածք ունէ դրանց վրայ: Մենք չենք կարդացել էս վերջի երկու շարադրութիւնները, լաւ կը ընենք՝ ով որ ունէ՝ լուս դցի, որ կարողանանք իմանալ՝ թէ ինչ նոր բաներ են ասում Դանիէլ կաթողիկոսի պաշտպանները: Սարգիս եպիսկոպոսը իր ճանապարհորդութեան երկրորդ հատորումը 36 երեսումը ասում է՝ թէ Պարսկաստանի և Վրաստանի

նի թաղաւորների գրած թղթերը Յովսէփ կաթողիկոսի առնուով իրա մօլ են գտնվում, վերջումն էլ երեք թուղթ է ստացում. մէկը վրացոց Գէորգ թագաւորի թուղթն է՝ 1800 թվին գրուած յունիսի տասին, որ տեղ թագաւորը խրատ է տալի նրան ուղղակի չգնալ Էջմիածին, այլ առաջ դնալ Ստամբուլ. երկրորդ թուղթը Դաւիթ պարնի որդու գիրն է, որնոր Մողղոկից է գրած 1798 թվին մայիսի 13, որ տեղ որ Դաւիթ պարնի որդին խօսում է իր սեփական գործերի վրայ, վերջումը խնդրում է մէկ յանձնարարութիւն կատարել և իր հօրը գրել իրա մասին. երրորդ թուղթը Գէորգ պարնի որդուն է՝ օգոստոսի 50 գրած 1798 թվին Թէլավից, որ տեղ որ խնդրում է Կուրակինի և Բէղբօրօյկոյի հետ խօսել վրաստանի գործերի մասին : Սարգիս եպիսկոպոսը ասում է, որ մէկէլ թղթերը պահում է պատմութեան համար : Ելն շատ նիւթեր կարելի է հաւաքել դէս ու դէն, մանաւանդ հին մարդկերանցից՝ որնոր տեսած են Յովսէփ կաթողիկոսին : Մեր քաղաքումը կայ մէկ պատուելի ծեր մարդ՝ որնոր ճանաչում է էլն Յովսէփ կաթողիկոսին. էս մարդը Գրիգոր Վասիլէ Շէրգիլեանցն է, որնոր շատ հետաքրքիր բաներ է պատմում Յովսէփ կաթողիկոսի վրայ. օրինակի համար ասենք, նա պատմում է, որ Յիցիանովը չէր սիրում Յովսէփ կաթողիկոսին, որովհետեւ Յիցիանովը երեւել Սուվորովն աղիւտանաւ ընելով՝ մէկ անգամ կաթողիկոսի անցկենալու վախտ, նրան իրա զօրքով պատիւ չի տվել, և էտուր համար Յիցիանովին Սուվորովը պատժել է : Էս յօդուածքը գրելիս՝ մենք ունէինք Արղութեանց ցեղի ազգաբանութիւնը, տէրութիւնիցը հաստատած, բայց ափսոս՝ որ մէ քանի բան պակաս է :

Իշխան Արղութեանց ցեղը դուս են բերում հին Պարսի թագաւորից, որնոր կոչվում էր Արտաշէս երկայնաբաղուկ, էս պատճառով էլ Արղութեանց ազգը աւելի անուն ունէ՝ երկայնաբաղուկ, զօլօրուկի. էս է երեւի պատճառը, որ Մանուէլ վաղապետը իր թղթերումը մէկ քանի տեղ արհամարհանքով կոչում է Յովսէփ կաթողիկոսին՝ տաճիկ Շիօշի որդի Յովսէփ արքեպիսկոպոս :

Յովսէփ կաթողիկոսը, ինչպէս երևում է Արղութեանց

ցեղի ազգաբանութիւնիցը, Շիօշ բէգի որդին էր և ունէր երկու եղբայր՝ Մովսէս և Բէժահն: Մովսէսը մէկ որդի ունէր Զաքարիայ՝ որնոր Ռուսաց երևելի զօրապետի Մովսէս իշխանի և Յովհաննէս իշխանի հայրն էր: Բէժահնը, ինչպէս վերելումը յիշուած ազգաբանութիւնումը ասած է, ունէր երկու որդի՝ Դաւիթ և Նիկողոս: Իր յիշատակարանումը Յովսէփ կաթողիկոսը ասում է՝ թէ ինքը Ռուսաստանում էլաժ ժամանակը իր հետ ունէր իր եղբօր որդուն, որին էլ որ կոչում է Բարսեղ: Ընթիմանում՝ ինչպէս է, որ ազգաբանութեան մէջ թողած է էօ անունը: Собрание актов անունով գրքումը առաջին հատորումը 226 երեսին կարդում ենք՝ որ տիտուլեարնի Սովետնիկ Վասիլի Բէժահնիչ Արղութեանցը 1801 թվին ապրիլի հինգին վեր է առել իշխան Արղութեանց ցեղի գերբի երեսը: Էլէ էն գրքումը երրորդ հատուրի մէջ 330 երեսին կարդում ենք, թէ Յովսէփ կաթողիկոսը ունէր մէկ եղբօր որդի, որին սր կոչում են Դաւիթ Բօրիսիչ: Բօրիսիչ երևում է Բէժահնիչի տեղն է, ինչպէս Կարապետ անուն թարգմանում են Ռսերէն Կարպ, Կարլ, Գեօրասիմ և այլն: Էլէ իմացել ենք, որ Բէժահնը ունեցել է էլ մէկ որդի՝ Սոլոմոն անունով: Եթէ էս ամէն տեղեկութիւնները ճշմարիտ են, նշանակում է, Բէժահնը ունեցել է չորս որդի՝ Դաւիթ, Նիկողոս, Բարսեղ և Սոլոմոն: Ազգաբանութեան մէջ կարդում ենք՝ որ Դաւիթից ծնվեցան Յովսէփ և Նիկողոս, իսկ Նիկողոսից Բարսեղ և Ալէքսանդր:

Յովսէփ կաթողիկոսը ծնվել է Թիֆլուզումը 1743 թվին: Նա կոչվում է Սանահնեցի, ոչ թէ էնդուր համար՝ որ էն տեղ ծնված ընի, այլ որովհետեւ Արղութեանց ցեղը էնտեղ հնուց մուրք ունէ: Էնպէս ժամանակ մէկ քաղաքի կամ գաւառի անունը աւելցնում են էնդուր միայն, որ նշանակեն՝ թէ որ միաբանութիւնիցն է էլել փլան փլան եպիսկոպոսը կամ կաթողիկոսը: օրինակի համար ասենք՝ էս մաքով Սարգիս եպիսկոպոսը կոչվում է Սանահնեցի, թէպէտ յայտնի է՝ որ նա Սանահնի չէ ծնվել: Իսկ Դաւիթ կաթողիկոսը կոչվում է Էնաղէտցի, Բօրչալուեցի, Թիֆլիզեցի, որքան որ մենք գիտենք՝ ծնվելու տեղի կամ գաւառի անունով: Երիտառարդութեան ժամանակ Յովսէփ կաթողիկոսը հոգեւորական է դառել: յայտ-

նի է, որ առաջ մեծ գերդաստաններըն էլ զնում էին՝ հոգեւորական էին դառնում, հիմիկ է, որ ոչով լայիղ չի անում: Յայտնի չէ մեղ՝ թէ որ տեղ է ուսում առել Յովսէփ կաթուղիկոսը, Եջմիածին, թէ Թիֆլիզ: պէտք է կարծել, որ Եջմիածին, որովհետեւ ամէն ժամանակ Սիմէոն կաթուղիկոսի վրայ մեծ պատուով ու սիրով է խօսում և իր թղթերումը նրան իր հոգևոր հայր է կանչում: Չենք գիտում՝ թէ նրա ժամանակ ինչ էին սովորացնում Եջմիածնումը, բայց պէտք է կարծել, որ էն տեղ էն ձևով էին սովորացնում, ինչպէս որ թագիաթիանքը նկարագրում է իր ձանադարհորդութիւն ի Հայաստան ասած դրքի մէջ: Եթէ Յովսէփ կաթուղիկոսի յիշատակարանը վեր առնենք և նրանով դատենք էն ժամանակվայ ուսումի ձևը, կարող ենք ասել, որ հայկաբանութիւնը էն վախտ աւելի չէր ծաղկում: Հայոց լեզուի կանոնի դէմ բաւական սխալներ կայ, բայց կարելի է՝ ինքը չէ գրել, կամ թէ՛ և թէ ինքն է գրել շտապելով է գրել:

1773 թվին երեսուն տարեկան Յովսէփ արքեպիսկոպոսը զնաց Ռուսաստան Սիմէոն կաթուղիկոսի կնոջ ակով: Դեռ **1766** թվին Սիմէոն կաթուղիկոսը Դաւիթ վարդապետին ղրղել էր մեծ Եկատերինէ թաղուհու մօտ և խնդրել էր, որ Ռուսաստանումը բնակված Հայերը և կեղեցական գործերի մասին կախված ընեն Եջմիածնի կաթուղիկոսից ու կաթուղիկոսը իրաւունք ունենայ ղրղել էն տեղ վիճակաւոր արքեպիսկոպոս: Թաւազին կատարեց Սիմէոն կաթուղիկոսի խնդրքը և ընծաներով յետ ղրղեց Դաւիթ վարդապետին: Էս հրամանի զօրութիւնով կաթուղիկոսը ղրղեց Յովսէփ արքեպիսկոպոսին Ռուսաստան **1773** թվին:

Յայտնի է, որ Ռուսաստանումը վաղուց շատ Հայեր կային: Ամէն տեղ որ տեղ՝ որ բնակվում էին, նրանք շինում էին եկեղեցիք: Ռուսաց Թագաւորները նրանց լաւ ընդունում էին և զանազան իրաւունքներ էին տալի: Ռուսաց Թագաւորական արխիվի հին հին գործերից երևում է, որ զաւիկ օրը առնուտըր անող Հայերը գնում էին Թագաւորին շնորհաւորելու: Նմանապէս երևում է, որ առաջվայ ժամանակ Ռուսաստանի

Հայերի գործերը ոչ թէ հասարակ դատաստանատներումն էին վճռում, այլ պատգովի, դեսպանական ասած պրիկազումը¹ :

Շատ անգ, որ անգոր կկեղեցի չէ էլի՛, Հայերը շատ նուրբ թիւնն պիտի քաշէլէին : 1666 թվի գործից երևում է, որ Ստեփան Մովսէսեանցը և մօտ քառասուն Հայ խնդիրք են տվել թագաւորին, որ նրանց հրաման տայ Ռուսաց կկեղեցի ման դալ, խոստովանվել և հաղորդվել Ռուսաց քահանաների մօտ, որովհետև նրանք, իբրև քրիստոնեայ, վախենում էին մեռնել առանց ապաշխարութեան օտարութեան մէջ² :

Յայտնի չէ մեզ, թէ ինչպէս էին կառավարվում Ռուսաստանի Հայերը կկեղեցական գործերի մասին մինչև Յովսէփ արքեպիսկոպոսի Ռուսաստան դալը, նմանապէս չենք իմանում, թէ որ անգաց էին դալիս մեր հոգևորականները, Եջմիածնից, թէ ուրիշ տեղերից և թէ կկեղեցիներումը դանձանակ ման էին ածում Եջմիածնի համար, թէ չէ : Միայն դանում ենք մէքանի կտոր կտոր տեղեկութիւններ, որ աւելորդ չենք համարում բերել էս անգ :

1709 թվի գործից երևում է, որ կաթուղիկոսը ղրկել է Ռուսաստան Յովակիմ արքեպիսկոպոսի ձեռքով մեռն Հայերի համար³ :

1710 թվի գործից երևում է, որ Յովակիմ արքեպիսկոպոսը մնում է Ռուսաստան, խնդրում է բնակվելու անդ և ուռնիկ : Էս արքեպիսկոպոսը վախճանվում է Ղազան քաղաքումը 1720 թվին⁴ : 1714 թվի գործից երևում է, որ Հայոց արքեպիսկոպոսը, չէ ասած որը, կարծեմ որ Մինասը, խնդրել է Բարսեղ Դաճկիրովին, որ հրաման տան Պետերբուրգումը Հայոց կկեղեցի շինելու : 1716 թվի գործից երևում է, որ Մինաս արքեպիսկոպոսին հրաման տվին Մոսկովումը Հայոց կկեղեցի շինել : Ուրիշ դատաստանական գործերից երևում է, որ Մինաս արքեպիսկոպոսը 1701 թվից սկսած, Ռուսաստանումն է կենում և տէրութեանը զանազան ծառայութիւններ է ա-

1 Собрание актовъ, 1 մասը, երես 336, 354.

2 Собрание актовъ, 1 մասը, երես 328.

3 Собрание актовъ, 1 մասը, երես 355.

4 Собрание актовъ, 1 մասը, երես 361, 355.

նում. գանազան ճանապարհներ է նշանց տալի. թէ լինչպէս
 Հայերին կարելի է բերել Ռուսաց հովանաւորութեան տակը,
 ինքը գնում է Պարսկաստան. սա էն եպիսկոպոսն էր, որնոր Գի
 Սարգիս Գիլանէնցից գանազան տեղեկութիւններ էր ստանում
 Պարսկաստանից: Կռուէկ օրադրումը փետրվարի համարումը
 սխալ տպած էր, որ Մինաս արքեպիսկոպոսը տանուեթներորդ
 դարի սկզբումն էր կենում: **1719** թվի գործից երևում է,
 որ Մինաս արքեպիսկոպոսը հրաման է խնդրել Աշտարխան և
 Մոսկով Հայոց եկեղեցի շինել: **1720** թվի գործից երևում
 է, որ Մինասը ռոճիկ էր ստանում: **1722** թվի գործից ե-
 րևում է, որ Մինաս արքեպիսկոպոսը խնդրում է կառավարու-
 թիւնից, որ հրաման տան Հայերին ազատ կենալ Ռուսաստա-
 նումը և բնակվելու տեղ ջոգեն նրանց համար Թերեքի վը-
 րայ, որ կարողանան առուտուր ծաղկեցնել էն տեղերանքումը:
1726 թվի գործից երևում է, որ Մինաս արքեպիսկոպոսը
 խնդրել է, որ տէրութիւնը վարձատրի նրան և ռոճիկ նշանակի
 նրան էն բաների համար, որնոր նա արել է Հայոց համար. նը-
 մանապէս խնդրել է, որ նրան հրաման տան էն տեղերքը ա-
 զատ ման գալ, որ տեղ որ Հայերը կենում էին: **1728** թվի
 գործից երևում է, որ Մինասը խնդրել է, որ Աշտարխանի մօ-
 տերումը նրան տեղ տան, որ կարողանայ նա բնակեցնել էն տեղ
 Հայերին: **1730** թվի գործից երևում է, որ Մինասը խընդ-
 րել է Աննա Թափուհուն, որ իր քաջած աշխատանքի հա-
 մար նրան վարձատրեն և տեղ տան նրան Աշտարխանի և Սուրբ
 Խաչ անուհով բերթի մօտ, որ էն տեղ կարողանայ Հայոց վա-
 ճառականներին բնակեցնել և հրաման տան էն տեղ երկու
 եկեղեցի շինել: **1740** թվի գործից երևում է, որ Մինաս
 արքեպիսկոպոսը խնդրել է, որ նրան ծերութեան և հիւան-
 դութեան պատճառով ազատեն իր պաշտոնից¹:

1733 թվի գործից երևում է, որ Ստեփաննոս Անանեանց
 արքեպիսկոպոսը խնդրել է՝ որ վերառեսուէլ նշանակեն նրան
 Աշտարխանումը իր շինած եկեղեցու վրայ և ռոճիկ նշանա-
 կեն նրան: **1749** թվի գործից երևում է, որ Ստեփաննոս արք-

¹ Собрание актов, 1 մասը, երես 355, 358, 361, 362, 367, 368.

եպիսկոպոսը խնդրել է, որ նրան նշանակեն Աշտարխան Բարսեղ եպիսկոպոսի տեղը¹ :

Սիմէոն կաթողիկոսը Յովսէփ արքեպիսկոպոսին ղրկելով Ռուսաստան՝ էն էլ կունենար մտքումը, որ էն տեղ մարդ ունենայ, որի ձեռքով որ կարելի ընի նեղ տեղ ընկած ժամանակ պաշտպանութիւն ճարել Պարսիկների և ուրիշ ազգերի դէմ : Առաջ էլ մեր կաթողիկոսները ամէն հնար գործ են դրել, որ աղատեն ազգը և աթոռը նրանց հալածանքից : Թէպէտ էն էլ պէտք է տանք, որ էդ հալածանքը՝ որոնք քաշում էին Հայերը, Պարսիկները և ուրիշ ազգերն էլ քաշում էին, և թէ Հայերը լստ մեծի մասին իրանք էլ էնպէս բաներ էին անում, որ ոչ մի տէրութիւն չէր համբերի նրանց արած բաներին :

Հիմիկ տեսնենք՝ ի՞նչպէս կատարեց իր պաշտօնը Յովսէփ արքեպիսկոպոսը, թէ եկեղեցի կառավարելումը և թէ ազգի և աթոռի պաշտպանելումը : Զարմանում է մարդ՝ ի՞նչպէս կարողացաւ Յովսէփ արքեպիսկոպոսը իր բանը առաջ տանել : Փոքր ժամանակումը նա յայտնի դառաւ մեծ Եկատերինէ թագուհուն, Պալլ Պետրովիչին, Պատեօմկինին, Սուվորովին, Բումբանցովին և մէկէլ երեւելի մարդկերանց և ամէնուն էլ իր գլուխ սիրել տվեց : Եկատերինէ թագուհին շուտով հասկացաւ նրա արժանաւորութիւնը և էս պատճառով նրա համար շատ թանկագին ընծաներ է ղրկել՝ բրիլանտի պանադի, ալմադի խաչ վեղարի համար և արքեպիսկոպոսական մանախա : Չեմ դիտում՝ յայտնի է մեր կարդացողներին՝ թէ ի՞նչ մարդիք են էլել Պատեօմկինը, Սուվորովը և Բումբանցովը, մանաւանդ՝ թէ ի՞նչ մեծ ձայն ունէր տէրութեան մէջ Պատեօմկինը : Զարմանալի բան է՝ ի՞նչպէս Յովսէփ արքեպիսկոպոսը սիրել տվեց իր գլուխը Պատեօմկինին, ինչ որ խնդրել էր, ամէնը կատարում էր Պատեօմկինը : Մէկ անգամ Ռուսները խլել էին Հայերից Մոզդոկի սուրբ Ստեփաննոսի եկեղեցին, բայց Յովսէփ արքեպիսկոպոսը մէկ դիր դրեց նրա մօտ, և նա խիցոյն հրամայեց յետ դարձնել էդ եկեղեցին : Յովսէփի շնորհքն էր, որ Պատեօմկինը Հայոց առանձին բարերար դառաւ : Տեսէք՝ ի՞նչ է ասում Յովսէփ արքեպիսկոպոսը, երբ որ իմանում է նրա մահը. «Մենք

¹ Собрание актовъ, 1 մասը, երես 371, 374.

կորուսաք անգին խնամական մեր և զյատուկ բարերարն, այժմ ձեռն ի ծնօտին նստեալ կամք մերային ազգօք, ակնուշխարհով վերին օգնութեան և այցելութեան Աստուծոյ: Սուս վերսկիւն էլ շատ սիրում էր Յովսէփ արքեպիսկոպոսին, շատ անգամ զալիս էր նրա մօտ, հարցութորձ էր անում Վրաստանի, Պարսկաստանի գրողութեան վրայ, նրանց զօրքի վրայ, Հայոց մեղիքների վրայ, և լսածը գրում էր: Մեծ բան է, որ էսպիսի երևելի և զիտուն մարդուն նա կարողանում էր մէկնոր տեղեկութիւն տալ: Հասարակ բաներով նա չէր կարող զբաւել էս զօրապետի ուշքն ու միտքը: Հօրէս ի՞նչ է ասում Յովսէփ կաթողիկոսը Սուսի վրայ. «Յուսադութիւն արար յոյժ որպէս թէ նորոգելոց իցեն ի մեզ իշխանութիւն ինչ . . . և ինքն յեա բազում հարցաքննութեանցն զկեցութենէ ազգին մերոյ և սրբոյ աթոռոյն և զկաթողիկոսին մեր թախանձելն նորոգել ի մեզ պատասխանեաց՝ թէ կարելի է, բայց պիտոյ է պատրիարզին ձեր քանեօք իշխանօք խնդիր ի գործած իցեն վասն փրկութեան ձերոյ, որ մեք այնու ի յօգնութիւն ձեր եկեացուք»: Բումբանցովը էնպէս պատվում էր Յովսէփ արքեպիսկոպոսին, որ մէկ նամակումը նրան ասում է՝ բարձր սրբալան աղքատիկոպոս, իմ առանձին բարերար (преосвященнейшій Архипастырѣ, мой особенный благодѣтель): Յովսէփ արքեպիսկոպոսի շնորհքն է, որ գրաֆ Պլատոն Զուբովը յայտնեց՝ թէ Հայոց ազգը ամէն տեսակ արժանի է սիրելու և պատվելու, և թէ նա պատրաստ է ամէն ժամանակ բաւականութիւն տալ էդ ազգին ամէն կարիքումը: Գնեւրալ ազիւտանա իշխան Գաղարինը 1801 թվին փետրվարի 16 Յովսէփ կաթողիկոսին մէկ էնպիսի նամակ է գրում՝ որ կարծես՝ թէ ամէն հասարակ բանումն էլ ուղղում էին նրան դուր գալ: «Փրանգստանից բուրգանի զինի են ուղարկել, գրում է նա, ձեր անուշնով թագաւորը հրամայեց ինձ գրել ձեր վեհափառութեան մօտ և իմանալ՝ ո՞ր տեղ և ի՞նչպէս անենք, որ էդ գինին անխախտ հասնի ձեզ: Խնդրեմ իմաց անէք ինձ, որ կարողանամ շուտով յայտնել էդ բանը թագաւորին»: Օգեստի մօտ չորս գիւղ բաշխեց նրան Պօղոս թագաւորը, որնոր Յովսէփ արքե-

Յայնսկոպոսը հաստատեց իր մօտիկ ազգականների անունով : Ռուսաց հոգեորականներին էլ շատ սիրել տվեց նա իր զլուխը, ամա էն բաներով չէ՝ ի՞նչ բաներով որ ուրիշներն են սիրել տալի : Մէկ անգամ Մոսկովի երևելի Ֆիտրուպոլիա Պըլատովը հրաւիրեց նրան՝ արքեպիսկոպոսութեան ժամանակ Ուսպէնսկի տաճ սորոր : «Յոյժ յարգեցին զմեզ, ասում է նա, ի սեղանոջն ամենայն դասին հոգեորականաց, և բազմաց խայթ էր լեալ անխմատ և դռնհիկ ժողովրդեան մուտն մեր անդր, և զբազում թունալի նետս էին արձակեալ առ սրբազան Պլատոն արքեպիսկոպոսն վասն տեսանելոյն զմեզ ի սեղանոջ, որպէս ինքն և այլք պատմեցին զմեզ, զի միտք նոցա զհետ էր ընթացեալ առասպեալ և անխիղճ գրեցելոց զըրպարութեանցն Յունաց որ առ մեզ : Նրանից յետոյ եփրեմ արքեպիսկոպոսին էլ 1801 թվին Մոսկով էլած ժամանակ տեղ են տվել սորորումը Ռուսաց եպիսկոպոսների շարքումը, և նա մեծ զարմանքով է պատմում էդ բանը ասելով՝ «որ բընաւ ոչինչ ժամանակի յազգէ մերմէ արքեպիսկոպոս չէր պատահեալ այսպիսոյ բարեբաղդութեան» : Բայց ինչպէս որ վերեւում ասացինք՝ Յովսէփ արքեպիսկոպոսը նրանից առաջ աւելի պատիւ է ստացել Ռուսաց հոգեորականներից :

Ծանօթանալով էն ժամանակվայ երևելի մարդկերանց հետ, Յովսէփ կաթողիկոսը ամէն ժամանակ հետևում էր Ռուսաստանին ծառայելով՝ ազգին էլ, աթոռին էլ օգուտ բերել : Երկու կողմին էլ հաւատարիմ ճշմարիտ ծառայ էր : Հեռանալով աթոռից և էնքան տարի Ռուսաստան բնակվելով՝ նա չէր մոռանում սուրբ Եջմիածինը : Յանկանալով աւելացնել աթոռի զօրութիւնը, նա տէրութիւնից հրաման դուս բերեց՝ որ ուրիշ տեղից առանց Եջմիածնի կաթողիկոսի կոնդակի ոչ մի հոգեորական Ռուսաստան չըմանի : Նմանապէս թուղթ դրել տվեց Ստամբուլ Ռուսաց դեսպանին՝ որ նա ամէն ժամանակ օգնութիւն տայ կաթողիկոսից էն տեղ զոգած մարդկերանց : Տեսնելով որ Ռուսաստանի ժողովուրդը բաւական ծուռ դատողութիւն ունէ Հայոց հաւատի վրայ և նրանց զանազան անուններ է տալի՝ օրինակի համար ասենք՝ Արիոսի աշակերտ, Նեստորի աշակերտ և հասկանալով որ մէքանի տէրութիւն-

ներում հաւատը մեծ ազդեցութիւն ունէ քաղաքական օրէնքների վրայ, նա թարգմանելէ տալի հայերէնից ռուսերէն Հայոց եկեղեցու դաւանութիւնը՝ այսինքն էն աղօթքը, որ մեր եկեղեցումը կարդվում է և սկսվում է էս բառերով՝ խոստովանիմ և հաւատամ, յետոյ էս աղօթքի ընդարձակ մեկնութիւնը, նրմանապէս մեր եկեղեցու մկրտութեան և դրոշմի կարգը և պատարագամատոյցը, և տպում է Պետերբուրգ 1799 թվին էս անունով. «Неповѣданіе христіанской вѣры Армянскои церкви»: Էդ թարգմանութիւնից յետոյ, ինչպէս որ գիտենք, Հայոց հաւատը Ռուսաց ազգի մէջ աւելի փառք և արժանաւորութիւն ստացաւ. և էդ քիչ բան չէ, որովհետեւ պիտի գիտենանք, ինչքան դժուար էր Հայոց համար իր հաւատի վրայ ուրիշներէից վատ խօսք լսել: Նրա բերած օգուտները շատ են, ինչպէս եկեղեցուն, էնպէս էլ ազգին. չատ բաները լուռ են մնացել մեզ համար, աւելի էնդուր՝ որ նրա արած բաներին գրող չէ էլել: Նրանից առաջ Աշտարխանի Հայերի մօտ եկիլ էին եղուիտներ, ռուսամեարան էին բաց արել Հայերի համար, Հայի քահանաների պէս սկսել էին զգեստվել իրանց եկեղեցում, հայերէն ժամ ասել և էսպէս լուսաւորչի անունով Հայերին պապի կողմն էին քաշում, ամա նրանք չէին գիտում, թէ ինչպէսի արի հովիւ ունէ լուսաւորչի հաւատը: Յովսէփը շատ լաւ հասկացաւ նրանց միտքն և արտոմունքը, ժամանակ չըկորցնելով 1780 թվին հրաման խնդրեց Պօտեօմկինից, որ Աշտարխանի պատերները իրանց քարոզը վերջացնեն, Հայոց եկեղեցու զգեստը, թէ լեզուն իրանց եկեղեցումը չըբանացնեն: Նրանից յետոյ մենք գիտենք, որ կաթօլիկի հաւատն էլ չըտարածվեցաւ Աշտարխանի Հայերի մէջ և Հայերը սկսեցին ատել Հայ կաթօլիկներին, ծաղր էին անում նրանց հաւատը և նրանց աղտարմայ էին կանչում: Տաճկաստանի և Պարսկաստանի պատերազմների ժամանակ Յովսէփ արքեպիսկոպոսը օգնում է տէրութեանը իրա խելքով ու գիտութիւնով. հէնց նրա անունն էլ մեծ ազդեցութիւն է ունենում քրիստոնեայ ժողովուրդի վրայ, էս ակդ էլ միշտ նա իր աչքի առաջն է ունեցել սուրբ աթոռի և ազգի օգուտը: Երբ որ վրաստանը Ռուսաց հովանաւորութեան տակն էր ուղղում մանկ:

Յովսէփը էս բանու մն էլ մասնակից է ընում, Վրաստանի թագաւորին օգնում է և կատարում է նրա յանձնարարութիւնները : Նա գիտէր՝ ինչ հալածանք և նեղութիւն քաշեց ազգը աղա Մահմետ խանի վախտը. ազգի և եկեղեցու աղատութիւնը նրա մոքից չէր գնում : Պատերազմներից յետոյ խեղճ ձայերի համար կերակուր է ճարում, ետալըւներու համար դեղ է դանում, յետոյ աշխատում է բնակվելու տեղ գտնել նրանց համար, նոր իրաւունքներ է ուզում նրանց համար տէրութիւնից և ստանում է, եկեղեցիք և վանք է շինում, հետեւում է՝ որ ժողովուրդը իր օրէնքներով կառավարվի, իր դատաստանատուն ունենայ, հոգւոր դատաստանատուներ է սարքում, Նախիջևանումը տպարան է շինում, ուսումնարան է կարգում : մէկ խօսքով ոչ մի բան ձայերի մասին առանց նրան առաջ չէ գնում, և ամէն բանումն ոչ Ռուսաստանի օգուտն էր մտանում, ոչ սուրբ աթոռի :

Հիմիկ մէ մէկ ասենք՝ ինչ գործեր է արել Յովսէփ արքեպիսկոպոսը : Նրա յիշատակարանը սկսվում է էնդով, որ պատմում է՝ թէ ինչպէս ձայերին դուրս բերին Ղրիմից 1778 թվին : Որ աւելի հասկանալի ընի յիշատակարանի պատմած բաները, մենք հարկաւոր ենք համարում ասել՝ թէ եկատերինէ մեծ թագուհու ժամանակ երկու պատերազմ է էլել Տաճկաստանի հետ : Առաջի պատերազմը սկսվեցաւ էնդով, որ Ֆրանսիան՝ կամենալով լեհացոյց օգնել Ռուսաց դէմ, հետեւեցաւ, որ սուլթան Մուստաֆէն պատերազմ սկսի եկատերինէ թագուհու հետ : Մուստաֆէն յայտնեց 1769 թվին պատերազմ, էն պատճառ բերելով, որ զազախները էրել էին մէկ թաթարի գիւղ՝ Բալթու անունով : Թէպէտ Ռուսաց կառավարութիւնը յայտնեց, որ պատրաստ է բաւականութիւն տալ Տաճկաստանին, բայց սուլթանը սրան մտիկ չտվեց և Ռուսաց զեապանին բերթը գցեց, իսկ Ղրիմի խանը հրաման ստացաւ դնալ մտնել զօրքով Ռուսի նահանգները : Ռուսաց զօրապետը իշխան Ալեքսանդր Գօլիցինը յաղթեց թուրքերին Խօտինի մօտ և վեր առաւ էս բերթը, յետոյ Գօլիցինի տեղ նշանակեցին Բումբանցովին, որնոր 1770 թվին մայիս ամսին գնաց թուրքերի առաջ, յուսիսին հալածեց նրանց

Պրուս գետից և դիպի առաջ էր գնում, յուլիսի եօթին նա վրայ տվեց Լարգի գետի մօտ Ղրիմի խանի վրայ և խնց նրա բանակը : Յուլիսի 21 վեդիրին ջարդու փշոք արեց Կադուլի մօտ : Ծովի վրայ էլ Ռուսի զօրքը մեծ յաղթութիւն արաւ թուրքերի վրայ, ու քիչ մնաց՝ Ռուսի նաւերը չանցկացան Գարգանէլը : Միւս կողմանէ իշխան Վասիլի Դօլգորուկին երկու շաբթումը վէկալաւ Ղրիմի : Էս պատերազմի վերջն էն էր, որ յուլիսի տասին 1774 թվին Կուչուկ Կայնարդջում Ռուսաստանը հաշտվեցաւ թուրքաստանի հետ. պայմաններից մէկն էն էր, որ թուրքաստանը ազատէ իր իշխանութեան տակից Ղրիմի, Բուդժակի և Ղուբանի թաթարներին և խոստանայ նրանց անկախ մարդիկ համարել : Բայ ի սրանից թուրքաստանը պէտք է տար Ռուսաստանին Ազով, Կերչ, Էնիկուլ և Կինբուրն : Որովհետեւ Ռուսաստանը միտք ունէր նորոգել Յուսուպ անուան թաւանակայ Ռուսաստանի առաջի մարդը՝ Պատեօմկինը համարեց՝ որ էս բանի կատարելու համար հարկաւոր է անպատճառ Ղրիմը վեր առնել և միաւորել Ռուսաստանի հետ : Վերջապէս բանը էնպով վերջացաւ՝ որ զանազան յաղթութիւններից յետոյ 1783 թվին գեկտեմբերի 28 Ղրիմը շինեցին Ռուսաց նահանգ : Էս նոր վեր առած երկիրները յանձնեցին Պատեօմկինին, և նա խնդրեց թաւուհուն 1787 թվին դալ տեսնել նոր Ռուսաստանը : Էն տարի էլ թուրքաստանը՝ Ինգլիզի և Պրուսացոյ խօսքով, զանազան պատճառներ բերելով, յայտնեց Ռուսաստանին՝ պատերազմ : Զօրքի մեծը Պատեօմկինն էր, մէկ կողմիցն էլ Բուսկանցովն էր : Սուկորովը յաղթեց թուրքերին, երբ նրանք էկան՝ ուղղումէին վեր առնել Ղրիմը : Պատեօմկինը ուղղում էր անպատճառ վեր առնել Յակովը, որ թուրքերն էլ չխորդանան Ղրիմի վրայ. դալ վերջապէս 1788 թվին գեկտեմբերի 6 Յակովը վեր առան մեծ կոտորուծքով. քաղաքը տվին զինուորներին երեք օրով թաւանելու : 1789 թվին Սուվորովը թուրքերին յաղթեց Ֆոկչանի մօտ, յետոյ փոքր զօրքով յաղթեց թուրքերին Բիւնիկի մօտ, 1790 թվին նա վեր առաւ Իզմայլը :

Ղրիմի Հայերը 1778 թվին յուլիսի 16 Բախչասարայից

խնդիրք զբեկեցին՝ Եկատերինէ թաղուհու մօտ, որ իրանց վեր առնի իր հովանաւորութեան տակը : Եկատերինէ թաղուհին **1779** թվի հրովարտակով Ազովի գութերնիումը նրանց տեղ տվեց բնակվելու, էն տեղ որ տեղ որ հիմիկ Նոր Նախիջևան քաղաքն է, տաս տարով ամէն խարջից ազատեց, բռուսացի Պետրոս Մարկոսեանց վարդապետին նշանակեց առաջնորդ Ղըրիմից դուս էկած Հայերի վրայ, էն պայմանով որ նա կախված ըլնի Էջմիածնի կաթողիկոսից, նմանապէս էն հրովարտակով նրանց իրաւունք տվեց իրանց օրէնքով և սովորութիւններով կառավարվել, իրանց մաղխտորատ ունենալ : Մաղխտորատի վրայ կարելի էր գանդատ բերել Ազովի կուսակալի կառավարութեան : Էս բաներումը շատ օգնեց Հայերին Յովսէփ արքեպիսկոպոսը, և Պետրոս Մարկոսեանցի մահուան յետոյ՝ նրան յանձնեցին և դուս էկած Ղըրիմից Հայոց ժողովուրդը : Նա շատ զարդարեց Նախիջևանը և շատ եկեղեցի և վանք շինեց էն տեղ : **1788** թվին Պետերբուրգումը Գրիգոր Խալիլաբանցի տպարանը առաւ, որնոր ունէր ինն տեսակ Հայոց տառ և երկու տեսակ Ռուսի բերել տվեց Նախիջևան և էն տեղ բաց արաւ : Մեզ յայտնի չէ՝ թէ էս տպարանումը ինչ գրքեր են տպել : Մանուէլ վարդապետի թղթերից երևում է՝ որ Հնդկաստանից փող էին զրգել՝ որ Նախիջևան ուսումնարան բաց անեն : Երևում է՝ էս փողով ուսումնարան բաց արաւ Յովսէփ արքեպիսկոպոսը :

Երբ որ **1782** թվին խօսակցութիւն կար Վրաստան Ռուսաստանի հովանաւորութեան տակը վեր առնելու, Յովսէփ արքեպիսկոպոսը էս բանումը շատ օգնեց, որովհետեւ գիտէր երկրի հանգամանքները և շատ լաւ խորհուրդներ կարող էր տալ :

1787 թվին երբ որ պատերազմունէր Ռուսաստանը Թուրքաստանի հետ, նրան հրաւիրեցին Ռուսի բանակումը : Էս տեղ էլ շատ օգուտ բերեց իր գիտութիւնովը և էն անուշնովը, որնոր ունէր նա Մուլավիի, Վալախիի ու Բեսարաբիի քրիստոնեաների մէջ : Նրա խօսքով՝ նրանցից շատերը եկան տունով տեղով բնակվելու Դնէստրի վրայ Չեորնի և Չէրնիցա փոքր գետերի մէջ, որ տեղ Յովսէփ արքեպիսկոպոսը թաղու-

հաւ հրամանով 1792 թվին հիմնեց քաղաք և կոչեց քաղաքի անունը Գրիգորիոպոլ՝ Գրիգոր Լուսաւորչի անունով : Գրիգորիոպոլն Հայերն էլ ստացան Յովսէփի շնորհքով մեծ իրաւունքներ . քաղաքումը մագիստրատ բաց արին և իրաւունք ստացան՝ իրանց օրէնքներով և սովորութիւններով կառավարել իրանց գլուխը : Քաղաքական գանձարանից 46,781 ռուբլի 72 կոպ. տվին 325 տուն շինելու համար . 37,000 ռուբլի տվին եկեղեցի ու վանք շինելու համար . էս փողը Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռնին էր . 10,000 տվին տաս տարով դուքներ և բազալխանայ շինելու համար . 15,000 ռուբլի տվին կոնսիստոր շինելու համար և առաջնորդարան : 4000 տվին մագիստրատ շինելու համար : 2000 ռուբլի փոխ տվին զավախանէք և բաղնիս շինելու համար : 25,000 ռուբլի տվին մագիստրատին տասնուհինգ տարով տաւար, կարաղ առնելու համար . 30,000 մանէթ փոխ տվին տաս տարով անշահ առուտուրը ծաղկեցնելու համար : Գրիգորիոպոլն բնակիչներին յաւիտեան ազատելէն թեկրուտ վեր առնելուց և տան խարջից և պաստոյից : Բայց ով որ ուզում էր մանել ծառայութիւն՝ կարող էր : Բայ ի սրանից էլն շատ ուրիշ իրաւունքներ ստացան էս քաղաքի բնակիչները¹ : Պօղոս թաղաւորը 10,000 մանէթը դուքներ շինելու համար, 30,000 առուտուր ծաղկեցնելու համար, 25,000 տաւար, կարաղ առնելու համար 1799 թվին տարիցի 15 հրովարտակով բաշխեց Գրիգորիոպոլի բնակիչներին² : Պօղոս թաղաւորը Աշտարխանումը Հայոց կոնսիստոր հաստատեց, որնոր պիտի ունենար մէկ նախագահ վարդապետ, երեք անդամ աւագ քահանաներից, երկու սեկրետար, մէկը Ռուսաց լեզուի իմացողների համար, մէկն էլ Հայոց լեզուի իմացողների համար, չորս էլ զրադիր : Էս կոնսիստորի իշխանութեան տակը պիտի ըլնէին Պետերբուրգի, Մոսկովի, Աշտարխանի, Ղզլարի, Մոզդուկի, Ղրիմի, Գրիգորիոպոլի, Նախիջևանի, Ռուսաց Լեհաստանի, Դերբենտի և Մասկարի եկեղեցիները : Էս քաղաքների ամէն մէկն էլ պիտի ունեցելէր ջոկ իր համար հոգևոր կառավարութիւն :

1 Собрание актовъ, 1 մասը, երես 190.

2 Собрание актовъ, 1 մասը, երես 127.

Միւս քաղաքների իրաւունքների համար էլ շատ աշխատել է Յովսէփ արքեպիսկոպոսը :

Այդ Մահմետ խանի վրաստանի քանդելը նրա սիրտը շատ կտրեց, և նա ամէն տեսակ հետեւում է՝ որ Եկատերինէ թագուհին էն տեղ զօրք զբգի՝ վրաստանը ազատելու : Հօրէս ինչպէս մխիթարում է իշխան վոլոնսկին Յովսէփ կաթողիկոսին 1795 թվին զեկտեմբերի 12, երբ տեսնում է, որ նա նեղանում է՝ տեսնելով իր երկիրը քանդած և աւերած. «ինդրեմ՝ ձեր բարձր Սրբազնու թիւնը հաստատ մնալ և չըյուսահատվել, Աստուած ոգորմած է, Եկատերինէ մեծ թագուհին զօրեղ է, վրաստանը կը նորոգվի և նրա թշնամին կը կործանվի, կարելի է էլ իր անօրէնութիւնների խաթեր կը կորցնի իր մայրաքաղաքը և իր կարողութիւնը : Ճշմարիտ՝ որ մէքանի ժամանակից յետոյ Եկատերինէ թագուհին Ռուսի Ղօրք զբեց Պարսկաստան վալերեան Զուբովի հետ : Հօրէս ինչ է գրում Յովսէփ արքեպիսկոպոսին Պլատոն Զուբովը, որն որ Պոտեօմկինի մահուան յետոյ՝ Ռուսաստանի մէջ առաջի մարդն էր : «Ես ստացայ ձեր զրգած տեղեկութիւնները շաշաստանի վրայ և Հայաստանի հարեան. Պարսի նահանգների վրայ, նմանապէս էս երկիրների աշխարհացոյցը : Խնդրեմ՝ ձեր բարձր Սրբազնութիւնը դնալ Մոզդոկ իմ եղբոր հետ տեսնվելու, որ կարողանաք խօսելու նրա հետ Պարսկաստանի և մէկէլ զրա հարեան ազգերի մասին, որերի վրայ դուք ունէք ընդարձակ և մեծ տեղեկութիւններ : Յովսէփ արքեպիսկոպոսը գնում է էն տեղ, և հազար մանէթ է ստանում ճանապարհի փող : Պատերազմի ժամանակ Յովսէփ արքեպիսկոպոսը ամէն ժամանակ զօրքերի հետ էր և մեծ օգուտ բերեց Ռուսներին, որովհետեւ վրաստանի բնակիչ ընելով՝ մեծ ազդեցութիւն ունէր վրացոյց և Հայոց վրայ, զօրքի համար պաշար էր ձարում, ճանապարհներ էր նշանց տալի, և իմանալով Պարսկիների և սարեցոյց բնութիւնը, չըխնայելով ինքն իրան՝ զգուշացնում էր Ռուսներին Ղլլաշներին նենդութիւնից : Յովսէփ արքեպիսկոպոսին զօրքին Շէմսի Մուստաֆա խանի մօտ, որ առաջարկի նրան գալ Ռուսաց բանակը, խոստանալով որ նրան կընդունեն ոչ թէ իբրեւ թշնամի, այլ իբրեւ բարե-

կամ: Խանը և եպիսկոպոսը մօտ էլան Սաղիան զիւղումը, որնոր սարի վըայ է: Էս տիղի վանքումը եպիսկոպոսը երգում կերում թէ խանը որ դայ Ռուսաց բանակը, նրան կը ընդունեն ոչ թէ իրրե թշնամի, այլ իրրե բարեկամ: Նրա խօսքով խանը եկաւ Ռուսաց բանակը և Զուբովը նրան շատ լաւ ընդունեց և խոստացաւ նրա դաւառներումը վարվել իրրե բարեկամ:

Վալերեան Զուբովը խնդրեց 1796 թվին Յովսէփ արքեպիսկոպոսին զնալ գնենրալ Րիմսկի Կորսակովի մօտ, որնոր Դանջի մօտ էր և խնդրեց օգնութիւն անել նրան: Էս տեղոր դալիս է, Րիմսկի Կորսակովը խնդրում է նրանից զանազան յանձնարարութիւններ կատարել, եղներ է առնել ու վարձել տալի՝ զօրքի հաց կրելու համար, և տաւմ է՝ թէ ինչ գնով որ ուզում է՝ թող առնի, փողն իր ժամանակին կը հասցնի: Վերջումն էլ աւտում է թէ ևս մեծ յոյս ունիմ որ հէնց միայն ձեր անունը Հայոց զեղարէնքի մէջ և խանի մօտ ինձ մեծ օգուտ կը բերի, և ես յաւիտեան շնորհակալ պիտի ըլնեմ ձեզ: Յովսէփ արքեպիսկոպոսը չէ մօտի տալի վատ եղանակին ու փիս ճանապարհներին, իրա զլուխը չըխնայելով՝ կատարում է ամէն բանը՝ ինչպէս հարկն է: Պատերազմից յետոյ էլ նա շարունակում է իր ծառայու թիւնները ազդին և Ռուսաց զօրքին: Յովսէփ արքեպիսկոպոսի խօսքով Դանջէն բայ արաւ իր բերթը տռանց արիւն թափելու, և Դանջու Զավաթ խանը Ռուսաստանին հնազանդվեցաւ և ընդունեց մէքանի զօրքեր զեներալ Րիմսկի Կորսակովի կորպուսից, որնոր գնում էր վրաստան:

Էս օրինակին շուտով միւսներն էլ հետեւեցան: Եւ շի խան Իրրահիմը, որնոր ամէնից զօրեղ էր, Յովսէփ արքեպիսկոպոսի խօսքով, իր զօրքով միաւորվեցաւ Ռուսի զօրքի հետ:

Էն ժամանակին Յովսէփ արքեպիսկոպոսի յորդորելով, շատերը Ղարաբաղի մէլէքներից Ռուսաց հպատակ դառան, երեսուն հազար Հայ իրանց կայքով եկան Ռուսաց զօրքի հետ, որնոր Պօղոս թաղաւորի ժամանակը յետ դարձաւ Ռուսաստան Պարսկաստանից, և բնակվեցան Կավկազի գուբերնիումը Սուրբ Խաչ անունով բերթի մօտ:

Երբ որ Ռուսի զօրքը մտաւ վրաստան, Յովսէփ արքե-

պիսկոպոսին խնդրեցին մնալ էո տեղ առ ժամանակ : Էս տեղ էլ շատ օգնեց նրան, զորքի համար պաշար էր ճարում և մասնակից էր դառնում զանազան խօսակցութիւններումը և պայման կապելումը վրացոց հետ : Յովսէփ արքեպիսկոպոսին խնդրում են Թիֆլիզ մնալ, որովհետեւ գրում են նրան՝ թէ նա կարող է, եթէ առաջվայ դալմադալը պատահի Թիֆլիզումը, իր խելքով ու խորհուրդով էս դալմադալը վերջացնել :

Յովսէփ արքեպիսկոպոսը իր ազդեականներին էլ չէր մոռանում, օտարութեան մէջ էլ իր եղբորտերանց սէրն ունէր : Նա շատ նեղանում է, երբ որ 1791 թվին ստանում է Ստեփան Տէր Շմալմոնեանցից նամակ և խմանում է իր եղբոր Բէժանի մահը. «զոր ի կարգալու իսկոյն թուլացաւ սիրտ իմ և յամենայն զօրութենէ՝ սկսաք ըստ իւրեան պահանջողութեանցն լալ և կոծալ զկարօտեալ եղբայրն իմ, որ ի ՄԱ. ամի կենաց իւրոց՝ փոխեցաւ յաստեացս ի Քրիստոս ի յոյսն բնաւիցն. ԻԲ. ամ անտես գոլով յինէն, և եթող զօրքս իւր ի վերայ մեր, առաւ մեզ կսկիծ և վիշտ» : 1790 թվին օկտեմբերի 6 տվեց իշխան Պատեօմկինին իր ազգաբանութիւնը և նրա հետ չերալլ թագաւորի վկայութիւնը իր ազգի հնութեան մասին : Պատեօմկինը երեք անգամ կարդացել է էդ ազգաբանութիւնը մեծամեծ մարդկերանց մօտ, և խոստացել է հաստատել նրա ցեղի կենազութիւնը. իսկ եղբոր որդկերանց գվարդի պօլկովն է հրամայել ընդունել : Վերջապէս 1800 թվին Պօղոս թագաւորը նրան և նրա ազգը կենազութեան աստիճանի մէջ հաստատեց :

Յովսէփ արքեպիսկոպոսը, զարթնի էս յիշատակարանը, մէքանի բան ունէ գրած. քարոզներ, Ղարաբաղու մեկեքներ ի պատմութիւն՝ Եկատերինէ թագուհու համար, որնոր տըպած է Собрание актов ասած գրքումը : Նրեւում է՝ որ հնութիւններով էլ է պարապել. օրինակի համար ասենք՝ մենք տեսնում ենք՝ որ նա շատ հին դրամներ և մետաղներ է հաւաքել և Պօղոս թագաւորին ընծայել : Հայոց դաւանութեան մեկնութեան թարգմանութեան մասին վերևումն ասացինք, էս թարգմանութիւնը ընծայած է Պօղոս թագաւորին, որին որ կոչում է Եկեղեցու գլուխ և ամենաողորմած պաշտպան :

Յիշատակարանից երևում է՝ որ Ռուսաց լեզուն, զոնեայ յիշատակարան գրելու վախտ, լաւ չէ իմացել, մենք տեսնում ենք, որ համարեա թէ ամէն ժամանակ թարգմանչի հետ է գնալիս էլել Ռուսաց իշխանների մօտ :

Հօրէս՝ ինչ բաներ է արել Յովսէփ արքեպիսկոպոսը. ա՜մա չըկարծէք՝ թէ նա թշնամի չունենայ : Տեսէք՝ ի՞նչ են ասում նրա հակառակորդները : Մանուէլ վարդապետն իր թղթերումն ասում է. «Քանի որ չէի տեսել Յովսէփի վեճակը, ես կարծում էի՝ ուրիշների գրութիւններին հաւատալով՝ թէ նա շատ ազգասէր մարդ է, և ես էլ ավէն ժամանակ նրա լաւն էի գրում Ստամբուլ. բայց երբ որ եկայ էս կողմերը և տեսայ նրա կեցած քաղաքները, էն ժամանակ իմացայ ժողովրդի անբաւականութիւնը. տեսայ՝ որ նա հէնց միայն փառքի հետ էր ընկնում և միայն մտածում էր ազգականների համար. իմացայ որ ինքը չէր շինել վանքը և տպարանումն էլ ոչինչ կարգ չէր գցել : Էնքան փող էր եկել Հնդկաստանից նրա սուսնարանի համար, մէկ երեխայ էլ ոչինչ չէ սովորել էս փողովը, տպարանը մէկ դարտակ պատճառով խանդարվել էր : Էն էլ իմացայ՝ որ վեճակումը նա ու նրա աշակերտները լաւ բարի անուն չունեն : Գրիգորը թամամացրուց՝ ինչ որ Յովսէփն չը կարողացաւ անել : Չը կատարելով մեր պապերի սուրբ սահմանադրութիւնները, Նրեանու խանի, Վրաստանի իշխանների և Գէորգ թագաւորի օգնականութիւնովը և տարզամիտ ժողովրդի տված փողերովը, նա ձեր մէջ ազգասիրի անուն է հանել : Բայ ի սրանից Մանուէլ վարդապետն ասում է՝ թէ Յովսէփը քսանուեօթ տարի զօւբայ առաջնորդութիւն էր անում Ռուսաստանումը և շատին Հայերից պատժել է : Նրա արարմունքը տեսնելով՝ մեծ մարդիքը սուս էին կենում և ոչինչ բանումը չէին խառնվում, որ նրա խաթիր ամօթ չը վերաբերվի ազգին. իսկ հասարակ մարդիք ոչինչում չէին խառնվում, որովհետև վախնում էին նրանից, էս պատճառով ամէն բանը թողել էին նրա կամքին : Էլի էն Մանուէլի թըղթերումը կարդում ենք. «Նոր Նախիջևանցիք 1802 թվին յունիսի 5 գրում են, թէ Յովսէփ կաթողիկոսը և Գրիգոր վարդապետը իրանց վրայ են մխսել էն փողերը, որնոր յկատե-

րինէ թագուհին և Պալլ Պետրովիչը տվելին նրանց և Գրիգորիոսիցոյ՝ եկեղեցի և վանք շինելու համար. էս պատճառով Նախիջևանցիք խնդրում են Եփրեմից՝ իրանց եկեղեցու երեսուն հազար ռուբլին, որնոր պարտ էր Յովսէփ կաթողիկոսը՝ վոնց որ ընի՝ դուս բերել, և էս բանի մասին աշխատել իրանց դեպուտատների հետ : Գրիգորիոսիցիքը գրում են. «Գրիգոր վարդապետը վեր է առել մեզանից 25,000 մանէթ, որնոր թագաւորը մեզ բաշխել, էս փողը մենք պահանջում ենք շահով, որովհետեւ մեր քաղաքը աղքատ է» :

Վերեւումը մենք խօսեցանք՝ ինչպէս պէտք է զգուշ ըլնենք ժողովրդի և զանազան կողմերու պաշտպանների խօսքին հաւատալուց : Էս պատճառով էս տեղ ոչինչ չենք ասիլ, մինչև որ աւելի զօրեղ պատճառներ չը բերեն դրանք՝ իրանց ասածը ապացուցանելու համար :

Սիմէոն կաթողիկոսը, որնոր Յովսէփին Ռուսաստան ղըրկեց, վախճանվեցաւ 1780 թվին : Բայց մեռնելով՝ Սիմէոն կաթողիկոսը, որին որ Յովսէփ անուանում է «յատուկ ծնող իւրի Գրիստոս, վերջին օրհնութեան թուղթ գրեց նրան և նոր շինած Նախիջևան քաղաքին. նմանապէս յայտնեց Յովսէփին՝ թէ ինչ շեղութիւններ քաշեց Հայաստան վրացոց զօրքից և թէ երկրի մեծ մասը գերի է տարել Հերսկլ թագաւորը : Նրա մահուան յետոյ, ազգի կամքով 1780 թվին ջոկեցին կաթողիկոս Ղուկաս Կարնեցուն : Ղուկաս կաթողիկոսը վախճանվեցաւ 1799 թվին դեկտ. 29 : Նրան որ թաղեցին, Էջմիածնի միաբանները հաւաքվեցան նոր կաթողիկոս ընտրելու համար : Միաբանների զլուխն էր Մինաս վարդապետ վաղարշապատցին. նա երեք մարդ առաջարկեց. մէկ Յովսէփ արքեպիսկոպոսին, երկրորդ՝ Դանիէլին, որնոր Ստամբուլ պատրիարք էր և երրորդ՝ Եփրեմ արքեպիսկոպոսին, որնոր նուիրակ էր ղրկած Ռուսաստան : Նրանցից ամէն մէկն իրան համար պաշտպան գտաւ միաբանների մէջ : Բայց Մինաս վարդապետը և մէքանի եպիսկոպոսները ուզում էին՝ որ Էջմիածինը ոչովին չընտրի, այլ միայն ղրկի էս երեքի անունները Ստամբուլ, որ էն տեղ ազգը՝ ումին որ ուզի՝ նրան ընտրի : Միւսանգամ որ հաւաքվեցան՝ սկսեցին խօսել Յովսէփի վրայ և վերջապէս բանը հնպէս կրտ-

րեցին, որ շատ երկիւղալի է նրա ջոգիլը, որովհետեւ ասում էին, թէ նա, երբ որ Ռուսաստան Պարսկաստանի և Տաճկաստանի հետ կռիւ ունէր, Ռուսաց զօրքի հետն էր, և եթէ նրան ընտրեն, Օսմանցիք և Ղլբաշը ոչ մի ժամանակ չեն համաձայնվիլ: Էս պատճառով Յովսէփի անունը հանեցին և գրեցին միայն երկուսի անունը՝ Դանիէլ պատրիարքինը և Եփրեմինը: Թուղթ գրեցին և թղթի մէջ էս երկուսի անունը յիշեցին: Դաւիթ արքեպիսկոպոսը, որնոր Ղորաննանց աղբիցն էր, ուղղում էր, որ նա տանի էդ թուղթը Ստամբուլ: Բայց որովհետեւ գիտէին՝ թէ նա ինքն հեռուում է կաթուղիկոս դառնալու՝ Երեւանու խանի օգնականութիւնով, էս պատճառով միաբանները չէին համաձայնվում էս բանին, որովհետեւ վախենում էին, որ նա բանը չըխարաբ անի: Բայց յետոյ տեսնելով, որ սրանից կարող է խռովութիւն դուս գալ, միաբանները համաձայնվեցան Դաւիթին ղրկել Ստամբուլ: Վերջապէս նա հասաւ Ստամբուլ: Միաբանները Դաւիթի գընալուց յետոյ՝ միտքը փոխեցին և փոշմանեցին, որ նրան Ստամբուլ ղրկեցին: Էս պատճառով նոր թուղթ գրեցին Դաւիթին պատրիարքի և Ստամբուլի իշխանների մօդ, և խնդրեցին՝ որ եթէ ինք Դանիէլը չըկամենայ դալ աթոռը, կամ եթէ իշխանները չուզենան, որ նա գայ Եջմիածին, էն ժամանակ թող նրա տեղ նշանակեն կամ Ստեփաննոս վարդապետին, որն որ Բուրսայու առաջնորդն էր, կամ թէ Սփրեմ արքեպիսկոպոսին, իսկ Դաւիթին ինչրեցին յետ ղրկել Եջմիածին: Դաւիթը որ հասաւ Ստամբուլ, ազգը ժողովեցաւ եկեղեցումը և ջոգեց Դանիէլ պատրիարքին: Էսպէսութիւնով Դանիէլը դառաւ կաթուղիկոս: Նա ուղղում էր դուս դալ Ստամբուլից և դալ Եջմիածին, իրան տեղն էլ ուղղում էր տալ Դաւիթին: Մէ քանի իշխաններ համաձայնվեցան, միւսները չըհամաձայնվեցան և ուղղում էին ջոկել Դաւիթի տեղ Ստամբուլի պատրիարք Գաբուստ վարդապետ Զուղայեցուն, որնոր նուիրակ էր ղրկած Եջմիածնից: Էս դալմաղալումն ձայն է գալի՝ թէ Յովսէփ արքեպիսկոպոսը ուղղում է կաթուղիկոս դառնալ: Նա որ իմանում է Ղուկաս կաթուղիկոսի մահը և ինչպէս առաջի անգամ Եջմիածնումը նրան կանչ իտատ ջոկեցին և թէ

ինչպէս յետոյ հանեցին նրա անունը, շատ նեղացաւ և սկսեց աշխատել տէրութեան առաջ, որ նրան ջոկեն կաթուղիկոս : Մանուէլ վարդապետն ասում է, թէ Ղուկաս կաթուղիկոսի ժամանակն էլ Յովնէփ արքեպիսկոպոսը սկսեց աշխատել կաթուղիկոսութիւն ստանալու մասին, և էս պատճառով թղթեր է գրել Ստամբոլ Զաքարիայ պատրիարքի մօտ : Սրբազան Ղուկաս կաթուղիկոսի կենդանութեան վախտը, ասում է Մանուէլը, ձեր բարեյիշատակ Յովսէփն՝ Աբիսողոմի՝ Դաւիթի որդու պէս, կաթուղիկոսութեան հոգան էր քաշում : Յովսէփ արքեպիսկոպոսը Ռուսաց տէրութեան յայտնեց, թէ նա ամէնից հին արքեպիսկոպոս է : Ուղիղ չենք գիտում, ճշմարիտ է արդեօք Յովնէփի ասածը, ամա կարելի է ասել, որ նա էն ժամանակվայ արքեպիսկոպոսների մէջ աւելի արժանաւորութիւն ունէր և աւելի ծառայել էր ազգին :

Էս տեղ առաջի անգամ տեսնում ենք, որ Յովսէփ արքեպիսկոպոսը սկսում է հակառակ գնալ Էջմիածնի և ազգի կամքին : Չենք գիտում՝ թէ ինչ ստիպեց նրան փոխել իր առաջվայ ուղութիւնը և թէ ի՞նչպէս իմանալով՝ որ ազգը ջոկել է Դանիէլին, նա սկսում է աշխատել, որ իրան ջոկեն կաթուղիկոս : Պատմութիւնից տեսնում ենք, որ երբեմն մեծ մարդիքը՝ հասկանալով իրանց դիրքը և նկատելով, որ ազգը սխալվում է՝ ուրանալով նրանց արժանաւորութիւնը, սկսում են ազգի սխալ արարմունքը ուղղել : Ո՞վ գիտէ, կարելի է՝ էս բանը ստիպեց Յովսէփին էլ գնալ ազգի կամքի դէմ : Կամ, թէ կարելի՞ էս մարդիքը տեսնում են, որ ազգի ընտրութիւնը միայն դարտակ ձև է և թէ ամէն բանը առաջ են տանում մէքանի իշխանները, ու էս պատճառով խղճմունքի դէմ բան չեն համարում էսպէս վարվել : Շատ դժուար է՝ էս հարցմունքները վճռել ամպ մենք կասենք, որ Յովսէփ արքեպիսկոպոսը՝ քնալով արքեպիսկոպոս Ռուսաստանումը՝ աւելի օգուտ կարող էր բերել ազգին և աւելի ձայն կարող էր ունենալ, քան թէ կաթուղիկոս ընտրվելովը : Մենք տեսնում ենք՝ որ վերջի ժամանակին Էջմիածնի միաբանները նրան աւելի չեն սիրում, ո՞վ գիտէ՝ կարելի է՝ ուրիշ պատճառների հետ, էն էլ կրնէր սրա պատճառը՝ որ Յովսէփ արքեպիսկոպոսը զօռբայ մարդ էր : Օսմանցիք և

Ղզլբաշները ինչ գուզէ անէր նա, չէին կարող նրան օրել, որովհետեւ փորձով գիտէին, թէ ինչ մարդ էր Յովսէփ արքեպիսկոպոսը : Ռուսաց տէրութիւնն էլ առաջվայ պէս չէր կարող նրան օգնել, որովհետեւ հեռանալով Ռուսաստանից՝ նա չէր կարող իրա զօրեղ բարեկամների և պաշտպանների ձեռքով էն բանն անել Եջմիածնումը, ինչ բան որ անում էր առաջ Ռուսաստանէլած ժամանակը :

Թագաւ որը Ստամբուլ իր ղեկավարի մօտ գրեց, որ նա հետեի Յովսէփի համար, ու նա էլ բանը էնպէս տարաւ, որ Դանիէլի տեղ ջոգեցին Յովսէփին : Ստամբուլ քաղաքի Հայերի հանգստութեան համար էլ՝ Դանիէլին և Գալուստ Զուղայեցուն, որնոր աշխատում էր էնտեղ պատրիարք ընտրվել, աքսորեցին : Էսպէսութիւնով Օսմանցիք՝ հէնց կարծես՝ մոռացան՝ թէ Յովսէփ արքեպիսկոպոսը Ռուսաց զօրքի հետ էր, երբ որ Ռուսաստանը նրանց հետ կռիւ ունէր : Մնաց որ Ղզլբաշներին և Եջմիածնի միաբաններին Յովսէփը իր կողմը քաշի : Դաւիթ պարնի որդու ձեռքով ընծայ զրգեց շահի համար, Երեւնու խանին էլ բան ման խոստացաւ : Եջմիածնի միաբաններին զրեց՝ որ ես գիտեմ՝ որ գուք Ղզլբաշի ահու ինձ չըջոգեցիք, հիմիկ կարող էք չըվախենալ և ջոգել ինձ : Միաբանները թուղթ գրեցին և էս գիրը Երեւնու խանի և Դաւիթ պարնի որդու մարդու ձեռքով զրգեցին նրա մօտ : Էսպէսութիւնով Յովսէփի կաթուղիկոսը ամէն տեղից շնորհաւորութեան թուղթ ստացաւ : Նա իր կողմանէ շնորհակալութեան թուղթ գրեց Ստամբուլ Ռուսաց ղեկավարին, որ նա աշխատեցաւ նրա համար կաթուղիկոս ընտրելիս և խնդրեց՝ որ Դանիէլին և Գալուստին յետ բերեն աքսորանքից : Դեպանը խոստացաւ :

1800 թվին յունիսի 17 Պետերբուրգումը թուղթ ստացան Ռուսաց ղեկավարից, որ Յովսէփ արքեպիսկոպոսը ընտրվելու է կաթուղիկոս : Վերջապէս էլ էն թվին օկտեմբերի 30 Պօղոս թագաւորը, տեսնելով որ ամէն տեղից թուղթ էկաւ նրա ընտրվելու մասին, նրան կաթուղիկոս հաստատեց. հազար մանէթ ճանապարհի համար փող տվեց և նրա տարեկան երկու հազար մանէթ ռոճիկը՝ պենսիայ փոխեց : Էս փողերը պիտի ստանար Աշտարխանի թագաւորական գան-

ճարանից : Աշտարխանի զինուորական գուբերնատորին՝ Կնոր-
րինգին թագաւորը առանձին հրաման զրեց, որ Յովսէփի կա-
թողիկոսին մինչև Թիֆլիզ ջափարներ տայ, հետն էլ մէկ օ-
րերօթիցեր : Վրացոց Գէորգ թագաւորին թագաւորը գրեց, որ
Յովսէփի կաթողիկոսին փառքով պատվով ընդունի և յետոյ
փառքով և պատվով սալամաթ հասցնի մինչև Էջմիածին :

Էս բաներից յետոյ վերջապէս նոյեմբերի վերջերումը Յով-
սէփի կաթողիկոսը ճամբայ ընկաւ Ռուսաստանից Էջմիածին :
Մեծ փողով և կայքով դուս եկաւ Յովսէփի կաթողիկոսը էս
տեղաց, որովհետեւ արքեպիսկոպոսութեան ժամանակ շատ ըն-
ծաներ էր ստացել Եկատերինէ թաղուհուց, Պոդոս թագա-
ւորից : Նմանապէս Հնդկաստանից և ուրիշ տեղերից շատ փո-
ղեր և ակնեղէն էր ստացել, բաց ի սրան ից շատ ոսկէ խաչեր
է ունեցել, խաչվարներ, զումրուխտ, եախութ, ալմաստ, փիրու-
զայ, ոսկէ ալթաբէք, թանկագին շուրջառներ : Ղզլար որ մը-
տաւ, Գրիգոր վարդապետին դռեց Կնորրինգի մօտ, որնոր Վր-
սաստանումը էն ժամանակ էլաժ զօրքի մեծաւորն էր : Կնոր-
րինգը խոստացաւ կարդադրութիւն անել, որ նա սալամաթ
հասնի Թիֆլիզ : Վերջապէս 1801 թվին վետրվարի իննին
Յովսէփի կաթողիկոսը մեծ փառքով մտաւ քաղաք : Նրան
էնպէս ընդունեցին՝ ինչպէս մէկ մեծ կուսակալի : Յոհան պարնի
որդին, կնեազները, հոգեւորականներն և հասարակ ժողովուրդը
քաղաքից դուրս եկան նրան հանդիպելու : Քաղաք մտնելիս՝
կաթողիկոսը զգեստաւորվեցաւ ու էսպէս մտաւ քաղաք :
Էս հանդիսի ժամանակ զանդակները տալիս էին ու զարբա-
ղաներ էին դցում : Կաթողիկոսը ժամ որ մտաւ, Ռուսաց
թագաւորի առողջութեան և կենաց համար մաղթանք կա-
տարեց, նմանապէս էս հանդիսին յարմար ճառ տեց : Նա
վեր եկաւ իր ազդականների տանը, որնոր Կոլոլ թաղումն էր :
Յայտնի չէ՝ իր հետ բերած հոգեւորականները էս տեղ վեր
եկան, թէ վանքումը կամ բերթի եկեղեցու դաւիթումը, որ
տեղ որ Հախրաթի առաջնորդարանն էր, բայց պէտք է կար-
ծել, որ վանքումը կամ բերթի եկեղեցու դաւիթումը, ինչպէս
որ հիմիկ էլ սովորութիւն կայ մեր մէջ : Յովսէփի կաթողի-
կոսը կենդանի չլցտաւ Գէորգ թագաւորին, նա վախճանվե-

ցաւ 1800 թվին դեկտեմբերի 28 առաւօտը տասնութէկ սա-
հաթին : Նրա մահուան յետոյ դեռ ուղումէին նշանակել
վրաստանի կառավարիչ Յոհան պարնի որդուն, յետոյ նշա-
նակեցին Դաւիթ պարնի որդուն : Յովսէփ կաթողիկոսը մը-
տաւ քաղաքէն ժամանակ, երբ որ Դաւիթն էր կառավարում
ու Ռուսաց զենեքալ Լազարեվի հետ պատրաստվում էր գնալ
Գորի զօրքով հնազանդացնել մէկէլ պարնի որդիներանց : Նրա
դաւուց յետոյ Պետերբուրգից ստացան Պօղոս Թագաւորի 1801
թվի յունվարի 18 հրամանը՝ վրաստանը Ռուսաստանի հետ
միաւորելու մասին : Էս հրամանը Յովսէփ արքեպիսկոպոսը
վանքումը կարդաց և սրա յարմար հանդէս կատարեց : Ծեր
մարդիքը պատմում են՝ որ մէկ օր մեծ հանդիսով դուս եկաւ
նա զգեստաւորված քահանաներով, վարդապետներով բերթի
եկեղեցուց, և ոչովն չը յայտնելով իր միտքը, ոչ Ռուսաց էկ-
զարխին, ոչ Հայոց միաբաններին, զնաց դիբա վրացոց եկեղեցի
Սիոնը, կանգնեցաւ էս տեղ, հրամայեց բաց անել եկեղեցին,
մտաւ էնտեղ, ու կարգ կատարեց վրացոց Թագաւոր Գէորգի
հոգու փրկութեան համար ու յետոյ դուս եկաւ :

Թիֆլիզից գրեց Եջմիածնի միաբաններին, որ գան քա-
ղաք : Միաբանները չորս եպիսկոպոս զոգեցին էս տեղ՝ Անդ-
րէասին, Բարսեղին, Սիմէոնին և Քաղէոսին, որնոր շուտով ե-
կան Թիֆլիզ : Յայտնի չէ՝ որ տեղ վեր եկան էս եպիսկոպոս-
ները, Յովսէփ կաթողիկոսի կեցած տանը, թէ վանքումը կամ
բերթի եկեղեցու գաւիթումը, բայց պէտք է կարծել, որ էլի
վանքումը կամ բերթի եկեղեցու գաւիթումը : Սրանք որ ե-
կան առաջի անգամ, Յովսէփ կաթողիկոսը նրանց սիրով յան-
դիմանեց, յետոյ մեծ պատիւ տվեց նրանց և ականակուռ խա-
չեր բաշխեց :

1801 թվին մարտ ամսին, երբ որ պատրաստ էր, էն էն էր,
որ ուղում էր գնալ Եջմիածին և իրան հետ բերած կայքը
պիտի ճամբայ էր գցել էն տեղ Գրիգոր վարդապետի հետ,
էդ օրերումը Հերակլ Թագաւորի կնիկը, կամենալով նրան պա-
տիւ տալ, հրամայեց նրա համար բաղնիս պատրաստել : Բաղ-
նիս արած՝ նա ստատիկ հիւանդացաւ և վախճանվեցաւ 1801
թվին մարտի իննին, իսկ Շուպէնը ասում է՝ թէ նա մեռել է

մարտի տասին : Մէկ քանիսը տսում են՝ թէ նա ազադի քա-
մի ունէր, էնդուրից մեռաւ : Մէկ ձեռագրումը կարդացել
ենք, որ նրան ինն օր սաստիկ տաքութիւն էր տալիս և սը-
րանով ինն օրվան վրայ մեռաւ : Շատերն էլ ասում են՝ թէ
նա բաղնիս արած՝ շարբաթ խմեց և մէ քանի սահաթից յե-
տոյ վախճանվեցաւ : Շատ կարելի է՝ շարբաթը սառն է էլել-
ու բաղնիսից յետոյ քնաս է տվել : Ի հարկէ մօտիկ ազգա-
կանները, որնոր էն ժամանակ Թիֆլիզումն էին, պէտք է՝ որ
գիտենային նրա մահուան պատճառը : Եջմիածնի հին դուր-
ծերումն էլ պէտք է՝ որ էս բանի մասին տեղեկութիւն ըննի :
Մեղանում սովորութիւն կայ, թէ մարդ յանկարծ մեռնում
է, ասում են՝ թէ դեղել կամ սպանել են : Եթէ դեղած էին
էլի, էնպէս թիչ դեղ պիտի ըլնէր, որ էն ժամանակվայ բժիշկ-
ները չէին կարացել դեղաթափ տալ : Էն ժամանակ էլ լաւ
բժիշկներ կային. օրինակի համար ասենք՝ շատ գովում են
հէքիմ Թաթուլին : Մի՞թէ բան կը խնայէին Յովսէփի կա-
թուղիկոսի համար նրա եղբորդերանց որդիքը և միւս նը-
րա ազգականները, որնոր նրանից էին բազդաւորված : Նրա
հիւանդութեան ժամանակնրա եղբոր որդին Սոլմոնը Թիֆ-
լիզումն էր և երեւում է՝ կաթուղիկոսը նրան շատ սիրում էր,
որովհետեւ կտակումը նրան է միայն յիշում : Եւ եթէ Ծըշ-
մարիտ դեղել էին Յովսէփի կաթուղիկոսին, մի՞թէ գեներալ Լա-
զարեվը, որնոր լաւ գիտէր՝ թէ Յովսէփի կաթուղիկոսը ինչ նը-
շանակութիւն ունէր Ռուսաստանումը, մի՞թէ նա չէր պա-
հանջի, որ քննութիւն նշանակեն, որ բանը բացվի :

Մահից առաջ նա խոստովանվեցաւ և խնդրեց՝ որ նրա
մարմինը տանեն Եջմիածին ու թաղեն Սիմէոն կաթուղիկոսի
մօտ : Սիմէոն եպիսկոպոսը 1801 թվին մարտի 12 յայտնեց
թղթով՝ թէ Յովսէփի կաթուղիկոսը խոստովանվելիս էս կտակը
թողեց : « Յովսէփի կոչմամբ կաթուղիկոսն ի Թիֆլիզ քաղաքօջ
մինչ պատրաստեցաւ, և գրեւինան կապել ետ դնալ ի սուրբ
աթոռն, հիւանդացաւ սասակապէս, և ի մարտ ամսոյ իննե-
րորդ օր յառաւօտուն յետ խոստովանութեանն և հաղորդու-
թեանն յորժամ հարցի թէ՛ զինչ ունիս հրամայել վասն քո
և իրաց քոյ, նա յառաջ պատուիրեալ գորով վասն բեռանցն,

« յուզարկեալ ես, պատասխանեցի թէ՛ ահա յուզարկեմ, և նա
կրկին ստիպեաց թէ շուտով յուզարկեա՛ւ, և մի՛ յետաձգեր,
որ հոգիս պարտական չմնայ ամօռոյն » : Ապա ասաց թէ՛
փոքր զու՛թի ունիմ հարկաւոր իրաց, ի մէջ կայ յառկացեալ
ինչ, զայն առանձնաբար քո ձեռամբն տաս Սպումոնին, որ օ-
տարը չխմանան, և իմ հայրենի տունն չքակեն, իսկ այլ ա-
մենայն կայքն իմ սուրբ ամօռոյն են : Երկրորդ ասաց թէ՛
« Երկրորդ վարդապետէն զրամեմ փոխ առեալ, թանխէն ա-
ւելորդօք մօտն ունիմ » : Երրորդ ասաց թէ՛ « Երկրորդ Աւետիք
վարդապետէն քանի հարիւր տկի փոխեմ առեալ, պիտի
հատուցանէք ի կայիցս, որպէս յայտնի է : Դարձեալ ի ութն
ժամուն կոչեաց, որ լեզուն ևս ծանրացեալ էր, ասաց « ես կը
մեռանիմ, իմ մարմինն տարէք ի սուրբ Էջմիածին, Սիմէոն
կաթուղիկոսի դերեզմանի մօտն թաղէք, և իմ կայից դա-
ւարովն Գրիգոր վարդապետն գիտակ է, ի նմանէ տեղեկացէ՛ք
ամենայն հետապ, և որպիսութիւն » : Այս քան ինչ է կտակն,
որ խօսեցաւ ընդ իս, և ես ճշմարտութեամբ գրեցի ի թըզ-
թիս » : Մէկ դատաւորական գործումը յիշուած է՝ որ Յով-
սէփ կաթուղիկոսի մահուան յետոյ, Ռուսաց տէրութիւնը
էն պատճառով հաստատեց Դաւիթին կաթուղիկոսական
ամօռ ի վրայ՝ որ իբր թէ չորս արքեպիսկոպոս երդումով բե-
մի առաջ հաստատեցին՝ թէ Յովսէփ կաթուղիկոսը կտակ է
թողել և յայտնելէ, թէ նա կամենում է՝ որ նրա մահուան
յետոյ՝ Դաւիթը կաթուղիկոս դառնայ : Ելել էն գործումը
ասած է՝ թէ երբ որ Ռուսաց տէրութիւնը խնայաւ՝ որ Էդպիսի
կտակ ամենեւին չէ էլել, էն ժամանակ հրամայել է իր Ստամ-
բուլի դեսպանին՝ որ նորմէկանց Դանիէլին ջոգեն Դաւիթի տեղ :
Էդպէս էլ արին : Մանուէլ վարդապետն էլ յիշում է՝ թէ ա-
սում էին՝ թէ Էդպէս կտակ է էլել, և թէ Յովսէփ կաթու-
ղիկոսը ցանկութիւն է ունեցել, որ Գրիգոր վարդապետը ընի
Ռուսաստանի Հայերի վիճակաւոր արքեպիսկոպոս : Յովհան-
նէս պատրիարղի մօտ Մանուէլ վարդապետը գրում է՝ « թէ
կտակ յետ մահուան հաստատուն է, վստն որոյ զեղջերուա-
քաղ կտակս տեսան Յովսէփայ վասն Դաւթի և Գրիգորի՝ հաս-
տատել ջանաս, ապա զԵրբ յառաջագոյն զնզովիւք փակեալ

կառկ հօր քո ծերունի Զաքարիայ պատրիարզի ոչ յարգեցեր...
Յովսէփայ և Դաւթի՛ առաջին Ջատաղով դու եղեալես :

Յովսէփ կաթուղիկոսի բարգ և կայէնքը, ակնեղէնը և ուրիշ իքմիները զըդեցի՛ն արդեօք էջմիածին՝ Գրիգոր վարդապետի ձեռքով՝ թէ չէ, ապա՞ծ դրքերումը ոչինչ տեղեկութիւն չըկարողացանք դնել : Յետոյ ասում էին՝ թէ Գրիգոր վարդապետը Յովսէփի կայէնքի մեծ մասը թաքցրել է, էստու վրայ մեծ խօսակցութիւն դուս եկաւ, և թէ Յովսէփից մնացած փողը Դաւիթ արքեպիսկոպոսը միտեց՝ կաշառք տալով Երևանու խանին՝ որ նա հետեւի՛ իրան կաթուղիկոս շինել : Բայց առաջ քան Գրիգոր վարդապետի մեղադրելը, պէտք է իմանալ՝ ստացել է արդեօք նա էդ բարձր և կայէնքը՝ թէ չէ :

Սերովբէ վարժապետի երգերի լուս դցողը 42 երեսին ասում է՝ թէ ինչպէս մինչև էն ժամանակ Սանահնից և Կնատից կաթուղիկոս չէ ընտրվել, էնպէս էլ, ասել է իբր թէ Ռուսաց կայսրը, յօրէն ի գէն ոչով կաթուղիկոս պէտք չի ընտրվի Սանահնցի՛ ինչպէս որ Յովսէփ կաթուղիկոսն էր և Կնադէտցի, ինչպէս որ Դաւիթն էր :

Յովսէփ կաթուղիկոսը վախճանվեցու մօտ յիսուն ու ութ տարեկան հասակումը, էն ժամանակ, երբ նա էլի շատ բան կարող էր անել ազգի և աթոռի համար : Կռունկ օրագիրը յոյս ունէ ծանօթացնել և էն կաթուղիկոսների հետ, որնոր ժառանգեցին նրան, այսինքն՝ Դաւիթի, Դանիէլի, Եփրեմի, Յովհաննէսի, Ներսէսի հետ, և էն ժամանակ մեր կարդացողներն կարող են կտրական ասել թէ Յովսէփ կաթուղիկոսը ինչ տեղ ունէ էս կաթուղիկոսների շարքումը : Ինչ գուշէ ըլնի, մենք հիմիկ էլ՝ կարծում ենք՝ կարող ենք ասել, որ նա ոչ ինչ չի կորցնի էս համեմատութիւնից, միայն առաջ քան նրանց գործերը կշռելը, մենք պիտի լաւ հասկանանք, որ կաթուղիկոսութիւն անելու համար բաւական չէ ունենալ մէկ վանահօր առաքինութիւն կամ թէ լեզուի ճարտարութիւն, այլ սրա համար բաց ի սրանից հարկաւոր է պօլիտիկական քաղաքական ասած խելք ու միտք, և թէ ճշմարիտ երևելի մարդը շատ քիչ կը պատահի, որ կրկնէ իրանից առաջ էլած մարդկերանց սխալները : Ինչ ասել կուզէ՛ որ պօլիտի-

կահան խելք ասելով՝ մենք չենք խմանում էն խելքը ու հունարը, որնոր նշանց տվեց Իսպահանցի Միրզա Հաջի Բաբէն, Լոնդոն էլած ժամանակ, Ինգլիզ Մորիէրի ապելովը : Յովսէփ կաթողիկոսը շատ տեսքով և սիրուն մարդ է ելել : Էս վկայում են պառաւ մարդիքը, որնոր տեսել են նրան և նրա պատկերը, որնոր հիմիկ էլ էայ Մոսկովումը պարոն Լազարեանց վարժատանը :

Նորերումս մեզանում ծէս է դառել հոգևորականներին առ հասարակ վատաբանել և ասել, թէ նրանք են ելել ամէն ժամանակ ազգի կործանիչ : Յովսէփ կաթողիկոսի կեանքը կարծեմ կարող է ցոյց տալ՝ թէ ինչպէս ծուռն է էս կործիքը : Սրանով մենք չենք ուզում ասել՝ թէ մեր հոգևորականները ոչինչ վատ բան չունին, չէ՛ էս չենք ուզում ասել. մեր աստթիւնը էն է՝ որ հոգևորականութիւնը ժողովրդի հետ է գնում ձեռք ձեռքի հետ բռնած, և եթէ ազգն մէկ պակասութիւն չունէ, հոգևորականութիւնն էլ էն պակասութիւնը չի ունենայ, որովհետև հոգևորականները երկնքից չեն իջնում, այլ էլ էն ազգիցն են դուս գալիս : Ինչ պակասութիւն կամ արժանաւորութիւն ազգը կունենայ, էն պակասութիւնը և արժանաւորութիւնն էլ հոգևորականների վրայ կերևայ : Ի՞նչ անենք, որ նրանք ժողովրդի գլուխ են յիշվում. մի՞թէ հիւանդութիւնը կամ մահը ամէն ժամանակ գլխիցն է սկսվում, մի՞թէ ուրիշ անդամներից չէ գոյանում երբեմն մարդու մահը կամ հիւանդութիւնը :

Յովսէփ կաթողիկոսի յիշատակարանը մենք հետևեցանք տպել էնպէս, ինչպէս որ կայ՝ ոչինչ չըփոխելով. նրա սխալների մէջն էլ պատմաբանը նիւթ կը գտնի իրան համար :

Սրանով վերջացնում ենք մեր պատմութիւնը : Գրելու էլ լի շատ բան կար, ամա մէկ չըկարողացանք ամէնը էստեղ դուս բերել, մէկ որ՝ Յովսէփ կաթողիկոսի կեանքի ամէն հանգամանքները գեռ չեն հրատարակված. վրայ երկուս՝ որ Կռուսի օրագրումն առանց էն էլ շատ տեղ բռնեց մեր գրվածքը* :

Յովսէփ փոռոյեանց :

* Յովսէփ կաթողիկոսի յիշատակարանը կը հրատարակուի եկող համարումը :

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
ԱՂԱՍԻ
ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐՈԱԻԾ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է Արայի սարը հաղար տեսակ ծաղիկներով ու կանաչներով, հեռուիցը երևում է Մասիսը փոքր լինչ ամպերով պատած, այս եւ այն կողմը լեռանց շարքեր եւ Արարատեան դաշտը, որոյ վերայ է էջմիածինը:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Աղասին իր ընկերներովը սկսում է բարձրանալ սարի վերայ, լի-
նիլով ամենից առաջ եւ այս կամ այն կողմը նայելով, տեսնում է Մա-
սիսը, կանգնում է, նշանացի է անում ընկերացը հեռանալու, իսկ ին-
քը մի թփի տակ նստած՝ երգում է:

Սար ու ձոր ընկած՝ մէկ չոր թփի տակի,

Գետին նայելով՝ մնացել եմ նստած:

Ձեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ քարի

Տված՝ լալիս եմ օրս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետեւիս,

Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս,

Աղի արտասնքով էրված, խորոված,

Երեսիդ նայիմ, մնամ քարացած:

Ծնող, ազգական հեռու ինձանից,

Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,

Եարաբ երբ կըլի, որ ես ձեզանից

Իմ փափաքս առնեմ, ձեզ ջան ասելով:

Եարաբ ձեր ճտովն մէկ օր էլ կընկնեմ:

Եարաբ ձեր երեսն մէկ օր էլ կը տեսնեմ:

Եարաբ ծունկ ծնկի տուած ձեզ կասեմ:

Ա՛յ իմ խեղճ ծնողք, ձեր ջանին մեռնեմ:

Խաղը վերջացնելով՝ գլուխը քարին տուած՝ մտածում է:

ՄՈՒՍԱ ներքեւը.

Տշնջք, ի գլուր թողնեք մենք Աղասուն միայնակ սարի վե-

բայ, նա նշանացի պատուիրեց մեզ հեռանալ իբր թէ որս է
 զտել բայց զիտէք, որ նա տեսել է սարի վրայիցը Մասեաց
 գաղաթը կամ Երեւանու սարերը և այրած սրտով հիմա ար-
 տասուք կըլինի թափում բարձրանանք սարը, նա հայրենեաց
 մի փոքրիկ նշոյը տեսնելով՝ կորցնում է իրեն, մի՛ դուցէ մի
 վնաս հասնի նրան, կամ թէ երեւակայութիւնը վառուի և
 ինքն առանց մեզ ոչինչ ասելու գնայ Երեւան. . . (յառաջ
 գալով դէպի ժողովարդը) էլի Երեւանայ անունը յիշեցի. . . Էն-
 տեղէ Քանաքեռը, իմ ծերունի հայրս և անի, այն աննման
 ու հրաշագեղ Թաղուհին : (Գնալով աղայոց մօտ) բարձրանանք
 աղայք, սարի վերայ :

ԿԱՐՑ ախանջ գնելով)

Փոքր ինչ լուռթիւն, ես մի ձայն եմ լսում, բայց հակա-
 ռակ քամին չի թողում պարզ լսելու : (Ազատին վերեւը հառաչում է)
 լսեցէ՛ք, ահա հառաչանայ ձայն է գալի, նա լալիս է, զնանք,
 զնանք զանենք նրան :

ՎԱՆԻ տեսարանի խորքը նայելով. . .

Այս տեղ նայեցէ՛ք, ահա հեռուից մի քանի հոգիք գէպի
 մեզ են արշաւում, մի՛ դուցէ Սարգարի զինուորքը լինին, մի՛
 դուցէ խմացել են մեր այս տեղ գալը և շտապում են մեզ բռն-
 նելու, զէնքերդ պատրաստ պահեցէ՛ք, փութանք գտնել Ազա-
 տուն, առանց նրա ոչինչ չենք կարող անել :

ՎԱԹՕ նոյնպէս նայելով.

Ահա, ահա գալիս են, փտանդի մէջ ենք, ես ասացի սիւզ-
 բումը, թէ որս գնալու յարմար միջոց չէ, այսպիսի տեղերը
 վտանգաւոր են :

ՄՈՒՍԱ.

Երբէք հոգս մի՛ քաշէք, միայն շտապեցէ՛ք սարը. (ասում
 եւ բարձրանում են) :

ԱՄԷՆՔՆ Ի միասին.

Աղասի՛, Աղասի՛, ո՛ւր ես դու :

ԱՂԱՍԻ ձայները լսելով եւ կանգնելով.

Ի՞նչ է, իմ սիրելի ընկերք, ահա ձեր թշուառ Աղասին,
 նա չի կորչիլ, դուք կարծում էիք, թէ էս ահագին լեռը կը

կլանէ՞ Աղասուն, երկիւղ մի՛ կրէք, մահն էլ ինձանից խառնել է, մօտ եկէ՛ք, տեսէ՛ք ձեր սիրելի Մասիսը, անցել է տարին և մենք դեռ չենք տեսել նրա գաղաթը, ծունկ չօքեցէ՛ք, երեսներդ գետնին քսեցէ՛ք, նայեցէ՛ք այս կողմը՝ ահա Գեղարդավանքի սարերը, նրա ստորոտումն է Երեանը, այն տեղ է Գանաքեռը և մեր ընտանիքը :

ՄՈՒՍԱ.

Աղասի, անկարելի էր մեզ մեր փափաքն առնուլ Մասեաց լեռը տեսնելով. բայց դեռ վտանգից աղասուինք, Փամբակի կողմիցը մի քանի ձիաւորներ շտապելով եկան, իջան սարի տակին, ինչպէս երեւում է մեր հետքն են բռնել նրանք, կարելի է Սարգարի գինուորքը լինին, պատրաստուիր, Աբարանայ եկեղեցունը նոցա միտքը բերենք :

ԱՂԱՍԻ.

Ո՞ւր են, ո՞ւր են, այդ անօրէնները էլի չեն ձեռք քաշում մեզանից, ի՞նչ, Աղասուն բռնելու են եկել. ճշմարիտ է, Աղասիս պէտք է գնայ Երեան, վրէժ առնի Սարգարից և մոնաւանդ Հասան խանից, բայց դեռ ժամանակը չէ, սրաներդ ահ մի՛ ձղէք, թողէ՛ք գտն. Մասիսին նայեցէ՛ք, նա ինձ քաջալերեց, բաւական է ինձ, եթէ մի անգամ աչքս ձգեմ Մասեաց ձիւնապատ կառարին. եկէ՛ք իջնենք զաշտը, այն տեղ լաւ պատերազմելու տեղ է, բայց ո՛չ, այն տեղից Մասիսը չէ երեւում, այս տեղ մնանք, նոքա հիմա կը բարձրանան սարը :
(Ամէնքը նստում են և հրացանները պատրաստում) :

ԱՂԱՍԻ մէկ ձեռքին հրացանը, միւս ձեռքով աղայոցը :

Մի վախիք, խրախուսուեցէ՛ք, Աստուծոյ ամենակարող Աջը մեզ հետ է, ահա նրանք երեւում են :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Կամայ կամայ բարձրանում են սարը մի քանի փոքրակցիք և նոցա հետ Անկաթքը՝ Աղասու հօրեղբայրը :

ԱՒԵՏԻԲ.

Թողէ՛ք, թողէ՛ք, ո՞ւր է նա, թողէ՛ք գնամ՝ ոտքերն ընկ-

նիմ, նրա արեին մատաղ, ան, իմ անզոյց Աղասի :

ԱՂԱՍԻ լսելով ձայնը եւ ճանաչելով.

Իմ հօրեղբայր, իմ պատուական հօրեղբայր, դու Արայի լեռան վերայ չվախելով զազաններից եւ աւազակներին, եկել քո կորած Աղասուն ես որոնում. փառք քեզ Աստուած :

Վաղում գիրկն է ընկնում.

ԱԻՆՏԻՔ.

Աղասի, իմ Աղասի (ասում եւ լռում է) :

ԱՂԱՍԻ.

Իմ քաղցր հօրեղբայր, Աւետիք (ասում եւ լռում է) :

ՏՂԱՅՔԸ մօտենալով եւ չըջատասելով.

Փառք քեզ Աստուած :

ՄՈՒՍԱ.

Ո՞վ կը կարծէր, թէ Արայի լեռան վերայ Աւետիքը պ'տք է գայ մեզ վանի :

ԱՂԱՍԻ.

Աւետիք, իմ հօրեղբայր գլխաւոր ծնողք
 իմ Նաղը իմ երեսէք

ԱԻՆՏԻՔ.

Իմ աննման Աղասի'

ՄՈՒՍԱ.

Իմ հայր Քաղուհի' իմ հայրենիք
 (Աւետիքին) գնանք Աւետիք, գնանք ներքեւ զաշտը, այն տեղ աւելի լաւ տեսութիւն կանենք, բաւական է լաք :

ԱՂԱՍԻ.

Գնանք սիրելիք, (ասում եւ յառաջ է ընկնում, միւսները նրա հետ. կամենում է Աւետիքին իր հետը տանիլ, բայց երբ տեսնում է Մուսայի հետ իմիասին, ինքն յառաջում է : Մուսայն եւ Աւետիքը իրար հետ կամաց քչիչալով ներքեւ են գալի. Մուսայն հողոյ է հանում, Աւետիքը ձեռքով արդելում է եւ մատով Աղասուն ցոյց տալի :

ԱԻՆՏԻՔ տղայոյը դաշտի վերայ.

Եկէ՛ք համբուրեմ ամէնքիդ ո՞վ սիրելիք, (համբուրում է) ես ձեր բոլորի համար եմ եկել, դուք ամէն նեղութիւն յանձն էք

տուել իմ սիրելի Աղասու համար, Աբովինց տունը ձեզ աւելի է պարտական. եթէ դուք չլինէիք, մեր տան վերջին ճրագը հանգած կլինէր, ես գլուխս գոքս դրած եկել եմ ձեզ գտնել և փափաքս առնել, յետոյ ուրախութեամբ հօղը մօտնել: Շընորհակալ եմ նոյնպէս այս պատուական երիտասարդներիցը, սոքա փամբակու մը ինչպէս լսեցին ձեր անունը, ուրախութեամբ ձի հեծան էս տեղ դալու, սոքա ձեր տեղը դիտէին, ամբողջ օրը հետս չարչարուումն:

ԱՂԱՍԻ.

Դուք, իմ պատուական ընկերք, դուք փամբակու Հայոց բարեսրտութեան պատկերը, ասացէ՛ք, Աղասին ընչով պէտք է երախտահատոյց լինի ձեզ, եթէ ես փամբակումն ևս մեռանիմ, հոգ չէ, ձեզ նման ազնիւ սրտեր կան իմ սուգը անողներ: Ա՛խ, իմ մայրս, իմ Նաղլուն էստեղ չեն ինձ վերայ ողբալու: Ահա՛ իմ հօրեղբայրը կը դնայ և ձեր քաղցր յիշատակը կը տանի իրա հետ իմ պառաւեալ խղճալի մօրը:

ԿԱՐՕ.

Տա՛ր, պատուելի Աւետիք, այս ազնիւ երիտասարդաց համբաւը մեր որդեղուրկ ծնողացը, ասա՛ փամբակումը ձեր արդիքը անտէր չեն, այս քաջերի նման հիւրընկալ ընկերք ունին, որոնք ամէն մեր արտմութիւնը աշխատումն փարատել մըլտիթարիչ խօսքերով:

ՎԱՆԻ.

Բայց պատմի՛ր, յարգելի Աւետիք, մեր խեղճ ընտանեաց զրութիւնը, ի՞նչ վիճակի մէջ են նոքա, արդեօք գերեզման մօած հանդէմն, թէ իրենց կորած որդւոց համար դեռ սպում և կոծումն:

ՎԱԹՕ.

Արդեօք Սարգսրը մեր վեճը մեր տարաբաղդ ծնողքիցն առաւ, թէ արեանծարաւ դազանի նման դեռ մեզ է սպառնում, որ իր ճանիւր ձգի:

ԱՂԱՍԻ.

Պատմի՛ր իմ հօրեղբայր, պատմի՛ր մեզ ամէնը, մօտ տարի և կէս է մեր մօածմունքը միշտ այդ է, պատմի՛ր այն դաժան

ժամը, երբ մեզանից յետոյ Սարգարի զինուորքը յարձակուեցան Քանաքեռի վերայ :

ԱԻԵՏԻՔ.

Իմ սիրելի Աղասի, իմ պատուական եղբայրք, ես կը պատմեմ ամէն բանը, էլ ծածկելու ժամանակ չէ : Զիր գնալուց մի ժամ յետոյ կարկտի պէս տեղացին պարսկական զինուորաց զնդերը Քանաքեռի վերայ, մենք մեր պատրաստութիւնը յառաջուց հոգացել էինք, ժողովել էինք եկեղեցու պարիսպը և այն տեղ ամրացել : Երբ հրացան արձակելուց դադարեցան, ներս մտան և ամէնքիս առաջ ձգած վարումէին դէպի Երևան. նրանց քարացեալ օրտին չէին ներգործում, ոչ և րեխայից աղէտալի ճչալը, ոչ յղի և մանկատէր կանանց սուզն ու լացը. յետ մնացածին մտրակաւ, հրացանով ծեծումէին, անդօրների գլուխը կտրումէին և տխուրի դառն հարուածներով տարան լցրին Երևանայ բերդը. իսկ թագուհուն և իր մօրը ամէնից յառաջ կապած տարան :

ՄՈՒՍԱ.

Վայ մեզ, էս ի՞նչ ցաւալի լուր... Խեղճ թագուհի...

ԱՄԷՆՔԸ.

Խեղճ ծնողք

ԱՂԱՍԻ.

Ողորմելի անտէր Հայոց անդդ

ԱԻԵՏԻՔ.

Երևան մտանք, բոլոր Հայերը ողբում էին մեր վերայ, բերդումը պատրաստած էին կախողաններ և այլ չորջարանաց գործիքներ : Սարգարի հրամանն էր իշխանացը կախել և այլոց բոլորին սուրը քաշել. մեր աչքերը կապեցին և դահիճքը պատրաստուեցան, սպասումէին Սարգարին, որ գայ այս տեսարանին ներկայ դանուի : Յանկարծ հասաւ այդ ահռելի ըոպէն. Սարգարը եկաւ և նստաւ իրեն համար պատրաստած տեղումը. բայց Աստուծոյ ողորմութեան դռները բացուեցան և չորէ չոր յառաջ եկան Սվանդուլի խանը և մեր բարերար Մէլէք Սահակը : Սարգար, զուացին նրանք, ահա՛ քո սուրը, առաջ հրամայի՛ր մեզ գլխասնն, յետոյ այս անբաղդ ժողովդին, այս անմեղներին ինչ կամիս արա՛ :

ԱՂԱՍԻ.

Աստուած հաստատ պահպանէ Մէլիք Սահակին, թէ նա չը լինէր էս անօրէնների ժամանակը, որդեօք երեւան հիմա մի Հայ կը դանուէր, քանի՞ քանի անգամ ազատէլէ այդպիսի նեղութիւններէ մեր խեղճ ազգին :

ՄՈՒՍԱ.

Աստուած բարի ասցէ և Սվանդուլի խանին իր դործքովը, թէպէտ նա Պարսիկ է, բայց սաստիկ սիրումէ մեր ազգին :

ՏՂԱՅՔԸ.

Թողէ՛ք, թողէ՛ք պատմէ, տեսնենք վերջն ի՞նչ եղաւ :

ԱԻԵՏԻՔ.

Խան, Մէլիք, կանչեց Սարգսրը զայրացած, ինչի՞նչ արդէք լինում իմ նպատակին, մեր սրերը բթացան՝ իսկ այս անհաւատների արմատը չկտրուեց. այս ի՞նչպէս ազգ է, որքան կոտորում ես, այնքան բազմանում են, որքան նեղացնում ես, այնքան գօրանում են. ասում են բոլոր փառք պատիւ և իշխանութիւն. իմ ցանկացածս մի աղջիկ էր, ես նրան փառքից աւել ոչինչ չպէտք է անէի, մի՞թէ երջանկութիւն չէր նորա համար իմ կին կոչուիլը, բայց նա ընդդիմանում է, նուրա մայրը ճշում, աղաղակում է և այն փուչ Աղասին յանկարծ ո՞րտեղից սուռն է ընկնում և փոքր է մնում իմ Փարրաշնէրին սպանէ, ուր է նա, անի մի ձեռքս ընկնէր, ես գիտէի :

ՄՈՒՍԱ.

Ի՞նչ կը գտնէր, արդէն վաղուց նրան հասած կը լինի Արարանայ եկեղեցու մօտի հարուածները :

ԱԻԵՏԻՔ.

Սարգսր, երկրիս Տէր, աղաղակեցին Սվանդուլի խանը և Մէլիք Սահակը, մեղաւորին է հարկաւոր պատժել սոքա ի՞նչ տեսն, մարդիկ ուղարկիր և գտնել տուր յանցաւորին, իսկ էս անմեղաց արիւնը մեզ խնայիր : Ելէ՛ք, ելէ՛ք, ասաց Սարգսրը, ձեզ եմ շնորհում սոցա պատիւը, թող բոլորը զնան, իսկ մինչև Աղասուն գտնելը տասներկու իշխանք մնան այս տեղ բանտումը պատանդ, և այն անպիտան Թագուհուն, Մէլիք, տա՛ր,

Թող առողջանայ, նա երկիւղից կարծեմ տկարացել է : Այսպէս, սիրելիք, ձեր բոլորի հայրերը մինչև ցայժմ բերդումն են, միւսները կրկին Քանաքեռ յետ դարձան և թշուառութեամբ անցընում են իրենց սև օրերը :

ԱՂԱՍԻ.

Հիմա մեր խելք՝ ծնողքը տանջուում են շղթաների և կոճղների մէջ, վայ մեզ, իսկ ի՞նչ են անում մեր անբաղդ մայրերը, անտէր Նազլուս, իմ անմեղ երեխայքը :

ԱԻԵՏԻՔ.

Լսի՛ր, Աղասի՛, թէ ի՞նչ էր ասում քո զօրութիւնից ընկած մայրը, ի՞նչ էին նորա վերջի խօսքերը, երբ ես հրաժարական ողջոյն էի տալիս նրան. «Աղասի, երեսո ոտքիդ տակն, Աղասի հայրդ երեւանայ բերդումն է անել բանտի մէջ իր դըլուխը լալով քեզ օրհնում, Նազլուդ էս տեղ է կիսամեռ մահի հետ կռուում, միայն ես, ես եմ իմ չորացած դըլուխը պահպանում, որ մէկ երեսդ տեսնեմ և քեզ մնաս բարեաւ ասեմ : Արի, որդի, եթէ ինձ չես կամենում դժալ դժա՛ քո վերջին կէտը հասած Նազլուին և քո հայրակարօտ երեխայիցը, արի, սրանց մօտդ տա՛ր, դոնէ սրանք ուղարկն . քո Նազլուն էլ ո՞վ ունի բացի քեզանից, հասի՛ր որդի, քանի Նազլուիդ շունջը վըէն է :

ԱՂԱՍԻ.

Մայր, որդեկորոյս մայր . . . Նազլու, իմ Նազլու, սիրտս խորովում է անունդ յիշելով սարերի գլխին, ձորերի միջին, քո Աղասին, երեսիցդ զրկուած՝ քո սիրովն մաշուած, ի՞նչպէս մինչև հիմա կենդանի է մնացած : Այր դամ, իմ աննման ծնողք, կը դամ իմ հրաշալի Նազլու, կը դամ՝ կամ իմ զըլուխս էլ այդ տեղ մահու կը տամ, կամ ձեզ էլ կազատեմ այդ անօրէնների երկրիցը : Գնանք, եղբայրք, գնանք երևան, մեր ծնողքը կապանքի և բանտի մէջ մեր սիրովը տանջուում են, իսկ մենք ազատ և ուրախ օրեր ենք անցընում, փութանք Մուսա՛, ձիանքը հեծնենք և ուղղակի իջնենք Քանաքեռ :

ՄՈՒՍԱ.

Մուր խփի՛ր սրտումս, Աղասի, քեզ երևան դնալն անհը-

նարին է, առաջ մեզ բոլորիս զոհիր էս տեղ, յետոյ այդ վճռաբար ամբար, եթէ մեռանեալ եմք, ահա մեր հայրենի հողը, թող այս տեղ մեռանինք : Ո՞ր ես ուզում գնալ, անօրէն Հիւսէին-Սարգարը մօտ տարի և կէս է քո արեանն է ծարաւ, զոնէ մեզ խնայիր, որ կեանքներս յետ ենք դրիւ քեզ համար : Եւ մտածիր, մեզ Երեան գնալն անկարելի է դու : Տեսնում ես այս պատուական Հայ երիտասարդներին (ցոյց տալով Փամբակեցոյը) Փամբակումը սրանք մեր պաշտպաններն են, այսօր էլ նոյն ընկերութիւնը չեն խնայել մեզանից, սրանք կերթան և կը բերեն քո Նաղլուին... ո՛հ, իսկ այն անուշ... ո՛հ, ո՛հ...

ԵՐԿՈՒ ՓԱՄԲԱԿԵՅԻՔ

Աղասի, մենք չենք թողուլ քո սիրելի Նաղլուին և երեսա-
յիցդ, դու յետ դարձիր Փամբակ, մենք կերթանք կըփախցնենք :

ԵՐԿՈՒ ՈՒՐԻՇ ՏՂԱՅՔ.

Պատրաստ ենք Աղասու նման աղնիւ ընկերի համար մեր
արիւնը թափել, զնանք լաւ ժամանակ է :

ԱՒԵՏԻՔ.

Ճշմարիտ, ես շատ սխալուեցայ, միայն սիրելիդ իմ, դու
մի՛ դալ. այս քո Փամբակցի աղնիւ ընկերացի հետ ես ինքս
կերթամ և կը բերեմ քո Նաղլուին. դու իստ արեան մէջ, մի
քանի օրից յետոյ կրկին քո մօտ կը լինիմ, քո Նաղլուն և
երեսայքդ էլ ի միասին. Բնաւ բարեաւ իմ սիրելի Աղասի, (զրկում
է) քնաք բարեաւ և դուք իմ պատուելի եղբայրք, Մուսա, Կա-
րօ, Վաթօ, Վանի, իմ Աղասուս ձեզ եմ յանձնում և ձեզ
Աստուածային խնամոցը : Գնանք ուրեմն, սիրելի բարեկամք,
այս լեռան յետի կողմիցը քանաքեռ, ես ձեզ հետ ի միասին
կառնեմ իմ պարկեշտ հարսին և կը վերադառնանք Փամբակ :
(Սակաւքը համբուրելով նրանց, դուրս է գնում Փամբակեցոյ հետ, Աղա-
սին իր ընկերներովը մինչև դուրը ճանապարհ է գծում նրանց ու յետ
զալիս) :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՂԱՍԻ.

Սիրելի ընկերակիցք, շտապենք փոքր ժամանակ որս անել

և յետ դառնալ փամբակ. Աստուած էլի մեր հայրենի հողումը մխիթարեց մեզ, գնացէ՛ք ամէնքդ մէկ կողմով իսկ ես այս կողմից սարը բարձրանամ. այս լեռան որսն առատ է, այս լեռը անուանի լեռան է, սուրբ վառվառիա կուսի գերեզմանը այս լեռան միւս երեսումն է, նորա հովանաւորութիւնը պահպանում է մեր աղբի երեկայիցը ծաղկացաւից :

ՄՈՒՍԱ տիրամած .

Գնանք եղբարք, իսկ մեր տեղը թող այս դաշտը լինի, այս տեղ ժողովինք և այս տեղից գնանք ձիանքը հանելու այրի միջից : (Գնում են) :

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՂԱՍԻ միայն.

Մարդուս մի հոգսը չի սպանիլ իմ Մուսայի վերայ մի մեծ փոփոխութիւն եմ տեսնում ահա երկու շաբաթ է. թէ պէտ նա միշտ տխուր է եղել. բայց այս երկու շաբաթն ևս աւելի մանաւանդ այսօր քանի իմ հօրեղբայրը եկաւ և գընաց. Մուսէն կարծում է, թէ ինձանից ծածկել է իր սրտի ցաւերը, չէ իմանում, թէ նրա տարաբաղդ Աղասին դուշահում է ամէն բանը. այսուհետեւ Մուսային միայնակ չպէտք է թողած, նա իր զլխին մեծամեծ վնասներ կը պատճառէ : Ո՛վ կոյր բաղդ, որ միանգամ ծոփել ես ընկել, տարաբաղդ Աղասի, ինչն քո պատճառաւ չորս քաջ ու աղնիւ պատանիք պէտք է քարեքար տան հետդ իրենց գլուխը, դու ի՞նչդէս պէտք է դոցա երախտիքիցը դուրս գոտ : Գնամ ես էլ սարի էս կողմը փոքր ինչ շրջելու, ահա երեկոյեան պահն է, պէտք է յետ դարձած փամբակ. ամէնից աւելի դնամ Մուսայիս գտնեմ, ի դուր թողի նրան, ես մի այլ պատճառ եմ նկատում նորա փոփոխմանը. նա սիրահարուած է երեւում : (Գնում է) :

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՄՈՒՍԱ միայն սարկոյ իջնելով մինչև կէտը :

Հազիւ սիրտս մի փոքր հանգստացել էր, կրկին Աւետիքը վերովեց, Նազլուն շուտով կը դայ, իսկ իմ աննման թաղուհիս, հիմա ո՞վ գիտէ Գրգերը կենդանի թողել են նրան թէ ոչ : Աւետիքը ինձ պատմեց, բայց ես վախում եմ Ազատուն ասել : Նա ի՞նչպէս չի տեսնում իմ սրտի տխրութիւնը . վայ, վայ, եթէ նա իմանայ, թէ իր Մուսան գիշեր ու ցորեկ հանդիստ չունի թաղուհիս թողալու օրից, նա կրկին կուզէ երթալ Երևան, էլ չգիտէ, թէ Երևան ոչինչ չկայ : Ո՛հ, տեսնում եմ, տեսնում եմ, որ թաղուհիս կանչում է ինձ աչքերն արտասուօք լի . սաստիկ նեղութեան մէջ . . . տեսէ՛ք, տեսէ՛ք, անիրաւ Գրգեր, թէ ինչպէս սուրս կը թռցնի ձեր զլախը . թաղուհիս կը դամ քեզ ազատելու : Ո՛ր ես, իմ առանձնութեան մէջ իմ միակ միտի թարսութիւն, դու իմ սիրեկան երգարի ո՞վ ոգևորութիւն, արի՛ սիրտ տուր ինձ, դոնէ այս երգեմ, որ մի փոքր հանգստութիւն լինի ինձ : (Երգում է) :

Հրեշտակ էիր, որ ինձ երևեցար, անխ, ինձ երևեցար,
Երկրմէն ես ծնուել թէ երկրիցն իջար,
Մէկ կեանք ունէի, էն էլ դու առար
Ո՛վ իմ թաղուհի, արի՛, հոգիս առ :

Երազ թէ քուն ինձ, անխ մահ են դառել
Իմ սև օրս գիշեր՝ կեանքս խաւարել,
Ի՞նչ պէտքէ անեմ, ո՞ւր եմ ապրում էլ,
Թէ ոտքիդ տակին մատաղ չեմ լինիլ, անխ մատաղ չեմ լի՛ :

Կը դամ թաղուհի, կը դամ քո ոտքը,
Քեզ մօտ է սիրտս, քեզ հետ իմ միտքը,
Ե՛րբ կը լինի, որ քո աննման զէմքը
Տեսնեմ, կատարեմ իմ առած խօսքը :

(Խաղը վերջացնում է, նստում, զլախը քարին դնում եւ քունը տանում է) :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՂԱՍԻ տարիվերայիցը տեսնելով Մոսային:

Ա՛խ, իմ ազնիւ Մուսայ, դիտեմ, ի՞նչ կրակ է քեզ այրում, խորովում, բայց ի՞նչ անեմ, ինչե՞ք սրտինդ չես պատմում, որ ցաւդ իմանամ և գլուխս քեզ համար մառաղ տամ: Ա՛խ, լաւ եմ իմանում, որ սիրոյ թիւն է երեսիդ հովահարել, բայց այս ի՞նչ բան է, մայր և ամուսին կրակ են թափում գլխիս. էլի դու ո՞վ սէր, ո՞վ բնութիւն, ուզում ես քո զօրութիւնը ցոյց տալ: Ա՛խ, ո՞ւր կարչի մարդ, որ քո ձեռքից ազատուի:

ՄՈՒՍԱ քնի միջից.

Էդուց, էդուց իմ սիրելի թագուհի, էդուց Ղարսայ սա-
րերումը կը տեսնես ինձ: (Ասում եւ վեր է թռչում):

ԱՂԱՍԻ մօտ գալով եւ գրկելով.

Մուսայ, դու որ սրտումդ էգպիսի հոգսեր ունէիր, ինչե՞ք ինձ չէիր յայտնում. մի՞թէ քար եմ, որ չգգամ ամէն բանը, ա՞յդ է քո սէրդ և սիրտդ, որ ինձանից բան ես թաղցնում, վեր կաց, ասա՛ ճշմարիտը, ո՞վ է այդ թագուհին, որ քեզ տան-
ջում և մաշում է, մի՞ գուցէ մեր ազատած թագուհին լինի,
բայց նա Ղարս ի՞նչ բան ունի:

ՄՈՒՍԱ կամելով թաղցնել.

Ոչինչ չկայ, ես բան չեմ տես:

ԱՂԱՍԻ.

Սիրելիդ իմ, սօսա՛, մի՛ ամաչիր, դու դեռ փոքր ես, դեռ
այդպիսի բաներ քեզ շատ պէտք է պատահին, ի՞նչ ես կար-
մում և գլուխդ խոնարհացնում, ասա՛ տեսնեմ: Ասում ես
Ղարս է, ահա՛ Ղարսը մի աւուր ճանապարհ, ի՞նչ ես հոգում
դրա համար, այսօր կարող ենք գնալ և կէս գիշեր չեղած,
կը մանենք այն տեղ:

Պիտի չարունակուի:

ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՅ

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Апрѣля, 1863 г.